

ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱԳՈՒՄԸ,
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 1995

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱՐՅԱՆ**

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ Լ. Ա.

**Խ 988 Հայկական հարցը - Եր.: «Համազգային հայ
կրթական և մշակութային միություն, Եր. 1995թ. - 100 էջ.**

Հայկական հարցի առաջացման,
բովանդակության և զարգացման փուլերի
մասին հայոց պատմագիտության մեջ
գոյություն ունեն տարբեր տեսակետներ:

Հեղինակը մոռովի ընթերցողի
ուշադրությանն է ներկայացնում Հայկական
հարցի պատմության համառոտ ուրվագիծը:

ԳՄԴ 63.3(2Հ)52

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Ք Յ ՈՒ Ն

Յուրաքանչյուր ժողովուրդ գոյատեւելու եւ բնականոն կյանքով ապրելու համար պետք է ունենա իր ազատ եւ անկախ Հայրենիքը:

Հայրենիք ժողովրդի պատմական ապրելատարածքն է: Հայրենիքի գաղափարի ակունքները սկիզբ են առնում դարերի խորքում եւ ունեն պատմաէթնիկական բնույթ:

Սակայն ամեն մի ապրելատարածք դեռ Հայրենիք չէ: Հողը Հայրենիք է դառնում դարերի ընթացքում, երբ այն պատվում է ժողովրդի պատմամշակութային, ազգագրական, նարտարապետական հուշարձաններով, նախնիների գերեզմաններով, երբ այն սրբազործվում է թշնամիների դեմ մղած պատերազմներում տարած հաղթանակներով եւ լեզբնդար հերոսների թափված արյունով, երբ ձեւավորվում են ազգային բնավորության գծերը, ազգային նկարագիրը, ավանդույթները, բարքերը, տարազը, լեզվական առանձնահատկությունները, ազային իմքնագիտակցությունը, երբ այդ հողը ժողովրդի պատմական հիշողության մեջ է մտնում ֆոլկլորային, ազատագրական առասպելներով, էպոսով, երգերով, հեփիաթներով ու հարազատանում հոգեպես, երբ ժողովուրդը դառնում է հոգեւոր ամբողջություն, երբ «հող» հասկացությունը վերածվում է «տուն» հասկացության, իսկ «տուն» հասկացությունն էլ «Ծրկիր» ու «Հայրենիք» հասկացությունների եւ մտնում ցեղի արյան ու գեների մեջ որպես նրա գոյատեւման հիմնական պայման:

Հայրենիք կոչվող ապրելատարածքում յուրաքանչյուր ժողովուրդ անպայման պետք է ունենա ազատ, անկախ պետականություն, որովհետեւ միայն նա է ի վիճակի ապահովելու ժողովրդի գոյատեւման եւ բազմակողմանի զարգացման հնարավորությունը: Ազատ Հայրենիքն ու անկախ պետականությունը այն հզոր գործոններն են, որոնք ապահովում են ժողովուրդների բնականոն զարգացումը:

Այդ է պատճառը, որ պայքարը Հայրենիքի ու անկախ պետականության համար վերածվում է գոյատևման, կենաց ու մահվան կռվի:

Պատմության կողմից չփայփայված ժողովուրդներն ազատագրական պայքարի դժվարին նամակարհի են անցնում, մեծամեծ գոհեր են տալիս ազատ ու անկախ Հայրենիք ունենալու համար:

Այդ պայքարի նամակարհին ամեն մի ժողովուրդ անհրաժեշտորեն մշակում է իր ազգային գաղափարախոսությունը, որի հիմքում ընկած է Հայրենիքի, անկախ պետականության և ժողովրդի գոյատևման ու ազատ զարգացման գաղափարը: Ազգային գաղափարախոսությունը ազգի ողնաշարն է, ազգի ոգին:

Հայ ժողովուրդը 1375 թվականին Կիլիկիայի թագավորության անկումով կորցրեց անկախ պետականությունը, որից հետո շուրջ 600 տարի հերոսաբար մահառեց Հայրենիքը ազատագրելու և անկախ պետականությունը վերականգնելու համար:

Հայ ժողովրդի՝ Հայրենիքի ազատագրության և անկախ պետականության վերականգնման համար մղած դարավոր պայքարը պատմության մեջ մտել է Հայկական հարց, Հայ դատ և Պահանջատիրություն անուններով:

Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարը առաջին հերթին պայքար է կորցրած Հայրենիքը ազատագրելու, անկախ պետականությունը վերականգնելու և հայ ժողովրդի գոյատևումը ապահովելու համար:

Կորցրած հայրենիքի ամեն մի մասի ազատագրման համար մղվող պայքարը Հայկական հարցի բաղկացուցիչ մասն է կազմում: Հայոց պատմության արդի փուլում Լեռնային Ղարաբաղի Հայաստանի հետ վերամիավորման համար մղվող ազգային-ազատագրական պայքարը Հայկական հարցի պատմության ամենափառավոր էջերից է:

Սակայն Հայկական հարցը լույս Հայրենիքի ազատագրման պահանջ է, նա մասն ազգային գոյապահպանության, Հայրենիքի գաղափար է, Ազգային Մեծ Գաղափար, առանց որի ժողովուրդները դառնում են անհայրենիք, գրկվում պատմական հիշողությունից, կորցնում Հայրենիքի գաղափարը, վերածվում ազգային դեմք ու ոգի չունեցող ամբոխի և ցրվում աշխարհով մեկ՝ ղեկավարվելով «որտեղ հաց, այնտեղ կաց» կարգախոսով:

Ահա թե ինչու Հայկական հարցը հայոց ազգային գաղափարախոսության հիմքն է ու բովանդակությունը:

Հրաժարվել Հայկական հարցից ու ազգային գաղափարախոսությունից, այդ նշանակում է հայ ժողովրդին դատապարտել ամխուսափելի կործանման:

* *

*

Հայկական հարցի պատմությունը սույն ուսումնասիրության մեջ մեր կողմից բաժանված է չորս հիմնական փուլերի: Աշխատության սահմանափակ ծա-

վալը մեզ հնարավորություն չի տալիս մանրամասն վերլուծելու, պարզաբանելու, բնութագրելու Հայկական հարցի պատմության բոլոր փուլերը, հնթափուլերը և, որ ամենակարևորն է, այդ փուլերի բովանդակությունը կազմող բոլոր անհրաժեշտ իրադարձությունները:

Մենք ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Հայկական հարցի պատմության համառոտ ուրվագիծը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախ պետք է պարզել, թե ի՞նչ է նշանակում Հայկական հարց հասկացությունը, ո՞րն է նրա բովանդակությունը: Առանց այդ հարցի գիտական պատասխանը տալու հնարավոր չէ գրել Հայկական հարցի իրական եւ ամբողջական պատմությունը:

Հենց Հայկական հարցի բովանդակության մասին գոյություն ունեցող ոչ ճիշտ պատկերացումներն են հիմք հանդիսացել այդ հիմնախնդրի շուրջը տարբեր տեսակետներ կյանքի կոչելու համար:

Հայկական հարցի բովանդակության մասին գիտական շրջանառության մեջ եղած տեսակետները բաժանվում են երեք հիմնական խմբի: Հայկական հարցը համաձայն այդ տեսակետների՝

1. Ամբողջ Հայաստանի ազատագրության, հայ պետականության վերականգնման հարցն է:

2. Արեւմտյան Հայաստանի ազատագրության հարցն է:

3. Արեւմտահայության ֆիզիկական գոյության, կյանքի, գույքի ապահովության, Արեւմտյան Հայաստանի բարենորոգումների հարցն է:

Ո՞րն է այդ տեսակետներից ճիշտը:

Յուրաքանչյուր ժողովրդի գոյապահպանման ու ազատ զարգացման համար ամենանպաստավոր պայմանները ստեղծվում են միայն անկախ Հայրենիքում, անկախ պետականության սահմաններում: Առանց Հայրենիքի եւ անկախ պետականության ոչ մի ժողովուրդ չի կարող հարատեւել եւ դատապարտված է ոչնչացման:

Այդ է թելադրում համաշխարհային պատմության անողոք տրամադրությունը:

Օտար նվաճողների լծի տակ գտնված աշխարհի բոլոր ժողովուրդները բարեւր շարունակ պայքար են մղել մի սուրբ նպատակի՝ Հայրենիքի

ազատագրության, անկախ պետականության ստեղծման համար:

Այս թեզը վիճահարույց չէ:

Հետեւաբար, Հայկական հարցը – հայ ժողովրդի ազատագրությամ, իր պատմական Հայրենիքում անկախ ազգային պետականությամ վերականգնմամ խնդիրն է:

Ռազմավարական խնդիր ունենալով իր պատմական Հայրենիքում անկախ հայ պետականության վերականգնումը՝ հայ ժողովուրդը պատմության անբարենպաստ փուլերում հարկադրված է եղել վարել բարեփոխումների իրականացման, ջարդերի ու ավերազոծությունների առաջնություն մարտավարություն:

Տարածքային առումով, առնչված միջազգային իրադրության հետ, Հայկական հարցը տարբեր ժամանակաշրջաններում պարունակել է ամբողջ Հայաստանի կամ էլ միայն Արեւմտյան Հայաստանի անկախության պահանջը:

Դրանք անկախության պայքարի պատմության փուլերն են եղել:

Ուսումնասիրողների մի մասը անկախության, հայ պետականության վերականգնման համար մղված պայքարի առանձին փուլերի մարտավարական խնդիրները նույնացրել է ռազմավարական խնդրի՝ Հայկական հարցի՝ հայոց անկախ պետականության վերականգնման խնդրի հետ:

Ազգային-ազատագրական պայքարը իր մարտավարական խնդիրներով չի կարելի նույնացնել ռազմավարական խնդրի՝ Հայկական հարցի լուծման հետ:

Պատմագիտական աշխատություններում տիրող խառնաշփոթը այդ սխալի արդյունքն է:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄԸ

Հայկական հարցի ծագման մասին եւս գոյություն ունի երեք հիմնական տեսակետ:

Համաձայն այդ տեսակետների Հայկական հարցը՝

1. Հին է այնքան, որքան հայ ժողովուրդը:

2. Ծագել է հայ պետականության անկումից հետո:

3. Առաջացել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո առաջին անգամ իր արտահայտությունը գտնելով Սան-Ստեֆանոյի եւ Բեռլինի կոնգրեսի պայմանագրերում:

Այժմ, երբ մենք ծանոթ ենք Հայկական հարցի բովանդակությանը, մեզ համար դժվար չէ որոշել, թե երբ է առաջացել Հայկական հարցը:

Հայ ժողովուրդը դարեր շարունակ ունեցել է ընդարձակ Հայրենիք եւ հզոր պետություն: Հայաստանը Տիգրան Մեծի ժամանակ եղել է աշխարհակալ տերություն: Հայոց Հայրենիքի տարածքը կազմել է ընդ 300 հազար քառակուսի կիլոմետր: Հայ պետականությունը երկար ժամանակ Առաջավոր Ասիայի հզոր գործոններից մեկն էր:

Հայկական պետականությունը փոքր ընդհատումներով գոյատևել է մինչև 1375 թվականը: 1236թ. մոնղոլների հարվածների տակ ընկնում է Զաքարյանների իշխանությունը, իսկ 1375թ. եգիպտական զորքերը գրավում են Սիսը՝ վերջ դնելով Կիլիկիայի հայկական պետականությանը:

Ահա հենց այդ ժամանակ առաջանում է Հայկական հարցը՝ Հայրենիքի ազատագրման, անկախ պետականության վերականգնման հարցը: Հայ ժողովուրդը ազատագրական պայքարի մեջ է մտնում օտար նվաճողների դեմ իր երկիրն ազատագրելու, Հայկական հարցը լուծելու համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

(Հայկազան հարցի ծագումնից մինչև 17-րդ դարի կեսերը)

Այս փուլում սկսում է ձևավորվել Հայկական հարցը, այն աստիճանաբար դառնում է ժողովրդական գիտակցության արտահայտություն: Ծնունդ է առնում ազատագրական լեզենդը, արարվում է Սասունցի Դավիթ էպոսը: Ազատագրական լեզենդը Հայաստանի անկախության գաղափարի իրականացումը կապում էր Արեւմուտքի օգնության, իսկ Սասունցի Դավիթ էպոսը՝ ժողովրդի զինված պայքարի հետ: Նախագծվում են ազգային-ազատագրական պայքարի զարգացման հետագա ուղիները:

Այս փուլում արվում են ազատագրական պայքարի առաջին քայլերը, հայտնվում են առաջին դրոշակակիրները:

Էջմիածնում կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցու ղեկավարությամբ 1547թ. տեղի է ունենում գաղտնի ժողով, որը քննարկում է Հայաստանի ազատագրության հարցը: Ժողովի որոշմամբ Ստեփանոս Սալմաստեցու ղեկավարությամբ 1549 թվականին պատվիրակություն է ուղարկվում Եվրոպա՝ Հայաստանին օգնելու խնդրանքով: Պատվիրակությունը լինում է վենետիկում, Հռոմում, Գերմանիայում եւ Լեհաստանում, վերադառնում է անարդյունք:

Սեբաստիայում 1582թ. կաթողիկոս Միքայել Սեբաստացու ղեկավարությամբ տեղի է ունենում Հայաստանի ազատագրության հարցին նվիրված երկրորդ գաղափարի ժողովը: Այդ ժողովի որոշմամբ հայերին օգնելու խնդրանք

քով Արզար Թոխատեցու ղեկավարութեամբ մի պատվիրակութիւնն էլ է ուղարկվում Հռոմ, որը եւս որեւէ արդյունքի չի հասնում:

Այս փուլը, ինչպես տեսնում ենք, Հայկական հարցի ծագման եւ ձեւավորման շրջանն էր: Ազատագրական շարժումը հետագա ուղիների դեռեւս վեհերոտ որորնումներ էր կատարում: Չէին լուծված մարտավարութեան եւ ռազմավարութեան հարցերը: Ազատագրական շարժման քաղաքական կողմնորոշման հիմնահարցը եւս գտնվում էր որոնումների շրջանում:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԾԻ ՄՈՒՏԻՐ
ԱՄԾՎՄՏՅԱՆ ԵՎՊՐՊԱ ԵՎ ՌՈՒՍԼԱՍԱՆ
(17-րդ դարի կեսերից մինչև Սան-Մահժան և Բեռլինի
կանգրես)**

Հայկական հարցի այս փուլի համար հատկանշական է ազատագրական պայքարի զարթոնքը եւ վերելքը:

Ազատագրական շարժումը մեծ թափ է ընդունում ինչպես արեւմուտյան, այնպես էլ արեւելյան Հայաստանում: Հայոց ազատագրական շարժումը առաջ է քաշում պրոֆեսիոնալ գործիչների: Ազատագրական, քաղաքական միտքը որակական նոր մակարդակի է հասնում: Հանդես են գալիս գործիչներ, որոնք իրենց ազգանվեր գործերով իրավունք են նվաճում հավերժ տեղ գրավելու հայոց պատմության էջերում: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ունենալով անհաջողություններ ու հուսախաբություններ, այնուամենայնիվ, հայոց մեծերը հետեւողականորեն պայքարում էին Հայոց հարցը լուծելու՝ հայկական պետականությունը վերականգնելու համար: Մշակվում էր ազատագրական պայքարի գաղափարախոսությունը:

Արեւմտյան Հայաստան: 1682 թվականին սկիզբ է առնում եւ ծավալվում ազատագրական շարժումը Արեւմտյան Հայաստանում: Շարժման դրոշակակիրներն էին՝ Խաչատուր Գաղատացին, Մահտեսի Մուրադը, Խոջա Առաքելը, Հովհաննես Թուրունչին, Եղիազար Այնթապցին եւ ուրիշներ: Արեւմտահայ ազատագրական պայքարի առաջին դրոշակակիրները փորձում էին Հռոմի պապի եւ Լյուդովիկոս 14-ի օգնությամբ ազատագրել Արեւմտյան Հայաստանը: Այդ նպատակը իրականացնելու համար

գրվեցին նամակներ եւ ուղարկվեցին պատվիրակություններ: Հայաստանի ազատագրութեան այդ փորձերն ավարտվեցին անհաջողութեամբ:

Արեւելյան Հայաստան: Էջմիածնի 1677թ. ժողովով սկիզբ է առնում ազատագրական շարժումը Արեւելյան Հայաստանում: Շարժման դրոշակակիրներն էին՝ Մելիք-Խորաշեյր, Հակոբ Զուղայեցին, Կոստան բեյը, Աղաջանը եւ ուրիշներ: Մասնավորապէս է ակտիվ գործունեութիւն: Հիմնական նպատակը մնում էր նույնը՝ Եվրոպայի օժանդակութեամբ ազատագրել Արեւելյան Հայաստանը: 1680թ. մահանում է Հակոբ Զուղայեցին, որով եւ ընդհատվում է արդեն ութ ամիս Պոլսում գտնվող հայոց պատվիրակութեան գործունեութիւնը:

Հակոբ Զուղայեցու մահից հետո Էջմիածնի ժողովի առաջ քաշած խնդիրների կատարումը իր վրա է վերցնում Խորաշեյր Օրին:

Չափազանց մեծ է Օրու դերը հայոց ազատագրական պայքարը որակական նոր մակարդակի բարձրացնելու, նրա գաղափարախոսութիւնը մշակելու գործում:

1699թ. Անգեղակոթի ժողովի լիազորութիւններն ստացած Օրին լայնամասշտաբ գործունեութիւն է ծավալում Եվրոպական պետութիւնների եւ Ռուսաստանի օգնութեամբ Արեւելյան Հայաստանի ազատագրումը կազմակերպելու համար: Սակայն Եվրոպական տերութիւնները տարբեր շարժառիթներով հրաժարվում են մասնակցել Հայաստանի ազատագրման Օրու ծրագրի իրականացման գործին:

Արեւմուտքից հուլիսը կտրած՝ Օրին 1701թ. մեկնում է Մոսկվա, որտեղ ռուսական կառավարութեանն է ներկայացնում Արեւելյան Հայաստանի ազատագրութեան նոր ծրագիր: Այս ծրագրով հայ ազատագրական շարժումը ընդունում էր ռուսական կողմնորոշում: Թե՛ Եվրոպական պետութիւններին, թե՛ Ռուսաստանի կառավարութեանը ներկայացրած Օրու Հայաստանի ազատագրութեան ծրագրերը խոշոր ներդրում են հայ ազատագրական շարժման պատմութեան մեջ: Օրին այդ փաստաթղթերում մշակում է որոշ սկզբունքային դրույթներ, որոնք կազմում են ազատագրական պայքարի գաղափարախոսութեան առանցքը:

Օրու ազատագրական ծրագրի հիմքում դրված են հետեւյալ դրույթները.

ա. Հայաստանը պետք է ազատագրվի սեփական զինված ուժերի միջոցով:

բ. Հայոց ազատագրական պայքարը պետք է ունենա ռուսական կողմնորոշում:

գ. Առաջ է քաշում ազատագրական պայքարում դաշնակիցներ ունենալու հարցը՝ առաջարկելով դաշինքի մեջ մտնել վրացիներին հետ:

Օրու մշակած հիմնախնդիրները դառնում են հետագա ազատագրական պայքարի ուղենիշ: 1711թ. Օրին հանկարծամահ է լինում, որից հետո ազատագրական շարժումը որոշ վայրէջք է ապրում:

Սակայն Հայկական հարցի դիվանագիտական, քաղաքական զարգացումը, բնականաբար, պետք է հասցնեի նաև ժողովրդի զանգվածային մասնակցությանը այդ կենսական խնդրի լուծմանը: Պետք է օրակարգի մեջ մտնեի զենքի գաղափարը:

1722 թվականին Ղարաբաղի եւ Սյունիքի բնակչությունն ապստամբում է եւ իշխանությունը վերցնում իր ձեռքը: Շուրջ ութ տարի Հայաստանի այդ պատմական շրջանների հերոսական ժողովուրդը զենքը ձեռքին կռվում էր թշնամիների դեմ: Ոչ մի տեղից օգնություն չստանալով՝ Արցախի եւ Սյունիքի իշխանությունները անհավասար կռվում պարտվեցին:

Ժողովուրդը աստիճանաբար սկսում էր հասկանալ, որ դիվանագիտական ճանապարհով, միայն դրսի օգնությամբ պետականությունը վերականգնել հնարավոր չի լինելու:

Ամբողջ Հայաստանում միասնական

պետականություն ստեղծելու համար մղված պայքարը

Օրուց հետո ազատագրական շարժումը ժամանակավորապես վայրէջք է ապրում: Սակայն շատ շուտով տեղի է ունենում Հայկական հարցի լուծման համար մղած պայքարի վերելք: Այս շրջանում պատմական հրապարակ ելած հայ քաղաքական գործիչները հանդես են գալիս ամբողջ Հայաստանի ազատագրության, մեկ միասնական համահայկական պետություն ստեղծելու ծրագրերով: Միասնական համահայկական պետության ստեղծման ծրագրերով հանդես են գալիս Հովսեփ Էմինը, Ծահաժիր Ծահաժիրյանը, Մովսես Սառաֆյանը, Հովսեփ Արղունյանը եւ ուրիշներ: Ամբողջ Հայաստանի անկախության ծրագրերով հանդես էին գալիս ինչպես Հայաստանի բոլոր շրջանների, այնպես էլ գաղթօջախների ներկայացուցիչները: Ամբողջ Հայաստանի անկախության, միասնական պետության ստեղծման պահանջը հայ ազատագրական շարժման զարգացման օրինաչափ արդյունքն էր:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում Արեւելյան Հայաստանը նվաճվեց Ռուսաստանի կողմից: Հայերը այս պատերազմում աջակցեցին ռուսական զորքի հաղթանակին, որովհետեւ ռուսական տիրապետության տակ արեւմտահայությունը ստանում էր ֆիզիկական գոյատեւման, ազգային համախմբման եւ զարգացման բարենպաստ հնարավորություններ:

«Ջարյաց փոքրագույնի» կոմցեպցիան

Ինչպես արդեն ասել ենք, յուրաքանչյուր ժողովրդի գոյատևման միակ ընդունելի, բարձրագույն ձևը ազատ, անկախ պետականությունն է։ Բայց պատմությունը ոչ բոլոր ժամանակներում է բարեհաճ լինում հատկապես փոքր ժողովուրդների նկատմամբ։

Շատ ժողովուրդներ զրկված անկախ պետականություն ստեղծելու հնարավորությունից՝ պատմության ելեկէջներում հարկադրված են եղել, որպես ժամանակավոր հանգրվաններ, զնայ կոմպրոմիսային տարբերակների։

Գտնվելով Թուրքիայի, Պարսկաստանի եւ Ռուսաստանի նվաճողական քաղաքականության խաչաձեւման կենտրոնում, հայ ժողովուրդը եւ նրա ազատագրական պայքարի ղեկավարները, պատմության տվյալ փուլում զրկված լինելով ազգային պետականություն ստեղծելու հնարավորությունից, դիմեցին հիմնահարցի լուծման մի ծրագրի կենսագործման, որը պատմության մեջ մտել է «Ջարյաց փոքրագույնը» անունով։ Այս ծրագրի էությունը հետեւյալն է. եթե արտաքին եւ ներքին անբարենպաստ պայմանների պատճառով պատմության տվյալ փուլում հնարավոր չէ հասնել անկախ հայկական պետականության ստեղծմանը, ապա պետք է վերահիշյալ երեք պետությունների տիրապետության տակ լինելու հնարավորությունից ընտրել Ռուսաստանը, որպես Ջարիքների փոքրագույնը։ Թուրքիայում դրված էր հայության ֆիզիկական ոչնչացման հարցը, Պարսկաստանում հայերը գոյատևման, ազգային համախմբման եւ զարգացման բարենպաստ պայմաններ եւ հնարավորություններ չուներին։

Այսպիսով, ամբողջ Հայաստանի անկախ պետականություն ստեղծումը թողնելով որպես ռազմավարական նպատակ, հայ ազատամարտի ղեկավարները, ամբողջ հայ ժողովուրդը գրեթե միակամորեն ընդունեցին ռուսական տիրապետությունը, որովհետեւ դրա մեջ էր հայ ժողովրդի փրկության, գոյատևման միակ ելքը։ Ընդ որում, այդ պատմական վճիռը կայացնելիս նկատի էր առնվում այն հանգամանքը, որ ցարական Ռուսաստանը գաղութային կայսրություն է իր բոլոր բացասական հետեւյալներով։

Սվ քանի որ Ռուսաստանի կազմում արեւելահայությունը գերծ էր ֆիզիկական ոչնչացման վտանգից եւ ազգային կոնսոլիդացիայի համար բարենպաստ պայմաններ էր ձեռք բերել, հայ ազատագրական շարժման ղեկավարները իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրին Արեւմտյան Հայաստանի ազատագրության հարցի վրա, որովհետեւ այնտեղ արեւմտահայությունը ծրագրավորված կերպով ոչնչացվում էր, երկիրը աշաթափվում։ Արեւմտյան Հայաստանի ազատագրումը դարձավ հայ

Ժողովրդի պայքարի առաջնահերթ խնդիրը Արեւմտյան Հայաստանի ազատագրման ծրագրերի իրականացումը հայ ազատագրական մտքի ղեկավարները կապում էին Ռուսաստանի հետ:

1862 թվականին տեղի է ունենում Զեյթունի զինված ապստամբությունը Զեյթունցիները հերոսաբար պայքարում են իրենց իրավունքների համար: Սակայն ուժերն անհավասար էին, զեյթունցիները պարտվում են: Զեյթունի ապստամբությունը խոչոր նշանակություն ունեցավ ազատագրական պայքարի հետագա ընթացքի վրա: Հասունանում էր զինված պայքարի գաղափարը: Զգացվում էր զինված պայքարի փուլի մոտալուտ լինելը:

ԵՐՐՈՐԻ ՓՈՒԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

(Սան-Ստեֆանո - Հայաստանի առաջին հանրազեկության անկումը)

1. 1877-1878 թթ. ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմով Հայկական հարցը միջազգայնացվեց, մտավ միջազգային հարաբերությունների խաղացանկի մեջ: Սան-Ստեֆանոյում եւ Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցը առաջին անգամ մտավ միջազգային պայմանագրերի մեջ: Հայկական հարցը միջազգային հարաբերությունների մեջ է մտնում որպես Արեւմտյան Հայաստանի հարց, որը եւ պատմաբանների մի մասին հիմք է տվել նրա բովանդակությունը սահմանափակելու միայն Արեւմտյան Հայաստանով:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի առնչությամբ պետք է ծանրանալ երկու կարեւոր խնդիրների վրա, որոնք հնարավորություն են տալիս ավելի բազմակողմանի ուսումնասիրել քննարկվող բազմաձալք հիմնահարցը:

Առաջին. Հայկական հարցը Արեւելյան հարցի բաղկացուցիչ մասն է:

Արեւելյան հարցը - Օսմանյան կայսրության թուլացման, թուրքերի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազգային անկախության համար մղված պայքարի եւ մեծ տերությունների մրցակցության ուժեղացումն է հիվանդ մարդու՝ թուրքիայի ժառանգությանը տիրելու համար: Եվ այդ առումով, բնականաբար, Հայկական հարցը Արեւելյան հարցի բաղկացուցիչ մասն էր:

Երկրորդ. Հայկական հարցը, լինելով Արեւելյան հարցի բաղկացուցիչ մասը, սերտորեն առնչվում էր մեծ տերությունների նվաճողական շահե-

րի, նրանց մրցակցության եւ այլ բազմաթիվ հիմնախնդիրների հետ, որոնք դժվարացնում էին պրոբլեմի լուծումը:

Հայկական հարցը լուծելու համար հայ ազատամարտի ղեկավարները պետք է կատարեին հետեւյալ խնդիրները. ա) ժողովրդին պատրաստել ընդհանուր զինված ապստամբության, բ) որոշել զինված ապստամբության հարմար պահը, գ) մշակել այն գործնական մեխանիզմը, որը թույլ էր տալու անհրաժեշտ պահին որպես աջակից ունենալ ռուսական զորքերին:

Սրանք սկզբունքային հարցադրումներ են, որոնք առաջ էր քաշում ազատագրական պայքարի տրամաբանությունը Հայկական հարցի լուծման երրորդ փուլում:

Իսկ ի՞նչ փոփոխություններ էին մտել Հայկական հարցի երրորդ փուլում հայոց ազատամարտի տակտիկայի եւ ստրատեգիայի մեջ, որոնք անհրաժեշտ էին դարձրել վերը նշված խնդիրների կատարումը:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական զորքերը փայլուն հաղթանակի հասան: Ռուսական բանակի հաղթանակներին աջակցեցին հայ կամավորները, ամբողջ հայ ժողովուրդը: Արեւմտահայությունը ռուսական բանակին ընդունեց որպես ազատարարների: Ռուսական բանակի կազմում կռվում էին հայ զեներալներ, սպաներ եւ բազմաթիվ զինվորներ:

Պատերազմի արդյունքներն ամփոփվում են Սան-Ստեֆանոյի պայմանագրում:

Հայկական հարցը, որպես միջազգային դիվանագիտության հարց, առաջին անգամ իր արտահայտությունն է գտել Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածում, հետեւյալ ձեւակերպմամբ. «Նկատի ունենալով, որ Հայաստանում գրաված, բայց Թուրքիային վերադարձվելիք վայրերից ռուսական զորքերի հեռանալը կարող է կռիվների ու բարդությունների տեղիք տալ եւ բացասաբար անդրադառնալ երկու պետությունների բարյացակամ հարաբերությունների վրա, Բարձրագույն Դուռը պարտավորվում է Հայկական մարզերում, առանց ուշացման, զործադրել տեղական պահանջներից բխող բարեփոխություններ ու ռեֆորմներ եւ պաշտպանել հայերի ապահովությունը քրդերից ու չերքեզներից»:

Համաձայն պայմանագրի 25-րդ հոդվածի, ռուսական զորքերը գրավված վայրերից պետք է դուրս բերվեին 8 ամսվա ընթացքում, Հայկական մարզերում Թուրքական կառավարության կողմից անհրաժեշտ բարենորոգումներ կատարելուց հետո:

Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանին մնում էին Կարսը, Բաթումը, Բայազետը, Արդահանը, Օլթին, Արդանուշը, Ալաշկերտը,

կազմվանը եւ Խամուրը: Սան-Ստեֆանոն ռուսական զենքի եւ զիվանագիտության փայլուն հաղթանակն էր:

Սան-Ստեֆանոն, սակայն, լուծելով բալկանյան ժողովուրդների ազատագրության հարցը, չլուծեց Հայկական հարցը: Ռուսաստանի ծրագրերում Հայկական հարցի լուծումը չէր մտնում:

Հայերին մնում էր բավարարվել նրանով, որ 18-րդ հոդվածով Հայաբնակ մարզերում արեւմտահայությունն ստանում էր գոյատեւման ու ազատ զարգացման հնարավորություն, որը ամուր ցատկահեծարան էր ստեղծում Հայկական հարցը լուծելու ճանապարհին: Զափազանց կարեւոր էր նաեւ այն, որ Ռուսաստանին անցած Հայկական տարածքներում հայ ժողովուրդը ստանալու էր ազգագրին կոնսոլիդացման եւ զարգացման բարենպաստ հնարավորություններ, որը իր վճռական նշանակությունը կունենար Հայկական հարցի լուծման համար մղվելիք հետագա պայքարում:

Սակայն Եվրոպական խոշոր տերությունները թույլ չտվեցին, որպեսզի Ռուսաստանը վայելի պատերազմում տարած հաղթանակի պտուղները:

1878թ. հունիսի 1-ին հրավիրվեց Բեռլինի կոնգրեսը, որը վերանայեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի պայմանները: Ռուսաստանը զրկվում է Թուրքիայից գրաված տարածքների մի մասից, Ռուսաստանին մնում են Կարսը, Արդահանը եւ Բաթումը:

Հայկական պատվիրակությանը, որը ղեկավարում էր Մկրտիչ Խրիմյանը, թույլ չարվեց մասնակցելու Բեռլինի կոնգրեսին: Պատվիրակության ներկայացրած Հայաստանի ինքնավարության ծրագիրը չքննարկվեց:

Բեռլինի կոնգրեսին Հայաստանի պատվիրակության ներկայացրած ծրագրի համաձայն Վսեկահայաստանը պարունակում է իր մեջ էրզրումի եւ Վանի վիլայեթները, այդ վիլայեթների մեջ մտնում են եւ Մուշի, Բաղեշի սանջակները, Դիարբեքրի վիլայեթի, այսինքն՝ Խարբեքրի սանջակի արեւելյան մասը, Արգանա սանջակը եւ Սղերտի սանջակի հյուսիսային մասը, որոնք կազմում են Մեծ Հայաստանի տաճկական մասը, եւ բացի դրանից առեւտրական հարաբերությունները Թեթեւաշենիւլ համար՝ Ռիգե նավահանգիստը, որ Տրապիզոնի եւ Բաթումի մեջտեղն է:

Այս ծրագրից դուրս էին մնում Արեւելյան Հայաստանը եւ Կիլիկիան, այսինքն՝ Բեռլինի կոնգրեսին Հայկական հարցը ամբողջությամբ չէր ներկայացված:

Մ. Մամուրյանը «Արեւելյան մամուլում» 1881թ. քննադատում էր պատրիարքարանի Հայկական հարցի ծրագիրը՝ գրելով. «Հարկ էր ամբողջ Հայաստանի եւ Հայկական խնդիրը ներկայացնել եւ ոչ թե միայն մի քանի գավառներունը... Պետք էր որ Կիլիկիա եւ Ռուսիոյ Հայաստանն,

Արարատը, խնդրեն դուրս չձգվեն, պետք էր որ խնդիրն ամբողջ լիներ, եւ եթէ չկատարվեր իսկ, նոյն ամբողջութեամբ ազանդվեր հաջորդ սերունդին»:

Հայ ժողովուրդը լավ էր հասկանում, որ Հայկական հարցի լուծումը ռազմավարական ամենախոշոր, ամենակենսական հիմնահարցն է, որն առնչված է արտաքին եւ ներքին բազմաթիվ գործոնների հետ եւ պահանջելու է երկարատեւ ժամանակաշրջան, բազմաթիվ սերունդների անձնագոհ պայքար:

Բեռլինի կոնգրեսը Հայկական հարցի մասին ընդունեց հետեւյալ առաջարկը, որը դարձավ ընդունված պայմանագրի 61-րդ հոդվածը. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելաժութներ ու բարենորոգումներ՝ եւ ապահովել հայերի անվտանգությունը չերթնցնելու ու քղերից: Բարձր Դուռը տերութիւններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերութիւնները կհսկեն դրանց կիրառմանը»:

Բեռլինի կոնգրեսը եւս չիրականացրեց Հայ ժողովրդի հույսերը: Հայկական հարցը չլուծվեց: Դեռ ավելին, եթէ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 35-րդ հոդվածով առաջին անգամ միջազգային հարաբերութիւնների մեջ պաշտոնապէս ճանաչվում էր Հայաստանը, որպէս նվաճված երկիր, ապա 61-րդ հոդվածով այն վերածվում է «հայաբնակ մարզերի»: Ընդ որում, չենց այս հոդվածներում էլ որոշակիորեն ընդգծվում է Ռուսաստանի եւ եվրոպական խոշոր տերութիւնների Հայկական հարցի նկատմամբ ունեցած վերաբերմունքի տարբերութիւնը: Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանը, որպէս Թուրքիայի կողմից նվաճված երկրի, իսկ եվրոպական տերութիւնները՝ ոչ: Համաձայն պայմանագրի, ռուսական զորքերը դուրս էին գալիս զրաւած այն տարածքներից, որոնք կոնգրեսի որոշմամբ անցնում էին Թուրքիային: Բարեփոխումները Արեւմտյան Հայաստանում պետք է կատարեր Թուրքական կառավարութիւնը: Բոլորն էլ հասկանում էին, որ պայմանագրի բարեփոխումների մասին պահանջը չի կատարվելու:

Հայ ժողովուրդը հուսախաբված էր: Բեռլինի կոնգրեսը չըջադարձային նշանակութիւն ունեցած հայոց ազատագրական պայքարի պատմութեան մեջ:

Դիվանագիտութեան, մեծ տերութիւններին խնդրելու միջոցով Հայկական հարցը լուծելու քաղաքականութիւնն իրեն չարդարացրեց: Անհրաժեշտ էր փոխել Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի մարտավարութիւնը:

Ահա այսպիսին էին այն դասերը, որոնք քաղեց հայ ժողովուրդը Բեռլինի կոնգրեսից:

Հայ ազատագրական միտքը, ելնելով Բեռլինի կոնգրեսի պատմական դասերից, հանգեց Հայկական հարցը զենքով, զինված ուժով լուծելու գաղափարին:

Վերադառնալով Բեռլինից, Մկրտիչ Խրիմյանը զենքի էր կոչում հայ ժողովրդին: Մկրտիչ Խրիմյանն առաջ է քաշում «Երկաթե շերեփի»՝ զենքով Հայկական հարցը լուծելու գաղափարը: «Հոն, ասում է նա, ուր զենքն է խոսողը, ուր սուրերը կշողշողան, հոն ի՛նչ գործ ունին խնդիրք եւ աղերսաթուղթեր»: Խրիմյանը ժողովրդին կոչ է անում. «Ձեռք առեք եւ դարձյալ զենք: Ժողովուրդ, ամենից առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին եւ բազուկին ուժ տուր, մարդն ինքն իրմեն պետք է աշխատի, որ փրկվի»:

Հասարակական-քաղաքական ականավոր գործիչ Գրիգոր Արծրունին «Մշակ» թերթում գրում էր. «Մեզ վրա հույս դնենք եւ ոչ թե Բեռլինի: Այն ազգը, որ ինքն իր վրա հույս չունի, նա ապագա չունի»: Նույն տեսակետն էր պաշտպանում նաեւ Գարեգին Սրվանձադյանը՝ գրելով. «Հայաստանի մեջ է բուն Հայկական խնդիրը, մենք Պերլինի մեջ կորոնենք զայն»:

Հիասթափված եւ հուսախաբված Արեւմուտքից՝ հայ հասարակական-քաղաքական միտքը հայ պետականության վերականգնման հույսը այժմ կապում էր միայն հայ ժողովրդի զինված պայքարի հետ:

Փոխվեց ազատագրական պայքարի մարտավարությունը, օրակարգի մեջ մտավ զինված ուժով Հայկական հարցը լուծելու գաղափարը: Հայ ազատագրական միտքը արմատական շրջադարձ ապրեց:

Ազատագրական պայքարի նոր մարտավարությունը կյանքի կոչեց նոր խնդիրներ: Անկախության համար մղված պայքարի նախորդ փուլերում, երբ տեղի էր ունենում հիմնականում դիվանագիտական, քարոզչական աշխատանք, մենք չարժման դեկավարի դերում տեսնում ենք առեւտրականների ու հոգեւորականների, որոնք հանդես էին գալիս Հայկական հարցի լուծման սեփական կամ առանձին խմբերի կողմից կազմված ծրագրերով:

Ազատամարտի նոր փուլում, զինված պայքարի փուլում, անկասկած է, որ պետք է հանդես գային նոր համազգային կազմակերպություններ՝ նոր ազգային ծրագրերով, նոր մակարդակի լիդերներով:

Այդ գործընթացը տեղի էր ունենում աստիճանաբար: Սկզբնական շրջանում սկսեցին հանդես գալ ազատագրական խմբակներ, իսկ ավելի ուշ՝ ազգային կուսակցություններ:

Ազատագրական խմբակները ստեղծվում էին ինչպես Արեւելյան, այն-

պես էլ Արեւմտյան Հայաստանում, Ռուսաստանի եւ Արեւմտյան երկրներին հայկական գաղթօջախներում:

Առաջին ազատագրական խմբակը «Բարենպաստակ ընկերութիւն» անունով ստեղծվել է Ալեքսանդրապոլում դեռ 1869 թվականին: Այնուհետեւ ստեղծվում են հետեւյալ խմբակներն ու կազմակերպութիւնները՝ Միութիւն ի փրկութիւն (Վան, 1872թ.), Հայրենիքի սիրոյ գրասենյակ (Ղարափրիսա, 1874թ.), Սեւ խաչ (Վան, 1878թ.), Պաշտպան Հայրենյաց (Կարին, 1881թ.), Հայրենասերների միութիւն (Մոսկվա, 1882թ.), Թիֆլիսի Հայրենասիրական խմբակ (1882թ.), Հայասեր-ազգասեր (Երեւան, 1883թ.): Սրանցով, իհարկե, չի սահմանափակվում ազատագրական խմբակների ու կազմակերպութիւնների թվաքանակը: Մենք հիշատակեցինք միայն ամենակարեւորները: Այս խմբակները պայքարում էին հայ ժողովրդի ազատագրութեան համար:

Սակայն փորձը ցույց տվեց, որ այդ կազմակերպութիւններն ի վիճակի չէին ստանձնելու եւ ղեկավարելու գինված պայքարի փուլը մտած հայ ժողովրդի ազատամարտը: Ազատագրական խմբակները հեռանում են պատմական ասպարեզից:

Հայ ժողովրդի պատմութեան այդ բախտորոշ պահին ծնունդ են առնում հայ ազգային կուսակցութիւնները, որոնց բախտ էր վիճակված ղեկավարելու Հայկական հարցի լուծման համար մղված ծանր ու անողորմ պայքարը:

1885թ. ստեղծվում է Արմենական կուսակցութիւնը, 1887թ. Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցութիւնը, իսկ 1890թ. Հ.Հ. Դաշնակցութիւնը:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ ազգային կուսակցութիւններին ծնեց ազգային-ազատագրական պայքարը: Այդ կուսակցութիւնները կյանքի էին կոչվել Հայկական հարցը լուծելու համար:

Արմենակամ կուսակցութիւն - ստեղծվել է Վանում 1885 թվականին, Մկրտիչ Ավետիսյանի գլխավորութեամբ: Դա հայ առաջին քաղաքական կուսակցութիւնն էր:

Արմենական կուսակցութեան նպատակն էր. «Հեղափոխութեամբ Թուրքիայի հայ ժողովրդի համար իրավունք ձեռք բերել ինքզինք ազատորեն կառավարելու»: Ինչպես տեսնում ենք, Արմենական կուսակցութիւնն իր խնդիրն էր համարում հեղափոխութեան, ընդհանուր շարժման միջոցով բացառապէս Արեւմտյան Հայաստանի ազատագրումը: Այդ կուսակցութիւնն իր բնույթով ազգային-ազատագրական էր:

Հեղափոխության համար Արմենականներն անհրաժեշտ էին համարում. ա) ժողովրդին զինակրթության եւ կարգապահության վարժեցնել, զենք եւ դրամ հայթայթել, զինվորական խմբեր պատրաստել, բ) ժողովրդին հեղափոխական գրականության մը դաստիարակել, արթնացնել, գ) ժողովրդին շնորհաշունչ շարժման պատրաստել, երբ մանավանդ արտաքին հանգամանքներն ալ - օտար պետությունների եւ չլրջակա ցեղերի տրամադրությունները - մեզ նպաստավոր համարուին»:

Մինչեւ հեղափոխության սկսելը, արմենականները մերժում էին ամեն մի մասնակի շարժում: Անժամանակ ոգեւորությունը նկատվում էր վնասակար, որովհետեւ մի կողմից վատնում էր հեղափոխական ուժերը, իսկ մյուս կողմից՝ հոռետեսություն առաջացնում ժողովրդի մեջ:

Օսմանյան կայսրությունը բազմազգ էր, սակայն Արմենական կուսակցությունը հենց սկզբից գրանցեց իր ծրագրում այն տեսակետը, որ Վերջիններս կամփոփե հայ ազգի այլ եւ այլ մասերի մեջ, առանց դավանանքի խտրության, իր ուժերը չի ցրուեր դրացի ազգերի մեջ հեղափոխական շարժումներ առաջ բերելու, նկատելով, որ հայ ազգի եւ մյուս ցեղերի մեջ զարգացման, աշխարհայեցողության, պահանջների եւ զարգացման մեծ տարբերություններ կան, որով հայ ազգի հեղափոխական շարժումը կարող է դանդաղել եւ կնճռոտել:

Ահա այսպիսի ծրագրային դրույթներով կյանք մտած հայ առաջին ազգային քաղաքական կուսակցությունը: Արմենական կուսակցությունը, սակայն, չկարողացավ լայն ժողովրդական զանգվածներ տանել իր հետեւից, ստանձնել ազատագրական շարժման ղեկավարությունը:

Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը - ստեղծվել է 1887թ. ժնեւում: Հիմնադիրները նարոդնիկներ էին՝ Ավետիս Նազարբեկ, Մարո Նազարբեկ, Ռուբեն խանազատյան, Գաբրիել Կաֆյան եւ ուրիշներ:

Հնչակը հայ իրականության առաջին ազգային սոցիալ-դեմոկրատական մարքսիստական կուսակցությունն է: Հնչակյան կուսակցությունը պաշտոնապես սոցիալ-դեմոկրատական կոչվեց 1909 թվականին:

Հնչակյան կուսակցության ծրագիրը ուներ հեռավոր եւ մոտակա նւթատակներ:

Հեռավոր նպատակ՝ «սոցիալիստական հասարակական կազմակերպության իրագործումը հայության մեջ»:

Մոտակա նպատակ՝ «Էկոնոմիկ միապետական կարգերը տապալելու համար եւ նրանց փոխարինելու հանրային ուսակազարական սահմանադրական կարգերով»:

Համաձայն Հնչակյան կուսակցության ծրագրի, Հայկական հարցի լուծումը կազմում էր մոտակա ծրագրի առանցքը: Հնչակյան կուսակցութ-

յունը մոտակա ծրագրով նպատակ էր դնում պայքարել հայկական անկախ միացյալ պետություն ստեղծելու համար, որի մեջ պետք է մտնեին Թուրքահայաստանը, Ռուսահայաստանը եւ Պարսկահայաստանը:

Սակայն մինչեւ համահայկական միասնական պետության ստեղծումը, Հնչակյան կուսակցությունն անհրաժեշտ էր համարում առաջին հերթին ազատագրել Արեւմտյան Հայաստանը թուրքական լծից:

Հնչակյան կուսակցության ծրագրում ասվում է այդ մասին.

«Նկատելով, որ հայության ամենաստվար մեծամասնությունը կազմում են թուրքահայերը եւ նրանց բնակավայրը մեր հայրենի հողի ամենամեծ տարածությունն է.

Նկատելով, որ հայության այդ մեծամասնության Դատը, Բեռլինի Դաշնագրության 61-րդ հոդվածի գործությամբ, որպես եւ այլ միջազգային պայմանագրերի գործությամբ, արդեն մտած է միջազգային իրավունքի դրական շրջանը եւ ճանաչված եվրոպական մեծ պետությունների կողմից.

Նկատելով մյուս կողմից, որ թուրք տերության միապետական կարգերը քաղաքական, հասարակական ու տնտեսական անտանելի ճնշման են ենթարկում Հայ ժողովրդին.

Նկատելով, որ ամեն տեսակետից այդ դրությունն անպայման կերպով անհնարին է դարձնում հայ ժողովրդի հասարակական-տնտեսական ու քաղաքական որեւէ առաջդրվածություն, որպես նաեւ մշտական սպառնալիք ու զենք է նրա ազգային ու մարդկային գոյության դեմ...

Այդ բոլոր նկատումների հիման վրա պատմական առաջնակարգ անհրաժեշտություն է -

1) Որ հայ հեղափոխական գործունեությունն այսօր բացառապես ներգիրվի Թուրքահայ ժողովրդային դատի պաշտպանության ու լուծման՝ համաձայն մոտակա նպատակի.

2) Որ, ուրեմն, հեղափոխական գործունեության ասպարեզն է Թուրքահայաստանը.

3) Որ Հայ ժողովրդի ու Հայաստանի ճակատագիրը միանգամից ընդմիշտ պետք է զատվի թուրքական կայսրության ճակատագրից, ըստ որում պատմական պահանջ ու անհրաժեշտություն է ներկայանում - Հայ ազգային անկախությունը, որն էլ այդպիսով կազմում է մոտակա նպատակի մի հիմնական մասն ու առաջին պայմանը:

Արեւմտյան Հայաստանի ազատագրության միակ միջոցը, Հնչակյան կուսակցությունը համարում էր «հեղափոխությունը, այսինքն պետք է բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել ներկա հասարակական կազմակերպությունը թուրքաց Հայաստանում, կռիվ մղելով թուրք տերության դեմ՝ ժողովրդային ընդհանուր ապստամբության միջոցով»:

Ուրեմն, Հնչակյան կուսակցությունը ծրագրում էր Արեւմտյան Հայաստանն ազատագրել հեղափոխության, ընդհանուր ժողովրդական ապստամբության միջոցով:

Հնչակյան կուսակցության ծրագրում առաջ են քաշվում գործունեության հետեւյալ միջոցները.

1) Հնչակյան գաղափարների պրոպագանդա եւ ագիտացիա, հեղափոխական կազմակերպությունների եւ ապստամբական զնդերի ստեղծում:

2) Տեւոթական գործողություն, որը պետք է լինի հեղափոխական կազմակերպության ինքնապաշտպանության միջոց եւ հասարակությանը բռնավորների գործերից պաշտպանելու համար մի զենք:

3) Ասպատակային զնդերի կազմության, իբրեւ մշտական պատրաստի մարտական ուժ: Ընդհանուր ապստամբության միջոցին այդ զնդերը կարող են կատարել առաջավոր զնդերի դեր:

4) Ապստամբական զորազնդերի ստեղծում:

5) Ընդհանուր ապստամբության ժամանակը-Որեւէ պատերազմ՝ մղած այս կամ այն տերության կողմից Թուրքիայի դեմ՝ պետք է համարել հարմար ըստ մոտակա նպատակի իրագործման համար:

Հնչակյան կուսակցությունը անդրադառնում է նաեւ Օսմանյան կայսրության լծի տակ հեծող այլ ժողովուրդների հետ համատեղ պայքարի ճակատ ստեղծելու հարցերին: Կուսակցությունն անհրաժեշտ էր գտնում վաստակել հայ ժողովրդին վիճակակից Հայաստանի այլ բնակիչների՝ քրդերի եւ ասորիների համակրությունն ու աջակցությունը, համերաշխ գործակցություն հաստատել թուրքական լծի տակ հեծող քրիստոնյա ազգերի հեղափոխական մարմինների հետ, եթե հանգամանքները ներեն, միատեղ ապստամբել թուրք կառավարչության դեմ:

Հնչակյան կուսակցության առաջնահերթ խնդիրը, ինչպես ցույց է տալիս կուսակցության ծրագիրը, եղել է Հայկական հարցի լուծումը:

Հ. Հ. Դաշնակցություն - ստեղծվել է 1890 թ. ամռանը Թիֆլիսում: Հիմնադիրներն էին՝ Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը եւ Ստեփան Զորյանը (Ռոստոմ): Դաշնակցության ղեկավարները իրենց հեղափոխական մկրտությունն ստացել էին ռուսական նարոդնիկական շարժման մեջ: Սկզբից Դաշնակցությունը անվանվում էր «Հայ հեղափոխականների դաշնակցություն» եւ նպատակ էր հետապնդում իր շարքերում համախմբել հայ իրականության բոլոր կուսակցությունների, կազմակերպությունների, խմբակների, ընկերությունների, բոլոր դասակարգերի եւ խավերի ներկայացուցիչներին, որոնք պայքարում էին Հայաստանի ազատագրության համար:

1892 թ. Թիֆլիսում տեղի ունեցավ Դաշնակցության առաջին համա-

գումարը կուսակցությունը պաշտոնապես կոչվեց Հայ Հեղափոխական Դաշնակցություն։ Այդ նույն համագումարում ընդունվեց Դաշնակցության առաջին ծրագիրը։ Դաշնակցության ծրագիրը ցույց է տալիս, որ այդ կուսակցությունը պատմական ասպարեզ է մտնում որպես ազատագրական կուսակցություն, որը կյանքի էր կոչվել Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարը ղեկավարելու, Հայկական հարցը լուծելու համար։

Դաշնակցությունը սկսելով իր գործունեությունը՝ չհարեց որեւէ վարդապետության, չփորձեց հայ կյանքի մեջ որեւէ սոցիալական դավանանք մտցնել, այլ պարզ ու որոշակի հայտարարեց, որ իր հիմնական նպատակը Հայկական հարցի լուծումն է։ Նկատի ունենալով արեւմտահայության ծանր դրությունը, Դաշնակցությունն իր գործունեությունը բացառապես նվիրում է Արեւմտյան Հայաստանի ազատագրության գործին։

Դաշնակցության ծրագրի «Նպատակ» բաժնում ասվում է. «Հայ Հեղափոխական Դաշնակցության նպատակն է ապստամբության միջոցով թուրքաց Հայաստանի մեջ ձեռք բերել քաղաքական եւ տնտեսական ազատություն։ Արեւմտահայությունը թուրքական լծից ազատել «հնարավոր է միայն հեղափոխությամբ» ասվում է կուսակցության ծրագրում։

Ծրագրի «Նպատակ» բաժինը ցույց է տալիս, որ՝ ա) Դաշնակցությունն առաջին հերթին խնդիր է դրել ազատել Արեւմտյան Հայաստանը, բ) ազատություն հասկացության տակ Դաշնակցությունը նկատի ունի ինքնավարություն եւ ոչ թե անկախ պետականություն։ Դաշնակցությունը, ինչպես երևում է փորձում էր ղեկավարականության վերականգնումը գնալ աստիճանաբար, փուլ առ փուլ։

Դաշնակցությունն ինչ միջոցներով պետք է հասներ իր նպատակի իրագործմանը։ Ծրագրում այդ մասին ասվում է. «Հ. Հ. Դաշնակցությունը ապստամբության միջոցով իր նպատակին հասնելու համար կը կազմակերպեց հեղափոխական խմբեր, որոնք կառավարության դեմ անընդհատ եւ զորեղ կռվի հետ՝ կռիվ կը մղեն նաեւ այն ընդհանուր պայմաններուն դեմ, որոնցմե նեղված են միեւնույն ժամանակ թե հայ եւ թե օտար տարրերը (ասորիները, եզդիները, քրդերուն մեկ մասը, խաղաղ թուրքերը եւ այլն)։ Այս ուղղությունն, իր ընդհանուր նշանակությունն զատ, կարող է, եթե ոչ միացնել, գեթ չեզոքացնել օտար տարրերու ընդիմադրական ուժերը»։

Հեղափոխական խմբերը, համաձայն ծրագրի, գործադրելու էին հետեւյալ միջոցները.

1. Դաշնակցության գլխավոր սկզբունքների քարոզչությունը։
2. Կազմակերպել մարտական խմբեր։
3. Բոլոր միջոցներով բարձրացնել ժողովրդի հեղափոխական գործն ու ոգին։

4. Ամեն միջոց գործ դնել ժողովուրդը զինելու:
5. Կազմակերպել հեղափոխական կոմիտեներ:
6. Կռիվ մղել եւ ահաբեկել կառավարութեան պաշտոնյաներին, մատնիչներին, դավաճաններին, վախառուներին եւ ամեն տեսակ հարստահարիչներին:
7. Պաշտպանել խաղաղ ժողովրդին, ազգաբնակչութեանը ավազակների հարձակումներից:
8. Ճանապարհներ հաստատել՝ մարդիկ եւ զենք տեղափոխելու համար:
9. Կառավարութեան հիմնարկները ենթարկել ավերումների եւ կողոպուտների:

Հայկական հարցի լուծման նման դրույթներ է առաջ քաշում Դաշնակցութիւնն իր կուսակցական ծրագրում եւ անմիջապէս ձեռնամուկ լինում դրանց կենսագործմանը:

Մինչեւ ծրագրի ընդունումը, Դաշնակցութիւնը հրատարակում է երկու չափազանց կարեւոր թուղցիկ, որոնցով փաստորեն մարտահրավեր է նետում թուրքական կառավարութեանը:

Առաջին թուղցիկը հրատարակվել է 1890 թվականին եւ վերնագրվել՝ «Մանիֆէստ Հ. Յ. Դաշնակցութեան»: Փաստաթղթում ասվում է. «Այսօր հայոց հարցը նոր չրջանի մեջ է մտնում: Դարերից ի վեր ստրուկ թուրքա-Հայաստանը ազատութիւն է պահանջում:

Հայը, որ դեռ երեկ չլինէր ծնած Սփրոպայից օգնութիւն էր աղերսում, այսօր համոզվելով, որ օտարի վրա դրած հուլաւ ցնորք է, վրձնել է իր ձեռքով պաշտպանել իր իրավունքը, իր կայքը, պատիվը, ընտանիքը...

Հայոց հարցի վճռի հետաձգելը այլեւս անկարելի է: Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին, առաջին հարցը, որ պետք է զբաղեցնի ամեն մի լուրջ հայրենասերի այդ բոլոր հեղափոխական ուժերի միութեան եւ դաշնակցութեան հարցն է:

Այդ հեղափոխական գաղափարի դրոշակակիրն է Հայ հեղափոխականների դաշնակցութիւնը, որ սորանով դիմում է բոլոր հայերին եւ հրավիրում է կանգնել մի դրոշակի տակ:

Հայ Հեղափոխականների Դաշնակցութիւնը, թեեւ նոր է հանդես գալիս իրեւ կազմակերպութիւն, բայց նա վաղուց գործող խմբերի միութիւն է: Դաշնակցութիւնը ձգտելու է միացնել բոլոր ուժերը՝ կապելով իր հետ բոլոր կենտրոնները: Նպատակ դնելով թուրքաց Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը՝ Դաշնակցութիւնը մտել է այն կռիվի մեջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դեմ՝ ուխտելով մինչեւ արյան վերջին կաթիլը կռվել հայրենիքի ազատութեան համար»:

Երկրորդ թուղթիկը հրապարակվել է 1891 թվականի մայիսին եւ վերնագրված է՝ «Կռիվը սկսված է...»: Փաստաթղթում առկում է՝

«Կռիվ ազատութեան համար, կռիվ գոյութեան համար:

Մի կողմից դարերով տանջված հայ ժողովուրդը, մյուս կողմից, ոտից զուլս ապականված, քայքայվող թուրք կառավարութիւնը, ահա կռվողները:

Սարսափելի կռիվը աշխարհից հուսահատեցնում է թերահավատներին: Նոքա հարցնում են. «Ինչ կարող է անել հայը, ոչ թնդանոթ ունի, ոչ զորք, ոչ պաշտպան»:

Ավելորդ թերահավատութիւն: Ժողովրդական կռվի ժամանակ՝ թրնդանոթը ժողովրդի զգացմունքն է, զորքը՝ ինքը ժողովուրդը, պաշտպանները՝ ժողովրդի միութիւնը:

Երբ ժողովուրդը միացած է եւ պատրաստ կռվելու ոգեւորված միեւնոյն վեհ զգացմունքով, այլեւս ոչինչ կարժե ոչ թշնամու զորաբանակը, ոչ թնդանոթը, եւ ոչ օտարի պաշտպանութիւնը...

Հայ ժողովուրդը սկսել է մի մեծ, սուրբ կռիվ»:

Հայոց ազատամարտի նոր փուլում Դաշնակցութեան մարտավարութեան հիմնադրույթները ուսումնասիրելու տեսանկյունից կարեւոր նշանակութիւն ունի «Դրոշակի» 1891 թ. համար 2-ի խմբագրական հոդվածը, որում կուսակցութիւնը առաջ է քաշում պայքարի կազմակերպման հետեւյալ սկզբունքային տեսակետները.

«Ամեն մի քաղաքական կուսակցութիւն՝ գաղափարի համար կռիվ սկսելով կարող է հաջողութեան կամ անհաջողութեան հոյս ունենալ միայն այն ժամանակ, երբ կան հետեւյալ երկու անհրաժեշտ պայմանները՝

1) Եթե ժողովուրդը, որի շահերի համար մղվում է կռիվը, հասկանում է այդ կռվի անհրաժեշտ լինելը եւ մասնակցում է այդ կռվին թե ուղղակի եւ թե անուղղակի կերպով՝ գոնե ի դեմս յուր ամենալավ ներկայացուցիչների:

2) Եթե կռվի համար ընտրված են այնպիսի նպատակահարմար ձեւեր եւ միջոցներ, որոնք բոլորովին համապատասխան են ներկա իրականութեան եւ պատմական ընթացքի պահանջած պայմաններին:

Առաջին պայմանը, բարեբախտաբար, մեզանում կա»:

Ընդունելով առաջին պայմանի առկայութիւնը՝ «Դրոշակի» խմբագրութիւնն անցնում է երկրորդ պայմանի քննարկմանը, գրելով.

«Ամենից առաջ պետք է նկատի ունենալ, որ մեր կռիվը՝ ժողովրդի կռիվ է նրա դարավոր բռնակալների դեմ: Իբրեւ ժողովրդական կռիվ, նա չի կարող կանոնավոր զորքերի վարած պատերազմի ձեւ ունե-

նալ, իհարկե եթե մի արտակարգ դեպք չպատահի: Մտախաբություն է երեւակայել թե Տաճկա-Հայաստանում կամ նրա սահմաններում կարելի է պատրաստել ու կազմակերպել մարտնչող զնդեր, նույնիսկ ամբողջ զորք, որ մի օր առաջ կը խաղա վճռական ճակատամարտ տալու, եւ այդպիսով կսկսի եւ կվերջացնի հայրենիքի ազատութեան գործը:

Ոչ, հայ ժողովրդի կռիվը պետք է պարտիզանական կռիվ լինի. մենք մեր այժմյան դրութեան մեջ ուրիշ կերպ կռվել չենք կարող. կանոնավոր պատերազմ, իսկական ճակատամարտեր անհնար են մեզ համար: Այդ է թելադրում մեզ առողջ դատողութիւնը եւ այդ է սովորեցնում մեզ նոյն իսկ ուրիշ ազգերի - Բուլղարների, Իտալացիների, Յոնների պատմական օրինակը: Այդպես պետք է կռվենք եւ մենք գոնե մինչեւ այդ ժամանակ, երբ պարտիզանական կռվի ջոկ-ջոկ ալիքները միախառնվելով կը կազմեն ժողովրդական ապստամբութեան հորդահոս հեղեղը, որ կարբի կտանի իր հետ Հայաստանի երեսից ստրկութեան, աղքատութեան, անարդարութեան դարավոր կնիքը...

Այդ պարտիզանական պատերազմի նախաձեռնողները կլինեն ժողովրդից դուրս եկած մարտնչող մարդիկ, որոնք միայն ձեւ են փնտրում արտահայտելու իրենց հրաշալի զգացմունքները, ոյժերն ու ընդունակութիւնները:

Այդ ձեւը - հրոսակային (հայդուկային, ավազակային) խմբերի կռիվը - կը թելադրեն ժողովրդին եւ կժողովրդականացնեն՝ հեղափոխական իմտելի գեներալի մերկայացուցիչները:

Շատ մեծ դեր են խաղացել հրոսակային խմբերն այս դարում ազատված մանր ազգութիւնների պատմութեան մեջ. այդպիսի մեծ դեր կարող են եւ պետք է խաղան նրանք նաեւ մեզ համար:

Եվ այսպես, որպես թուրքական լծի դեմ ուղղված ազատագրական պայքարի հիմնական ձեւ Դաշնակցութիւնն առաջ է քաշում պարտիզանական պատերազմի՝ հայդուկային կռվի գաղափարը:

Ընդ որում, Դաշնակցությունը գտնում էր, որ երբ հեղափոխական պարտիզանական կռիւի ալիքները ողողեն ամբողջ Արեւմտյան Հայաստանը, երբ նրանք ամվերամորոգելի հեղեղի բանան թուրքական տերութեան խախուտ շինվածքի մեջ, երբ Եվրոպան տեսնի, որ այդ երկրում մերդարած իր դրամագույնը կորչում է, որ այդ կռիվը կարող է եվրոպական գաղտնիքի հրդեհի պատճառ դառնալ, «այն ժամանակ կը գա վճռական ռոպն եւ ամբողջ ժողովուրդը իրրեւ մի մարդ, մի հոգի ոտի կը կանգնի եւ զենքի ու ժով ձեռք կը բերի իր մարդկային իրավունքները, այն իրավունքները, որ այսօր դար անխիղճ կերպով ոտնակոխ են արել տանկներն ու բրդերը»:

Այս երկու ծրագրային թուղցիկները եւ «Դրոշակի» խմբագրականը գուցէ են տալիս, որ Դաշնակցութիւնը՝ ա) կռիւ է հաստատում թուրք

բական կառավարութեանը, բ) մարտավարութեան հիմնական ձեւը համարում է պարտիզանական, հայդուկային կռիւլը, գ) ամբողջ Արեւմտեան Հայաստանը պարտիզանական պարտերազմի մեջ ընդգրկելուց հետո միայն պետք է դիմի ընդհանուր զինված ապստամբութեան:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Բեռլինի կոնգրեսից հետո աստիճանաբար ձեւավորվում է ազատագրական զինված պայքարի տակտիկան, որը իր ամբողջական արտացոլումը գտավ Հնչակ եւ Դաշնակցութուն կուսակցութիւնների ծրագրերում:

Ծավոք, զինված պայքարի այդ դժվարին փուլում հնարավոր չեղավ մշակել կռիւի միասնական տակտիկա եւ ստեղծել շարժման ընդհանուր ղեկավարութիւն:

Ինչեւիցէ, անկախ շարժման ընդհանուր ղեկավարութեան բացակայութենից, Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի այդ փուլը, բացի տարբեր կուսակցութիւնների մարտավարութեան առանձնահատկութիւններից, ուներ նաեւ հետեւյալ ընդհանուր գծերը.

1. Ազատագրական պայքարի հիմնական ձեւերն էին՝ հայդուկային կռիւլը, ապստամբութիւնները, ինքնապաշտպանական կռիւները, արշավանքները, ասպատակութիւնները, ահաբեկչութիւնները եւ այլն:

2. Պայքարի այդ ձեւերը պետք է վերաճեին ընդհանուր զինված ապստամբութեան:

3. Ժողովուրդը իր ուժերով պետք է ազատագրվեր թուրքական լծից:

4. Մեծ տերութիւնների օգնութեան հետ հույս չէր կապվում:

Ինչպես կուսակցութիւնների ծրագրերով նախատեսվում էր, Արեւմտեան Հայաստանի գրեթէ բոլոր շրջաններում շուտով ծավալվեց եւ մեծ թափ ստացավ պարտիզանական կռիւլը, որը հայերը անվանեցին հայդուկային կամ ֆիդայական կռիւլ: Այդ պարտիզանական պատերազմին իր մասնակցութիւնը ցույց տվեց նաեւ արեւելահայութիւնը: Արեւելեան Հայաստանում ստեղծվում էին մեծ թվով հայդուկային ջոկատներ, որոնք անցնելով սահմանը միանում էին իրենց արյունակիցների ազատագրական կռիւին: Այդ դաժան կռիւում հանդես եկան հայդուկային շարժման այնպիսի տաղանդավոր գործիչներ, որոնք իրենց հաստատուն տեղը գրավեցին հայ ժողովրդի բազմադարեան պատմութեան անմոռաց հերոսների շարքերում:

1894թ. օգոստոսին տեղի է ունենում Սասունի ապստամբութիւնը, 1895 թվականի հոկտեմբերից - 1896 թվականի հունվարի սկզբները՝ Զեյթունի ապստամբութիւնը: Ո՛չ Սասունի եւ ո՛չ էլ Զեյթունի ապստամբութիւնը չհաջողվեց դարձնել համաժողովրդական ընդհանուր զինված ապստամբութեան սկիզբ:

1896թ. հունիսին կազմակերպվում է Վանի ինքնապաշտպանութիւնը,

նույն թվականի օգոստոսին՝ Կոնստանդնուպոլսի բանկի գրավումը 1897թ. հուլիսին տեղի է ունենում Պանաստորի հայտնի արչավանքը՝ Սակայն այս հերոսական գործողությունները եւս չփոխեցին իրավիճակը։

Պարզ դարձավ, որ ընդհանուր ժողովրդական զինված ապստամբության համար արեւմտահայությունը դեռ պատրաստ չէ։

Անհրաժեշտություն առաջացավ փոփոխություններ մտցնել ազատագրական պայքարի տակտիկայի մեջ։

Այդ փոփոխությունները Դաշնակցությունը կատարեց 1898թ. 2-րդ համագումարում։

Քննարկվող հարցի տեսանկյունից, համագումարի ընդունած որոշումների մեջ կարեւոր նշանակություն ունեն հետեւյալ երկուսը․

Առաջին․ Վժողովը տակտիկայի վիճաբանության ձեռնարկելիս առաջ, սկզբունքով միաձայն ընդունեց, թե առանց եվրոպական միջամտության անկարող ենք մեր ժողովրդի ազատության գործը գլուխ բերել, հետեւաբար, գործունեության եղանակը որոշելու աստե՛ն ի նկատի պիտի ունենալ այդ միջամտությունը առաջ բերելու բոլոր հնարավորությունները։

Եթե մինչեւ 1898 թվականը Դաշնակցությունը հույս ուներ սեփական ուժերով փրկել Հայաստանը, ապա երկրորդ համագումարից հետո ազատագրության հույսը կապում է բացառապես Արեւմուտքի օգնության հետ։

Երկրորդ․ ընդհանուր ապստամբության եւ հայդուկային պայքարի հարցերը քննարկելով, համագումարը որոշում է․ «Երկար վիճաբանությունների վերջ ստվար մեծամասնությամբ (2 ձայն դեմ) սկզբունքով ընդունեց ուժերու կենտրոնացումը երկրին մեջ, ցոյցը՝ Պոլիս եւ ծովեզրյա քաղաքները, եւ մերժելով Ֆիդայական ասպատակային գործունեությունը՝ ընդունեց մարտական-զինավարժական խմբեր կազմակերպելու ծրագիրը։

Ուրեմն, Դաշնակցությունը հրաժարվում է պարտիզանական կռիվ տակտիկայից եւ անցնում Երկրում ուժեր պատրաստելուն՝ ընդհանուր ապստամբության համար։

Ազատագրական պայքարի հետագա զարգացման նման տակտիկա են ընտրում նաեւ ինչպես Հնչակյան, այնպես էլ Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունները։

Ազատագրական պայքարի նոր մարտավարության սկզբունքներն ավելի են հստականում 1903-1907 թվականներին։ 1903թ. Հնչակյան կուսակցությունը եւ Դաշնակցությունը պաշտոնապես իրենց գործունեության շրջանակների մեջ են մտցնում նաեւ արեւելահայ հարցի լուծման համար մղվող պայքարը։

Անհրաժեշտ է հատկապես ընդգծել այն կարեւոր հանգամանքը, որ

ինչպես այդ ժամանակ գործող, այնպես էլ հետագայում հանդես եկած բոլոր հայ ազգային-քաղաքական կուսակցությունները, որպես կանոն, իրենց ծրագրերում առանցքային տեղ են տվել Հայկական հարցին, եւ յուրաքանչյուրը իր հնարավորության սահմաններում պայքարել է այդ հիմնահարցի լուծման՝ հայ պետականության վերականգնման համար:

Հայ քաղաքական միաքը նոր պայմաններում նոր ուղիներ էր որոնում Հայկական հարցի լուծման համար:

1908թ. որոշ հուլիսեր կազմեցին իշխանության գլուխ եկած եւ Թուրքիան սահմանադրական երկիր հռչակած երիտթուրքերի հետ, սակայն 1909թ. Ադանայի ջարդերը ցույց տվեցին, որ այդ ակնկալությունները հիմնադուրկ են:

Ռուսաստանում հայ քաղաքական կուսակցությունները դեմոկրատական ուժերի հետ մի ճակատում պայքարում էին ցարական կարգերը տապալելու, երկրում դեմոկրատական իշխանություն ստեղծելու համար:

Հայ ազգային բոլոր կուսակցությունները, հայ ժողովրդի բոլոր հատվածները մեծ ակտիվություն ցուցաբերեցին 1912-1914 թվականներին, ջանալով տերությունների միջոցով հասնել վերաբացված Հայկական հարցի լուծմանը:

Սակայն, Ռուսաստանի, Անգլիայի եւ Ֆրանսիայի ջանքերով ընդունված 1914թ. հունվարի 28-ի համաձայնագիրը՝ Արեւմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու մասին, օրակարգից հանեց Առաջին համաշխարհային պատերազմը:

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԿՈՆՑԵՊՏԻԱՆ:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ - ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ

ԹՈՒՐԲԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

11-12-րդ դարերում միջինասիական թուրքական ցեղերը այլ տարածքների հետ միասին նվաճում են նաեւ Հայկական լեռնաշխարհը՝ հայոց պատմական հայրենիքը եւ հիմք դնում Ծամանյան կայսրությանը: Օսմանյան կայսրությունն իր վերելքի եւ հզորության շրջանում, բնականաբար, մտահոգված էր նոր նվաճումներով եւ ոչ թե պետության տարածքային ամրողչականության պահպանման խնդրով, որին այդ ժամանակ ժառանգ էր սպառնում:

Սակայն այն բանից հետո, երբ Օսմանյան կայսրությունն սկսեց վայրէջք ապրել, երբ հրապարակ եկավ Արեւելյան հարցը, միջազգային հարաբերությունների օրակարգ մտավ Հայկական հարցը, երբ նվաճված ժողովուրդները դուրս եկան ազգային-ազատագրական պայքարի, երբ մեծ

տեբուլթյունները լայնամասշտաբ պայքար ծավալեցին «հիվանդ մարդուն» Թուրքիայի ժառանգությանը տիրանալու նպատակով, Թուրքերը, խիստ անհանգստացած, սկսեցին ուղիներ որոնել կայսրության տարածքային ամբողջականութունը պահպանելու համար:

Գրավելով Հայկական լեռնաշխարհը՝ Թուրքերը դեռ սկզբից վարում էին Հայաստանը Հայաթափելու եւ Հայերին ձուլելու քաղաքականություն:

Թուրքերը պայքարում էին հայոց պատմական Հայրենիքը սեփական Հայրենիք դարձնելու համար: Ընդ որում, Թուրքերը այդ նոր Հայրենիքը ցանկանում էին ունենալ առանց այդ երկրի իսկական տերերի՝ հայ ժողովրդի:

Այդ ավանդական քաղաքականությունը պետական ծրագրի տեսք է ստանում 1860-1870-ական թվականներին, երբ Նոր օսմանները առաջ են քաշում Պանօսմանիզմի կոնցեպցիան: Համաձայն Պանօսմանիզմի, Օսմանյան կայսրությունը հայտարարվում էր նրանում բնակվող բոլոր ժողովուրդների՝ մուսուլման եւ ոչ մուսուլման, ընդհանուր հայրենիք: Օսմանյան կայսրությունում, համաձայն այդ տեսության, գոյություն ուներ մեկ ազգ՝ օսմանները: Կայսրության բոլոր ժողովուրդները օսմանյան ազգի բաղկացուցիչ մասերն են, որոնք իրավունք չունեն ինքնուրույն գոյություն եւ անկախ պետականություն ունենալու: Բոլոր ազգությունների ներկայացուցիչները կոչվում էին օսմաններ: Նվաճված ժողովուրդների պայքարը ազգային անկախության համար Պանօսմանիզմը դիտում էր որպես դավաճանություն ընդհանուր հայրենիքի» նկատմամբ:

Պանօսմանիզմի ծրագիրը կյանքի էր կոչվել օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու, քրիստոնյա ժողովուրդներին ձուլելու, նրանց ազգային-ազատագրական պայքարի առաջն առնելու համար:

Համաձայն Պանօսմանիզմի տեսաբանների, օսմանյան կայսրությունում Թուրքերը պետք է տիրապետող դիրք ունենային:

Պանօսմանիզմի կոնցեպցիան, ընդհանուր հայրենիքի եւ օսմանյան միասնական ազգի գաղափարներով նպատակ էր հետապնդում հավերժացնել Թուրքերի կողմից նվաճված տարածքներում օսմանյան կայսրության գոյությունը:

Նրիտթուրքերը, 19-րդ դարի վերջերին սկսելով ակտիվ պրոպագանդիստական գործունեություն, իրենց ազգային քաղաքականության հիմքում դրեցին Պանօսմանիզմի գաղափարները:

Միասնական Թուրքական պետություն, միասնական օսմանյան հայրենիք, միասնական Թուրք ժողովուրդ, կայսրության ոչ Թուրքական ժողովուրդների ձուլում - ահա այս էր Պանօսմանականության ծրագիրը:

Սակայն ժամանակի ընթացքում ինչպես Թուրքիայի կառավարող չոր-
ջանները, այնպես էլ ընդդիմադիր ուժերը համոզվեցին, որ պատմության
ընթացքը անվերապահորեն տանում է դեպի կայսրության քայքայումը,
նվաճված ժողովուրդների անկախությունը, ազգային անկախ պետությունների
ստեղծումը: Պարզ դարձավ, որ Պանօսմանիզմի քաղաքականության կեն-
սագործումը չի կարող արգելակել ազգային-ազատագրական պայքարի
այն հզոր պրոցեսը, որ սկիզբ էր առել կայսրությունում: Պանօսմանիզմի
գաղափարախոսությունը նոր պայմաններում քննություն չբռնեց:

Պանօսմանիզմը Օսմանյան կայսրության նվաճած ժողովուրդների
ձուլման, դանդաղ ոչնչացման ծրագիր էր, իսկ 19-րդ դարի վերջերին
ծալր առած ազգային-ազատագրական պայքարի հզոր ալիքը ոչնչացնելու
համար անհրաժեշտ էին հիմնահարցը լուծելու ավելի արմատական միջոց-
ներ: Թուրքիայի տարածքային ամբողջականությունը պահպանելու հա-
մար պետք է մշակվեր ազգային քաղաքականության միանգամայն նոր
կոնցեպցիա, որը հնարավորություն տար պահպանելու կայսրության տա-
րածքային անձեռնմխելիությունը:

Ահա այսպիսի պայմաններում ծնունդ է առնում Օսմանյան կայսրու-
թյունում ազգային հարցը, եւ, իհարկե, առաջին հերթին Հայկական հար-
ցը եղեռնի միջոցով լուծելու կոնցեպցիան, որի հեղինակը Աբդուլ Համիդն
էր:

Աբդուլ Համիդը, եթե սկզբից հույս ուներ Հայկական հարցը լուծել
հայերին ձուլելու եւ արտագաղթի միջոցով, ապա ավելի ուշ եկավ այն
հետեւության, որ Հայկական հարցը պետք է լուծել՝ ֆիզիկապես ոչնչաց-
նելով հայ ժողովրդին:

Աբդուլ Համիդի կառավարությունը գլխավորող Քյամիլ փաշան, նրա
իշխանության գլուխ անցնելու առաջին տարիներին, գրել էր. «Եթե Եվրո-
պիոյ մասին մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ, որ նույն հիմարություն-
ներն ընենք մեր Ասիական Տաճկաստանի մեջ... ուրեմն, այդ հայ ազգը
վերացնելու, անհետ եւ անճեռ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ հանելու
համար բան չի պակասի մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք - քուրդ,
կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ. կրո-
նական պատերազմ մը կհայտարարենք, եւ դուրին պատերազմ այնպիսի
ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն եւ ոչ պաշտոն,
երբ, ընդհակառակն, մենք զենք էլ ունենք, զինվորություն էլ եւ աշխար-
հիս ամեննն մեծ տերությունց մեկը՝ ամեննն հարուստը (Անգլիան-Լ.Պ.)
մեզ նիզակակից է եւ մեր ասիական աշխարհին երաշխավորը»:

Պատմագիտական գրականության մեջ ընդունված է Հայկական ե-
ղեռնի կենսագործումը կապել միայն Երիտթուրքերի եւ Պանթուրքիզմի

հետ: Այդ կարծիքը հիմնավորված չէ: Հայկական եղեռնի քաղաքականությունն սկսել է կենսագործվել շատ ավելի վաղ, Արդուլ Համիդի կողմից, 1890-ական թվականների սկզբներից: Միայն 1895-1896 թթ. հայկական ցեղասպանությունը զոհ է գնացել շուրջ 300 հազար մարդ: 18 տարի շարունակ, 1890-1908 թթ. Արդուլ Համիդը Արեւմտյան Հայաստանում պարբերաբար կազմակերպում էր հայերի զանգվածային կոտորածներ: 100 հազարավոր մարդիկ արտագաղթեցին, հարյուր հազարներ՝ բռնի մուսուլմանականացվեցին: Տեղի էր ունենում արեւմտահայության եղեռն, Երկիրը աստիճանաբար հայաթափվում էր:

Սակայն Օսմանյան կայսրությունում միայն կառավարող շրջանները չէ, որ հանգել էին Հայկական հարցը եղեռնի միջոցով լուծելու անհրաժեշտության գաղափարին: Աստիճանաբար հայերի ցեղասպանության գաղափարին են հանգում նաեւ Երիտթուրքերը, որոնք ընդունեցին Պանթուրքիզմը եւ 1908թ. իշխանության գլուխ գալուց հետո այն բարձրացրին պետական քաղաքականության մակարդակի:

Պանթուրքիստները դժգոհ էին Պանօսմանիզմի գաղափարախոսությունից եւ գտնում էին, որ այն չի կարող իրականացվել: Պանթուրքիզմի հիմադիրներից՝ Յուսուֆ Աքբուրան դեռ 1903թ. գրում էր. «Հնարավոր չէ կայսրության տարբեր ժողովուրդներին միավորել եւ ստեղծել մի ազգ»:

Երիտթուրքերը գտնում էին, որ Թուրքիայի փրկությունը պանթուրքիզմի մեջ է: Այդ պատճառով էլ նրանք հրաժարվեցին Պանօսմանիզմից եւ ընդունեցին Պանթուրքիզմը:

Պանթուրքիզմը (Պանթուրանիզմ) - Թուրքալեզու ժողովուրդների ազգային, ռասայական գաղափարախոսությունն է: Այդ գաղափարախոսության նպատակը եղել է Ադրիատիկ ծովից մինչեւ Չինաստան Թուրքալեզու ժողովուրդների համախմբումը մի պետական միավորման մեջ:

Պանթուրքիզմի գաղափարախոսությունը, համաձայն Չիա Կեոք Ալիի, պետք է կենսագործվի երեք փուլով:

Առաջին փուլ. թուրքիզմ: Պանթուրքիզմի գաղափարները կարող են իրականացվել միայն հզոր Թուրքիայի միջոցով: Որպեսզի օսմանյան Թուրքիան կատարի իր պատմական դերը, նա ամենից առաջ պետք է թրջանա, պետք է հրաժարվի Պանօսմանիզմի գաղափարներից: Օսմանյան Թուրքիան Թուրքերի հայրենիքն է, մյուս ժողովուրդները կամ պետք է թրջանան կամ էլ ոչնչացվեն:

Երկրորդ փուլ. օղուզականություն: Օղուզական պետության ստեղծում: «Մեր հաջորդ քայլը պիտի լինի օղուզականությունը, այսինքն Թուրքմենների միացումը: Թուրքիա, Ադրբեյջան, Պարսկական Ադրբեյջան պիտի կազմեն վաղվան Օղուզգիստանը»:

Պետք է ստեղծվեր թուրքերից, ադրբեյջանցիներից և թուրքմեններից կազմված մեկ միասնական պետություն:

Երրորդ փուլ. Պամբուրամիզմ (Պամբուրաֆիզմ): Երկրորդ խնդիրը կատարելուց հետո միայն թուրքիան պետք է ձևափոխվի լինի Միացյալ և անկախ Թուրանի ստեղծմանը, որը պետք է տարածվի Միջերկրական ծովից մինչև Խաղաղ օվկիանոս, Չինաստանից մինչև Հյուսիսատլանտիկ օվկիանոս:

Պանթուրքիզմի գաղափարախոսության այս երեք հիմնական կետերում են ամփոփվում թուրքալեզու ժողովուրդների իդեալները, ցեղային, ազգային գաղափարախոսության հիմնադրույթները: Սրանով է բացատրվում թուրքիայի հետեւողական պայքարը՝ ճանապարհ բացել դեպի Արեւելք: Դրանով է բացատրվում նաեւ թուրքալեզու ժողովուրդների համախմբումը այդ գաղափարի շուրջը:

Սակայն Պանթուրքիզմի գաղափարների իրականացումը հանգեցնում է Հայաստանի և Հայ ժողովրդի անխուսափելի ոչնչացմանը:

Պանթուրքիզմի մահացու վտանգը եղել է, կա և լինելու է մշտապես: Եվ ահա թե ինչու:

Պանթուրքիզմի գաղափարախոսության համաձայն Հայ ժողովուրդը կամ պետք է ձուլվեր կամ էլ ֆիզիկապես ոչնչացվեր: Հայկական «սեպը» որը խանգարում էր Մեծ Թուրանի գաղափարի իրականացմանը, պետք է դադարեր գոյություն ունենալուց: Երրորդ ուղի Հայ ժողովրդի համար Պանթուրքիզմը չէր ընդունում: Թուրքիզմի իրականացման համար պետք է ոչնչացվեր արեւմտահայությունը, իսկ օղուզականության համար պետք է ոչնչացվեր նաեւ արեւելահայությունը, կամ ծայրահեղ դեպքում Հայաստանից պետք է կտրվեին Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը, ամբողջ Չանգեզուրը և Ղարաբաղը:

Այս երկու խնդիրները կատարելուց հետո միայն Պանթուրքիզմը պետք է ձևափոխվի լինի Մեծ Թուրանի գաղափարի իրականացմանը:

Եվ Թուրքիան, անկախ այն բանից, թե ովքեր են եղել իշխանության գլուխ, հետեւողականորեն և անողորմորեն պայքարել է Պանթուրքիզմի այդ եռաստիճան ծրագիրն իրականացնելու համար:

Թուրքերի մոտ խոսում էր ցեղի ձայնը, նախնիների կանչը, թուրքալեզու ժողովուրդների համախմբման անհրաժեշտությունը, որը և ընկած էր Պանթուրքիզմի գաղափարախոսության հիմքում:

Թուրքիզմը թուրք ժողովրդի ազգային գաղափարախոսությունն էր, իսկ Պանթուրքիզմը՝ թուրքալեզու ժողովուրդների:

Բացի ազգայինից, թուրքալեզու ժողովուրդները ունեին նաեւ ցեղային շահեր, որի պատճառով ազգային առանձին գաղափարախոսություններից զուգահեռ ստեղծվեց նաեւ համաթուրքական գաղափարախոսություն:

Ինչ վերաբերում է կրոնական գործունին, ապա մահմեդականությունը մշտապես ունեցել է իր կարեւորագույն տեղն ու դերը թե ազգային եւ թե համաթուրքական գաղափարախոսությունների ձեւավորման եւ իրականացման գործում: Օսմանյան կայսրության ղեկավարությունը արհեստականորեն սրում էր մուսուլմանների եւ քրիստոնյաների հարաբերությունները: Հայկական ջարդերի եւ եղեռնի իրականացման գործում խոշոր դեր է կատարել մուսուլմանական, կրոնական ֆանատիկոսությունը: Այդ նպատակի համար օգտագործվել է նաեւ Պանիսլամիզմը:

Պանթուրքիզմի գաղափարախոսները թուրքական ժողովուրդներին կոչ էին անում զենքով ու արյունով, այլ ժողովուրդների ոչնչացման գնով իրականացնել Մեծ Թուրանի գաղափարը:

Բանաստեղծ Մեհմետ Էմինը կոչ էր անում.

«Արթնացե՛ք եղբայրներ, որովհետեւ կյամբը թրփական
աշխարհիմ՝ ձեզմով պիտի քեղմավորվի:

Մեկ փեթակ ունիմ քուր մեղումները.

Մեկ Թուրան պետք է ունեցամ

Բոլոր թուրքերը:

Աթայներու վրա ելիր,

Եվ կատաղի ձայն բարձրացուր,

Ճամբում վրա հեղափոխմամ

Ծաղիկ չաճիր առանց արյամ.

Մեմ մի գավկեդ պահամքե դում

Հավատք, արյուն եւ արություն.

Դրոշիդ շուրջը գամ միամամ

Թուրքերը համայն»:

Մեհմետ Էմինը կոչ է անում բոլոր թուրքերին համախմբվելու Թուրանի գաղափարի շուրջը՝ զգուշացնելով, որ առանց արյան ծաղիկ չի աճում:

Պանթուրքիզմի խոշորագույն գաղափարախոս Ջիա Կեոք Ալփը «Դեպի Արեւելք» խորագրով բանաստեղծությունների ժողովածուի մեջ գրելով, որ «Անատոլիան ներքին հող չէ, չի բաժանվում արտերկրից», թուրքալեզու ժողովուրդներին կոչ է անում.

«Ջիս մի կոչեր թուրքմեմ, քայ կամ օսմանցի,

Թուրք եմ, ամուսն այս բարձր է քուրեմ,

Չկա ուզեցի, թաթար, խըրխըզ, շիրվանցի,

Թուրք ազգն է մեկ, չի քաժնուիր մեկն արդեն:

Ով թրքորդի, ալ ոչ ես կամ, ոչ դուն, ոչ ալ ամիկա,

Ձկա քարձր, չկա խոնարհ, այլ միայն կա մեծ Թուրամ,

Թեքում չկա մեր ճամբուն մեջ, ամկախ պեյ կամ խամ չկա,

Թուրք հոգիին մեջ կամ միայն մեկ հայրենիք, մեկ իշխանա՝:

Ուրեմն, Թուրքերին կոչ էր արվում նայել դեպի Արեւելք, շարժվել դեպի Արեւելք՝ Մեծ Թուրան, մեկ միասնական հայրենիք ստեղծելու նպատակով:

Եթե հիշյալ երկու հեղինակները Թուրքերին կոչ են անում համախմբվել եւ ստեղծել միասնական հայրենիք՝ Մեծ Թուրան, ապա էնիս Աֆեյն արդեն անթաքույց շարադրում է այդ ճանապարհին ընկած ժողովուրդներին ոչնչացման ծրագրի ձեւերը.

«Կոխած տեղերուս ամեն մեկ մասն արյուն պիտի ժայթքե...

Երկարած քաթիս տակ գարումները՝ աշմամ եւ աշումները՝

գմտամի պիտի վերածվեն...

Եթե քար քարի վրա թողնեմ՝ ետիս թողած օճախս թող քանդվի...

Վարդաստամները մեռնաստամ պիտի ընեմ սուրովս...

Պատմությամը պիտի թողնեմ ամանկ կործանված ու գետնի հավասար

ավերակ մը, որ տասը դար մարդիկ չկարողանան

քաղաքակրթություն կանգնեցնել մրա վրա:

Եթե ճյուղերի վրա տերեւ, եւ պատմեջի վրա դրոշ թողնեմ՝

թող սեւ կմիք գարնվի հավատիս տախտակին վրա:

Շումչես հուր պիտի սփռեմ, գեմֆես՝ մահ, իսկ քայլափոխես՝ անդունդ...

Ամեն ճերմակ գույն քուռ մը վառողի արատով պիտի խարանեմ,

եւ ամեն վառողի արատ՝ ափ մը արյունով պիտի քաթախեմ:

Գթությունը պիտի կախեմ յաթաղամիս ծայրին, իմաստությունը՝

հրագեմիս փամփուշտին, քաղաքակրթությունն ալ՝

մժուլգիս ետեւի պայտին:

Լեռներու փապարները, ամտառներու հովանին եւ ավերակներու

կոշկոճ գողճերը պիտի խոսին հավիտենություն՝

այդ տեղերեմ անցած թուրքին պատմությունը»:

Բացատրություններն ավելորդ են: Պարզ է, թե ինչպիսի մահացու վտանգ էր սպառնում հայ ժողովրդին: Պանթուրքիզմը որպես գաղափարախոսություն արդեն ձեւավորված էր, եւ չուտով պետք է սկսեք Մեծ Թուրանի ստեղծման ծրագրի իրականացումը:

Պանթուրքիզմի ծրագրի իրականացման գործը որպեսզի հաջողության հասնել, պետք է իր ձեռքը վերցնել թուրքական պետությունը:

1908թ. Թուրքիայում իշխանության գլուխ են գալիս Երիտթուրքերը, որոնք Սալոնիկի իրենց տարեկան համաժողովում, 1910թ. պաշտոնապես հրաժարվեցին Պանսամանիզմից և որդեգրեցին Պանթուրքիզմը:

Այդ համաժողովում Թալեաթը հայտարարեց.

«Մահմանդության տրամադրություններով և մահմեդականներու և քրիստոնյաներու միջև հավասարություն հաստատվեց, բայց այս մեկը անիրականալի իդեալ մըն է: Շերիաթը, մեր ամցյալ ամբողջ պատմությունը և հարյուր հազարավոր մահմեդականների զգացումները, և նույնիսկ զգացումները քրիստոնյաների, որոնք համառ կերպով կընդդիմաման օսմանցիության ամեն փորձի, ամխորտակելի պատվար մը կը մերկայացնեն արդար հավասարության մը հաստատումին դեմ:

Քրիստոնյան օրինական օսմանցի մը դարձնելու անհաջող փորձեր կատարած ենք, և այսպիսի փորձերը պիտի ամխուսափելի կերպով ձախողվեն այնքան ժամանակ, որքան որ Բալկանյան թերակղզում անկախ փոքր երկրներ Մակեդոնիոյ ընկնչներեն մերս բաժանումի գաղափարը տեւականացնելու դիրքին մեջ կը գտնվին:

Ուրեմն, հավասարության մասին ոչ մի խոսք չի կարող լինել այնքան ժամանակ, քանի որ չի հաջողվել կայսրությունը օսմանցիականացնելու մեր գործը - երկար և սպառիչ աշխատամք մը, որուն մեջ, սակայն, կը համարձակիմ ըսելու, վերջապես պիտի հաջողիմք:

1911թ. Սալոնիկիում տեղի է ունենում Երիտթուրքերի հաջորդ տարեկան համաժողովը, որը որոշում է.

«Կայսրության նկարագիրը պետք է լինի մահմեդական: Պետք է ապահովվի մահմեդական հաստատությունների և ավանդությունների հանդեպ հարգանք: Պետք է մերժել այլացեղ ազգությունների իրիւց մեջ կազմակերպելու իրավունք: Ազգությունները զանազանի քանակություններ են: Թուրք լեզվի տարածումը գերազանց միջոց մըն է հաստատելու մահմեդական գերիշխանությունը և յուրացնելով ձուլելու մյուս տարրերը»:

Այս ժողովում Երիտթուրքերի ղեկավարության մեջ են ընտրվում Պանթուրքիզմի հիմնադիրներ և գաղափարախոսներ՝ Իսմայիլ Գասպրինսկին, Հյուսեյնզադե Ալին և Յուսուֆ Աքուրան: Եթե նկատի ունենանք, որ Զիա Կեռք Ալին արդեն ընտրված էր այդ մարմնի անդամ, ապա պարզ կդառնա, որ Երիտթուրքերի կողմից Պանթուրքիզմի ընդունումը որպես գաղափարախոսություն օրինաչափ երեւույթ էր:

Սվ այսպես, ընտրությունը կատարված էր, Պանթուրքիզմը դառնում էր Թուրքիայի պետական քաղաքականություն: Սալոնիկի 1910 և 1911 թվականների

համաժողովների որոշումները՝ կայսրությունը օսմանցիականացնելու և մահ-մեղականացնելու մասին, մշամակում էր հայ ժողովրդի ցեղասպանության ծրագրի ընդունում:

Երիտթուրքերը ձեռնամուխ եղան Պանթուրքի մի ծրագրի իրականացմանը: Համաձայն այդ ծրագրի առաջին հերթին պետք է թուրքացվեր և մահմեդականացվեր Թուրքիան: Երիտթուրքերը այդ խնդրի իրականացման բռնագավառում ոչ մի խանգարիչ հանգամանք չէին տեսնում: Դրանով է պայմանավորված Թալեաթի այն հայտարարությունը, որ Թուրքիայի օսմանացման գործը «Վերջապես պիտի հաջողինք»:

Արեւմտահայության ճակատագիրը որոշված էր. թուրքերը վճռել էին ոչնչացնել մի ամբողջ ժողովուրդ: Ընդունելով այդ ծրագիրը՝ թուրքերը, սակայն, սպասում էին նպաստավոր ժամանակի այն իրագործելու համար:

1914թ. օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որը թուրքերի համար անպաշտպան արեւմտահայությանը ոչնչացնելու ամենահարմար ժամանակն էր: Թուրքերը համոզված էին, որ համաշխարհային պատերազմի կրակներում պետականություն չունեցող արեւմտահայության գենոցիդը կանցնի աննկատ և մեծ աղմուկի պատճառ չի դառնա: Պարզ էր նաև, որ Թուրքիայի դաշնակից Գերմանիայի համաձայնության պայմաններում, Անտանտը, եթե անգամ ցանկանար, ի վիճակի չէր լինելու թուրքերին խանգարել իրականացնելու արեւմտահայության գենոցիդը:

Օգոստոսի 6-ին Թուրքիան և Գերմանիան պայմանագիր են կնքում, որի 5-րդ հոդվածում ասվում է.

«Գերմանիան կօգնի Օսմանյան կայսրության արեւելյան սահմանները շտկել այնպես, որ Թուրքիայի համար ապահովի անմիջական չփում Ռուսաստանում բնակվող մահմեդական ազգաբնակչության հետ»:

Գերմանիան այս պայմանագրով իր համաձայնությունն է տալիս Թուրքիային օգնելու նրա պանթուրքիստական ծրագրերի իրականացմանը:

Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու կապակցությամբ հրապարակված կոչում ասվում էր.

«Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին արդարացվում է մեր ազգային իդեալով: Մեր ազգի իդեալը առաջնորդում է մեզ դեպի մեր մոսկովյան թշնամու ոչնչացումը, որպեսզի դրա հետեւանքով ստեղծվեն մեր կայսրության բնական սահմանները, որոնք իրենց կազմուս կունենան և կմիավորեն մեր ռասայի բոլոր ճյուղավորումները»:

Թուրքական ռասայի բոլոր ճյուղավորումները միավորելու համար պետք է, ինչպես արդեն գրել ենք, ոչնչացվեր արեւմտահայությունը

եւ որպէս նվազագույն պայման՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը, Զանգեզուրը եւ Ղարաբաղը պետք է անցնեն թուրքիային, իսկ այդ տարածքների հայ բնակչութիւնը՝ ոչնչացվելու Առավելագույնը ստեղծված իրավիճակում թուրքիայի համար ամբողջ հայ ժողովրդի եւ Հայաստանի ոչնչացումն էր. այդ էր պահանջում Պանթուրքիզմի գաղափարախոսութիւնը:

1915թ. սկզբներին Երիտթուրքերի կուսակցութեան կենտկոմի գաղտնի նիստը՝ Թալեաթի նախագահութեամբ, որոշեց արեւմտահայութեան գենոցիդի եւ տեղահանութեան կոնկրետ եղանակները:

Այդ նիստում նազըմը կոչ արեց.

«Եթե այս մաքրագործումը ընդհանուր եւ վերջնական պիտի լըլա, օգուտի տեղ զնաւ կբերե. պետք է հայ ազգը արմատախիլ լըլա, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռացվի: Հիմա պատերազմի մեջ ենք, ասկե հարմար առիթ չի գտնվիր, մեծ պետութեանց միջամտութիւնը եւ թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար լըլալ, լըլալու պարագային խնդիրը կատարված իրողութիւն մը կը դառնա եւ կը փակվի. այս անգամուան գործողութիւնը բնաջնջումի գործողութիւն մը պիտի լըլա, հայերեն անհատ մը իսկ չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է»:

1915 թվականի ապրիլի 15-ին հայերի ցեղասպանութեան մասին կազմվում է մի պաշտոնական հրահանգ, որում ասվում էր.

«Որեւէ հաշտութեան սեղանի վրա, որեւէ ձեւով Հայկական հարցի դրվելը կանխելու համար, օգտվելով պատերազմի մեզ բերած անկախութիւնից, որոշեցինք վերջնական հաշվհարդարի ենթարկել այն, բնաջնջելով անհարազատ այդ տարրը, քչելով նրանց ռեպի Արարիայի անապատները, համաձայն տրված մեր գաղտնի հրահանգի»:

Արեւմտահայութեան գենոցիդի մասին այս որոշումը ստորագրել էին թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեաթը, ռազմական գործերի մինիստր էնվերը եւ Երիտթուրքերի կուսակցութեան կենտկոմի քարտուղար Նազըմը:

1915-1918 թվականներին իրականացվեց արեւմտահայութեան ցեղասպանութեան պանթուրքիստական ծրագիրը: Ոչնչացվեց մեկուկես միլիոն հայ:

Արեւմտյան Հայաստանը հայաթափվեց: Հայ ժողովուրդը 1915թ. եղեռնը անվանեց Մեծ եղեռն:

Արեւմտահայութեան բնաջնջումից հետո Թալեաթը հայտարարեց. «Հայկական հարց այլեւս գոյութիւն չունի, որովհետեւ այլեւս հայեր գոյութիւն չունեն»: Թուրքիան Հայկական հարցը Արեւմտյան Հայաստանում լուծեց՝ ոչնչացնելով արեւմտահայութեանը:

Արեւմտահայութեան ոչնչացումից հետո պանթուրքիստները պայքար սկսեցին իրենց ծրագրի երկրորդ կարեւոր խնդրի՝ օղուգականութեան իրագործման համար: Օրակարգ մտած Արեւելյան Հայաստանի նվաճման, արեւելահայութեան ոչնչացման խնդիրը:

Սակայն 1915-1916 թվականների ռազմական գործողութիւնների հետեւանքով ցարական զորքերը գրավել էին Արեւմտյան Հայաստանի գրեթե ողջ տարածքը: Թուրքիան պետք է ջանար, առաջին հերթին, ռուսական զորքերից հետ նվաճել այդ տարածքները եւ հետո միայն մեռնամուկ լինել Արեւելյան Հայաստանի զավթման գործին:

Արեւմտյան Հայաստանն այդ ժամանակ Ռուսաստանից հետ նվաճելը գործնականում անհնար էր: Առաջին աշխարհամարտում հաղթանակած Անտանտի գաղութային պետութիւնները, բնականաբար, նվաճած տարածքները, նույն թվում եւ Արեւմտյան Հայաստանը պետք է բաժանեին իրար մեջ:

Եվ իրոք, երկարատեւ բանակցութիւններից հետո, 1916 թվականին Սալթ-Պիկոյի համաձայնութեամբ, Թուրքիայի տիրապետութեան տակ գտնվող Հայկական տարածքները որոշվեց բաժանել հետեւյալ կերպ. ա) Ռուսաստանն անեքսիայի էր ենթարկում Վանը, Բիթլիսը, էրզրումը եւ Տրապիզոնը, բ) Ֆրանսիան՝ Դիարբեքիրը, Քարբեքը, Սվաւը եւ Կիլիկիան:

Նվաճելով Թուրքիայից Հայաստանի տարածքները, ինչպես տեսնում ենք, Անտանտի գաղութատիրական պետութիւնները չցանկացան Հայկական հարցը լուծել, վերականգնել Հայոց պետականութիւնը:

Հայերի կյանքում պարզապես տեղի էր ունենում արմատական փոփոխութիւն. Թուրքիայի տիրապետութեան տակ գտնվող տարածքները անցնում էին Ռուսաստանին եւ Ֆրանսիային:

Օսմանյան կայսրութիւնը դատապարտված էր, դարերի ընթացքում նրա կողմից զավթած տարածքներն անցնում էին Անտանտի գաղութատիրական պետութիւններին:

Միայն հրաշքը կարող էր փրկել Թուրքիային, եւ այդ հրաշքը կատարվեց:

1917թ. հոկտեմբերին Ռուսաստանում բոլշեւիկները գրավեցին իշխանութիւնը: Անտանտի կողմից մերժված բոլշեւիկյան Ռուսաստանը փորձեց դաշինքի մեջ մտնել Գերմանիայի հետ: Քառյակ միութիւնը գլխավորող Գերմանիայի հետ բանակցութիւնները, որոնք սկսվել էին 1917թ. վերջերին, ավարտվեցին 1918թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովկում՝ պայմանագրի կնքումով:

Թուրքիան Գերմանիայի օգնութեամբ հասած իր նպատակին: Մի կող-

մից՝ Ռուսաստանի, մյուս կողմից՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի եւ Թուրքիայի միջեւ կնքված պայմանագրի Ծ-րդ հոդվածում ասվում էր. «Ռուսաստանը իրենից կախված ամեն ինչ կանի, որ պեսզի ապահովի Արեւելյան Անատոլիայի գավառների շտապօգնութիւն մաքրումը եւ նրանց կանոնավոր հանձնումը Թուրքիային: Արդահանի, Կարսի եւ Բաթումի օկրուգները եւս անհապաղ մաքրվում են ռուսական զորքերից: Ռուսաստանը չի խառնվելու այդ օկրուգների պետական-իրավական նոր հարաբերութիւնների կազմակերպմանը, այլ դրանց բնակչութիւնը հնարավորութիւն կտա, հարեւան պետութիւնների եւ հատկապես Թուրքիայի համաձայնութեամբ, հաստատել նոր կարգ»:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնում ռուսական զորքերի կողմից գրաված բոլոր տարածքները, նույն թվում նաեւ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում նվաճած Կարսը, Արդահանը եւ Բաթումը:

Ընդ որում, բուլղերիկները, գալով իշխանութեան գլուխ Ռուսաստանում 1917 թվականի նոյեմբերին, չեղյալ էին հայտարարել Սայքս-Պիկոյի համաձայնութիւնը: Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ստորագրելու պահին ռուսական զորքերը հեռացել էին ոչ միայն Արեւմտյան Հայաստանից, այլեւ Անդրկովկասից:

Ռուսական զորքերի հեռանալուց հետո, 1918թ. հունվարի 30-ին թուրքական բանակը հրաման է ստանում սկսել հարձակումը՝ ամբողջ Հայաստանը գրավելու նպատակով:

Երկրի պաշտպանութեան գործը ընկավ հայդուկային խմբերի եւ նոր կազմակերպվող ռազմական ջոկատների վրա, որոնք, ինչպես ցույց տվեցին ռազմական գործողութիւնները, անկարող եղան դիմադրելու թուրքական կանոնավոր բանակին:

Թուրքական բանակը գրեթե առանց լուրջ դիմադրութեան գրավեց Արեւմտյան Հայաստանը, մտավ Արեւելյան Հայաստանը եւ չարժեք դեպի Երեւան:

Պանթուրքիստները ձեռնամուխ եղան իրենց երկրորդ խնդրի իրագործմանը՝ Արեւելյան Հայաստանի գրավմանը, արեւելահայութեան ոչնչացմանը, որի նպատակը, ինչպես ասել ենք, օսմանյան թուրքերին, աղըրբէջանցիներին եւ թուրքմեններին միավորող օղուզական պետութեան ստեղծումն էր:

1918թ. հունիսի սկզբներին Բաթումի բանակցութիւնների ժամանակ Վեհիբ փաշան այդ մասին Ա. խատիսյանին ասել է հետեւյալը.

«Երևա կը տեսնեք, որ ճակատագիրը կը քաշե Թուրքիան արեւմուտքէն արեւելք. մենք հեռացանք Բալկաններից, կը հեռանանք նաեւ Աֆրիկայից,

բայց մենք պետք է տարածվենք դեպի արեւելք։ Հոն է մեր արյունը, մեր կրոնքը ու լեզուն։ Եվ ասիկա տարերային ձգողություն ունի։ Մեր եղբայրները Բաքու, Դաղստան, Թուրքեստան եւ Ադրբեջան են։ Մենք պետք է ճամբա ունենանք դեպի հոն։ Եվ դուք՝ Հայերդ կանգնած եք մեր այդ ճամբուն վրա։ Պահանջելով Վանը՝ դուք կը փակեք մեր ճամբան դեպի Պարսկաստան։ Պահանջելով Նախիջևանն ու Ջանեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուռի հովիտը եւ երթալու Բաքու։ Կարոն ու Ախալքալալը կը փակեն մեր ճամբան դեպի Ղազախ ու Գանձակ։ Դուք պետք է մեկ կողմ քաշուիք եւ մեզի ճամբա տաք։ Ահա թե ուր է մեր հիմնական վեճը։ Մեզի պետք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարավորություն տան մեր բանակներուն առաջ շարժուելու եւ պաշտպանուելու։ Մեկ ճամբան՝ Կարս-Ախալքալակ-Բորչալու-Ղազախն է, որ կը տանի դեպի Գանձակ, մյուսը՝ կերթա Շարուր-Նախիջևան-Ջանեզուրով Քուռի հովիտը։ Դուք կարող եք մնալ անոնց մեջտեղը, այսինքն Նոր-Բալազդի եւ էջմիածնի շուրջը։

Գրաված վայրերում թուրքական բանակը իրականացնում էր արեւելահայության ցեղասպանության պանթուրքական ծրագիրը։

Օրակարգում դրված էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը։

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Հայ ժողովրդի պատմության այդ ճակատագրական պահին մաքուր ժողովուրդը ոտքի ելավ թուրքական զավթիչներից պաշտպանելու իր կյանքն ու Հայրենիքը։ Սարդարապատում, Բաշ Ապարանում եւ Ղարաբաղիսայում տեղի ունեցան կենաց ու մահվան ճակատամարտեր։ Մայիսյան հերոսամարտերն ավարտվեցին թուրքական բանակի պարտությունով։

Այդ պատմական ճակատամարտերի օրերին քայքայվեց Անդրկովկասյան Սեյմը, որի ավերակների վրա ստեղծվեցին Վրաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի անկախ հանրապետությունները։

1918թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախ հանրապետությունը։ Հայ ժողովուրդը վերականգնեց 600 տարի առաջ կորցրած պետականությունը։

Պանթուրքիզմը չնայած իր ձեռք բերած խոշոր հաջողություններին՝ Արեւմտյան Հայաստանի նվաճմանը, այնուամենայնիվ չհասավ իր հիմնական խնդրի՝ հայկական սեպի վերացմանը, հայ ժողովրդի ոչնչացմանը։ Դեռ ավելին, պատմական Հայաստանի մի փոքրիկ տարածքում վերաստեղծվեց հայկական պետականությունը։

Պանթուրքական ծրագրի իրականացման համար մղվող պայքարի ար փուլում Թուրքիան մենակ չէր։ Թուրքիայի հակահայկական, պանթուրքիստական ծրագրերի իրականացմանն ակտիվորեն մասնակցում էր Ադրբեյջանը։ 1918-1921 թվականներին Թուրքիան եւ Ադրբեյջանը ուս ուսի տված, միասնական ուժերով հնարավոր բոլոր միջոցները օգտագործեցին՝ Հայկական հարցի լուծումը ձախողելու, փոքրիկ Հայաստանը մասնատելու, հայկական «սեպը» վերացնելու համար։

Դեռ 1917թ. դեկտեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի ժողովուրդները «Թուրքահայաստանի մասին» դեկրետով հայ ժողովրդին հայտարարում էր. «որ Ռուսաստանի բանվորական եւ գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»։

Այդ դեկրետով բոլշևիկյան Ռուսաստանը պաշտոնապես ճանաչում էր հայ ժողովրդի պատմական իրավունքը Արեւմտյան Հայաստանում, Հայկական հարցի լուծման անհրաժեշտությունը։ Դրանումն է կայանում Թուրքահայաստանի մասին դեկրետի նշանակությունը։ Հայկական հարցի պատմության ընթացքում Խորհրդային Ռուսաստանն առաջինը ճանաչեց Արեւմտյան Հայաստանում անկախ հայկական պետություն ստեղծելու արեւմտահայերի իրավունքը։

Սակայն, ինչպես նշեցինք վերը, ռուսական բանակը հեռացավ Արեւմտյան Հայաստանից, իսկ հայկական զինված ուժերը չկարողացան դիմակայել Թուրքական զորքերին։ Արեւմտյան Հայաստանը նորից ընկավ Թուրքիայի տիրապետության տակ։

Օսմանյան կայսրության եւ Հայաստանի Հանրապետության միջև 1918թ. հունիսի 4-ին Բաթումում կնքվում է մի ստրկացուցիչ պայմանագիր, որով Հայաստանն ընդունում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Բաթումի պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքը կաթմում էր շուրջ 12 հազար քառակուսի կիլոմետր։

Այդ վիճակը երկար չարունակվել չէր կարող։ Գերմանական բոլոր պարտվել էր։ Անտանտն էր թելադրում իր պայմանները։

1918թ. հոկտեմբերի 30-ին Դաշնակիցների եւ Թուրքիայի միջև Մուդրոսում կնքված զինադադարով Թուրքերը պարտավորվեցին ազատել Անդրկովկասում նվաճած տարածքները։ Շուտով Թուրքական զորքերը հեռացան Անդրկովկասից։ 1919թ. գարնանը Թուրքերից ազատված հայկական տարածքները միացվեցին Հայաստանի Հանրապետությանը։ Հայաստանի Հանրապետության տարածքը հասավ 71 հազար քառակուսի կիլոմետրի։

Հայ ժողովուրդն այդ ժամանակ մեծ հույսեր ուներ ապագայի նկատ-

մամբ: Միջազգային հարաբերությունների օրակարգում էր գտնվում նաև Արևմտյան Հայաստանի հարցը: Հայկական հարցը նորից ակտիվորեն քննարկվում էր մեծ պետությունների հարաբերություններում:

Հայկական հարցը պետք է քննարկվեր ինչպես Փարիզի կոնֆերանսում, այնպես էլ Սեւրում:

Հայկական հարցը միջազգային զեկատորությունում ներկայացնելու համար ստեղծվում է երկու հայկական պատվիրակություն՝ արևմտահայության ազգային պատվիրակությունը եւ Հայաստանի Հանրապետության պետական պատվիրակությունը: Առաջինը ղեկավարում էր Պողոս Նուբարը, երկրորդը՝ Ա. Ահարոնյանը:

Հայ Ազգային պատվիրակությունը դեռ 1918թ. նոյեմբերի 30-ին Փարիզում հանդես է գալիս հետեւյալ հայտարարությամբ.

«Հայկական Ազգային պատվիրակությունը, պատասխանելու համար Հայ ազգին միակամ իղձին, որուն մեկ մասը արդեն իսկ իբրեւ անկախ հանրապետություն կազմուած է, կը հայտարարե ամբողջական Հայաստանի անկախութիւնը, կրիկիարով միասին, Համաձայնական պետություններու եւ Միացյալ Նահանգներու հովանաւորութեան տակ, կամ ազգերու Դաշնակցութեան՝ երբ ան կազմուի»:

Հայկական երկու պատվիրակությունները, Փարիզում գալով ընդհանուր համաձայնութեան, 1919թ. փետրվարի 12-ին զեկատորովին են ներկայացնում մի ընդարձակ հուշագիր, որը վերնագրված էր՝ «Հայկական հարցը հաշտութեան զեկատորովին առջեւ»:

Հուշագրում հայկական ազգային պահանջները ձեւակերպվել էին հետեւյալ կերպ.

«1. Ծանաչումը Հայկական անկախ պետութեան մը, կազմուած յոթը նահանգներու եւ կրիկիտյ միացումովը կողկասի Հայկական Հանրապետութեան հետ...

2. Որ այսպիսով կազմված Հայկական պետությունը հովաքական երաշխավորութեանը տակ դրվի Դաշնակից պետութեանց եւ Միացյալ Նահանգներու կամ Ազգերու ընկերակցութեան, որուն ինքն ալ կը պահանջե մաս կազմել:

3. Որ Խաղաղութեան Համաժողովին կողմն մասնավոր մանդատ մը տրվի պետություններին մեկուէն, որ իր օժանդակութիւնը պիտի ընծայե Հայաստանի՝ փոխանցման ժամանակաշրջանի մը միջոցին: Այդ պաշտոնը ստանձնող Պետութեան ընտրութիւնը պիտի ըլլա խորհրդածութեամբը Հայկական համաժողովին, որ ալժմ գումարված է Փարիզի մեջ եւ որ կը ներկայացնե ամբողջ Հայ Ազգը: Մանդատի տեւողութիւնը պիտի ըլլա առ առաւելն քսան տարի»:

Միացյալ անկախ Հայկական պետության մեջ պետք է մտնեին Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարինի եւ Տրապիզոնի վիլայեթները, Կիլիկիան, Կովկասի Հայկական Հանրապետությունը՝ 1919թ. ընդարձակված տարածքաշրջանով:

Հուլիսից ստորագրել էին Ա. Ահարոնյանը եւ Պողոս Նուբարը Երեւանում 1919թ. փետրվարի 6-13-ը տեղի են ունենում Արեւմտահայ երկրորդ Համագումարը, որը ընդունում է Հետեւյալ քաղաքական բանաձեւը.

«Արեւմտահայ Բ. Համագումարը քննելով հայ ժողովրդի ներկա կացությունը.

1. Կը հայտարարե իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական եւ պետական մեկ միություն համազգային հատվածներու եւ երկրամասերու միավորությանը:

2. Կը պարտադրե ընտրված Գործադիր մարմինը նախարարական դաշինքին Հետ անմիջապես հարաբերության մեջ մտնել իրականացնելու եւ գործնականացնելու քաղաքական եւ պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկավոր են Ազատ եւ Միացյալ Հայաստանի պետական գոյութունը հիմնավորելու համար:

3. Միաժամանակ կը պարտադրե ընտրուած «Գործադիր Մարմին» գործնական քայլեր առնել Արարատյան Հանրապետության նախարարության եւ խորհրդարանի Հետ Միացյալ Ազատ Հայաստանի անկախությունը հայտարարելու, եւ իր մասնակցությունը բերելու գոյություն ունեցող պետական եւ օրենսդրական հաստատություններու մեջ համազգային միությունը իրականացնելու համար»:

Սույն որոշումը ընդունելուց հետո, Արեւմտահայ Համագումարը ուղերձներ է հղում Հայաստանի կառավարությանը եւ խորհրդարանին:

Արարատյան Հանրապետության վարչապետին ուղղված դիմումում ասվում էր. «Արեւմտահայ Բ. Համագումարը ողջունելով հայության մեկ հատվածի կառավարությունը, լիահույս է, որ այն եւս կը միացնե իր ձայնը Արեւմտահայ Համագումարի վճռին - ունենալ մեկ հայրենիք եւ մեկ Միացյալ Ազատ Հայաստանի պետական կազմակերպություն»:

Համագումարը գտնելով սույն խնդիրը հայության համար պատմական մեկ կարեւոր խնդիր, հաժապեցած է, որ Արարատյան Հանրապետության կառավարությունը կը փութա օր առաջ հայտարարել Միացյալ Ազատ Հայաստանի անկախությունը եւ գործնական քայլեր առնել՝ միացումը իրականացնելու համար կյանքի մեջ»:

Արարատյան Հանրապետության խորհրդարանին ուղղված դիմումում բարձրացվում էր նույն խնդիրը.

Արեւմտահայ Բ. Համագումարը ողջունելով Հանրապետութեան անդրանիկ Խորհրդարանը, զետեւ է, որ այն եւս իր հեղինակավոր ձայնը պիտի միացնէ հայութեան ամեննէն շատ տանջված եւ զոհաբերած հատվածի ձայնին - ունենալ մեկ Հայրենիք, Միացյալ, Անկախ Հայաստան, մեկ պետական կազմակերպությամբ:

Համագումարը հավատացած է, որ Խորհրդարանը չուշանար իր որոշումը տալու հայութեան համար խիստ կարեւոր այս խնդրի մասին: Փետրվարի 25-ին Հայաստանի կառավարութիւնը քննութեան առավ Արեւմտահայ երկրորդ համագումարի դիմումը եւ, համաձայնվելով առաջարկին, հանձնարարեց հարցը պատրաստել ու մտցնել Հայաստանի խորհուրդ:

1919թ. մայիսի 28-ին Հայաստանի խորհրդի հանդիսավոր միստում Խատիսյանը կարդաց Միացյալ Հայաստանի Անկախութեամբ հայտարարագիրը.

«Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովրդի լիակատար ազատութիւնը ու բարգաւաճումը ապահովելու համար, Հայաստանի կառավարութիւնը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցամկութեամբ, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբր անկախ պետական միութիւն:

Ուղիղ մի տարի առաջ ռուսահայերի համագումարից ընտրված Հայոց Ազգային Խորհուրդը հայտարարեց իրեն անդրկովկասյան հայկական գավառների բարձրագույն իշխանութիւն: Ազգային Խորհրդի կազմած կառավարութիւնն այդ քաղաքական ակտի մասին պաշտոնապես պետութեանց ներկայացուցիչներին հայտնելուց հետո՝ այս մի տարվա մեջ փաստորեն հաստատել է իր իշխանութիւնն Անդրկովկասի հայկական գավառներում:

1919թ. փետրվար ամսին Երեւան քաղաքում կայացած Արեւմտահայ երկրորդ համագումարը հանդիսավոր կերպով հայտարարեց, որ նա Հայաստանը միացյալ եւ անկախ է ճանաչում:

Այժմ, Անդրկովկասում եւ օսմանյամ կայսրութեան սահմաններում գտնված պայծառակամ հայկական երկրների միացման եւ անկախութեամբ այս ակտը կատարելով՝ Հայաստանի կառավարութիւնը հայտարարում է, որ միացյալ Հայաստանի պետական ձեւը է Ռամկավար Հանրապետութիւնը եւ որ իմէր հանդիսաւում է միացյալ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը:

Այսպիսով՝ ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջական հայրենիքի գերագույն տերն ու տնօրէնը, եւ Հայաստանի պառլամենտն ու կառավարութիւնը հանդիսանում են միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շողկապող բարձրագույն օրենսդիր եւ գործադիր իշխանութիւնը:

Հայաստանի կառավարությունը սույն ակտը հրատարակում է 1919 Ապրիլ 21ի Պառլամենտի որոշմամբ կառավարությանը տրված հատուկ լիազորությունների հիման վրա:

Հայաստանի խորհրդի հանդիսավոր նիստում կարգաքվեց Արեւմտահայ գործադիր մարմնի հետեւյալ հայտարարությունը.

«Կանգնած մնալով Արեւմտահայ Բ. համագումարի ընդունած քաղաքական բանաձեւի տեսակետին վրա, Արեւմտահայ գործադիր մարմինն իբրեւ Հայկական Հանրապետության սահմաններու մէջ ապրող Արեւմտահայերու ներկայացուցչական օրգան, լսելով կառավարության հայտարարությունը Հայաստանի միացման եւ անկախության մասին, սրտագին կողջունե կառավարության կատարած ակտը, եւ իր լիակատար պատրաստակամությունը կը հայտնե, Հայաստանի խորհրդարանի եւ կառավարության մէջ իր գործոն մասնակցությունը բերել, իրագործելու Միացյալ Հայաստանի գաղափարը եւ ամրապնդելու հայ ժողովրդի ազատությունն ու բարգաձեւումը»:

Եվ այսպես, Արարատյան Համրապետությունը տեւ է կամքնում Հայկական հարցին: Ազատ Անկախ եւ Միացյալ Հայաստանի ստեղծմամ խնդիրը դառնում է օրակարգի հարց: Թվում էր, թե պատմության մէջ երբեք այսքան բարեկապատ պայմաններ չեն եղել Հայկական հարցի լուծման համար:

Ամբողջ 1919 թվականին մինչեւ 1920 թվականի Օգոստոսը Հայկական հարցը գտնվում էր քննարկումների եւ ուսումնասիրությունների շրջանում (Փարիզի վեհաժողովով, Լոնդոնի խորհրդաժողովով, Սան-Ռեմոյի խորհրդաժողովով, Հարբորդի առաքելություն եւ այլն) վերջնական վճիռ կայացնելու համար:

Հայկական երկու պատվիրակությունների կողմից ներկայացված հուշագրի պահանջները մեծ տերությունների կողմից ընդունելություն չգրտան:

1920թ. ապրիլի 24-ին Սան-Ռեմոյում ապագա հայկական պետության սահմանների մասին ընդունվում է Լոյդ Ջորջի նախագիծը, որը ուղարկվեց Վիլսոնին: Այդ նախագիծում ասվում էր.

«ա) Դիմել պրեզիդենտ Վիլսոնին, որպեսզի Ամերիկայի Միացյալ Նահանգները ընդունեն Հայաստանի մանդատը այն սահմաններում, որոնք տրված են Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի առաջին տարբերակում:

բ) Եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները չկամենան ընդունել մանդատը, Միացյալ Նահանգների պրեզիդենտին խնդրվում է հանդես գալ իբրեւ միջնորդ Հայաստանի սահմանների հարցում, ինչպես ասված է ստորեւ բերվող նախագծային հոդվածում:

գ) Հետեւյալ իմաստով հողված պետք է մտցվի հաշտության պայմանագրում՝ Հայաստանի վերաբերյալ:

Թուրքիան, Հայաստանը եւ մյուս բարձր պայմանավորվող կողմերը համաձայն են դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտի միջնորդությանը Թուրքիայի եւ Հայաստանի սահմանների հարցում՝ էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում եւ ընդունել այդ առթիվ նրա որոշումը, ինչպես նաեւ որեւէ պայման, որ նա կառավարկի դեպի ծով Հայաստանի անկախ պետության ելքի մասին:

Մեծ տերություններն, ինչպես տեսնում ենք, մերժում են Հայ պատվիրակության ներկայացրած մեծ Հայաստան ստեղծելու նախագիծը եւ կանգ են առնում ավելի փոքր հայկական պետություն ստեղծելու վրա, որը պետք է ընդգրկեր Վանի, Բիթլիսի, Կարինի եւ Տրապիզոնի վիլայեթները ոչ լրիվ տարածքով:

Սան-Ռեմոյի կոնֆերանսում մշակված Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի նախագիծը 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրվեց Սեւրում: Սեւրի պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժինը (88-83 հոդվածներ) ամբողջովին վերաբերվում էր Հայաստանին:

Պայմանագրի 89-րդ հոդվածում ասվում էր. «Թուրքիան եւ Հայաստանը, ինչպես եւ Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանադատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը եւ ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես եւ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առավարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու եւ հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ»:

Սան-Ռեմոյի կոնֆերանսի որոշման համաձայն, ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը 1920թ. նոյեմբերի 22-ին հայտնում է իր չիրավարարական վճիռը՝ էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի եւ Հայաստանի սահմանագծման մասին: Վիլսոնի վճռով Արեւմտյան Հայաստանի տարածքը պետք է կազմեր 90 հազար քառ. կիլոմետր: 1920թ. Արեւելյան Հայաստանի տարածքը կազմում էր 71.330 քառ. կմ:

Այսպիսով, Հայաստանի ընդհանուր տարածքը պետք է կազմեր 161.330 քառ. կմ: Եթե իրադարձությունները բարեհաջող ընթացք ունենային, ապա Հայ ժողովուրդը կարող կլիներ հայտարարելու, որ ինքը լուծեց նախնիների թողած ծանր բեռը՝ Հայկական հարցը:

Սեւրի պայմանագրով Արեւմուտքը պաշտոնապես ճանաչեց Հայ ժողովրդի պատմական իրավունքը Արեւմտյան Հայաստանում: Եթե դրան ավելացնենք, որ 1917 թվի վերջին Թուրքահայաստանի մասին դեկտեմբրի,

իսչպես արդեն նշել ենք, Խորհրդային Ռուսաստանը եւս ճանաչել էր այդ տարածքի նկատմամբ հայ ժողովրդի պատմական իրավունքը, ապա պարզ կդառնա, որ հայ ժողովրդի թափած արյունը, բազմաթիվ սերունդների հերոսական, անձնագոհ պայքարը վերջապես տվեց իր արդյունքը. աշխարհը պաշտոնապես ընդունեց հայ ժողովրդի պատմական իրավունքը Արեւմտյան Հայաստանում եւ այդ տարածքում հայկական անկախ պետութեան ստեղծման անհրաժեշտութիւնը: Հենց դրա մեջ է այդ փաստաթղթերի պատմական նշանակութիւնը:

1920 թվականի ամառը Հայկական հարցի պատմութեան բարձրակետն էր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԱՐԻՒ ԵՐԶԱՆՈՒՄ
(1920 բվտկաթից միջևև մեր օրերը)

1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ԹԱՂՈՒՄԸ

1920 թվականի օգոստոսին Թուրքիայում իշխանութունն արգեն անցել էր Մուստաֆա Քեմալի կառավարությանը: Սեւրի պայմանագրերը իրականացնելու համար անհրաժեշտ էր զինված ուժ: Հայաստանը նոր էր ստեղծում իր բանակը եւ, բնականաբար, այդ խնդիրը միայն իր ուժերով լուծել չէր կարող: Եւրոպի պարզվեց, որ Դաշնակիցների օգնութունը սահմանափակվելու է զենքով եւ զինամթերքով, զինված ուժ չի ուղարկվելու Արեւմտյան Հայաստանն ազատագրելու համար:

Դեռ ավելին, Թուրքիան եւ բոլշևիկյան Ռուսաստանը ծրագրում էին գրավել Հայաստանը: Բոլշևիկյան Ռուսաստանը նպատակ ուներ հետ նվաճել ցարական կայսրության կազմում գտնված բոլոր տարածքները, նույն թվում, բնականաբար նաեւ Արեւելյան Հայաստանը, իսկ Թուրքիան՝ Արեւմտյան Հայաստանը, Կարսն ու Արզաւանը:

1920 թ. սեպտեմբերի 28-ին թուրքական զորքերը հարձակվում են Հայաստանի վրա եւ գրավելով Կարսն ու Արզաւանը մտնում Արեւածագրապոյ: Թուրքերի հարձակումը կատարվում է Ռուսաստանի զենկավարութւյան համաձայնութւյամբ: Նոյեմբերի 28-ին իր զորքերն է Հայաստան մտցնում նաեւ Ռուսաստանը: Հայաստանի անկախ հանրապետութւյնը դադարում է գոյութւյն ունենալուց: Հայաստանը բաժանվում է Ռուսաստանի ու Թուրքիայի միջեւ: Թուրքիան գրավում է Արեւմտյան Հայաստանը, Կարսը, Արզաւանը եւ Սուրմալուն: Հայաստանի մնացած շրջաններն անցնում են Ռուսաստանի ախրապետութւյան տակ:

Թուրքիայի եւ Ռուսաստանի այս նվաճումները իրենց իրավական ձե-

վակերպումն են ստանում Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում: Ելնելով մեծ տերությունների հարաբերությունների բնույթից, Թուրքիայի եւ Ռուսաստանի անգիշում դիրքավորումից՝ դժվար էր կռահել, որ Հայկական հարցը պատմության այդ փուլում փակված էր:

Հայ ժողովրդի հույսերը չիրականացան: Հայկական հարցի լուծման բարենպաստ պահը բաց էր թողնված: Հայկական հարցի հետագա արժարժումները 1921-1922 թվականներին Լոնդոնի խորհրդաժողովում, Փարիզի խորհրդաժողովում եւ Ազգերի լիգայում դատապարտված էին անհաղորդության: Դաշնակիցները այժմ ուղիներ էին որոնում լեզու գտնելու Թուրքիայի, իսկ քիչ ավելի ուշ նաեւ Ռուսաստանի հետ:

Նման պայմաններում պատահական է, որ Լոզանի կոնֆերանսում Հայկական հարցը հանգում է Արեւմտյան Հայաստանում հայերի համար ազգային օջախի ստեղծման գաղափարին, որի էությունը փաստորեն հայոց լեզվի եւ մշակույթի պահպանման երաշխիքներ տալն էր: Թուրքիայի ներկայացուցիչը վճռականորեն մերժում է Արեւմտյան Հայաստանում հայերի համար ազգային օջախի ստեղծելու առաջարկը:

Դրանով էլ Հայկական հարցը դուրս է գալիս օրակարգից: 1923 թվականի Հուլիսին ընդունված Լոզանի դաշնագրում Հայկական հարցը տեղ չի գտնում:

Հայկական հարցը պատմության այդ փուլում թաղվեց:

Թուրքիան, հետ նվաճելով Արեւմտյան Հայաստանը, Կարսն ու Արդահանը եւ գրավելով երբեք իրեն չպատկանած Սուրմալուն, նախապես իրականացրած լինելով ցեղասպանությունը, այդ շրջաններում արգելեց հայերի բնակեցումը: Հայկական հարցը Թուրքիան լուծեց Թուրքավարի՝ ոչնչացնելով եւ տեղահանելով այդ շրջանների հայ բնակչությանը:

Թուրքական կառավարությունը հետագայում հանդես էր գալու մղտապես օրակարգում գտնվող հետեւյալ կարգախոսով՝ Արեւմտյան Հայաստանում հայկական բնակչություն գոյություն չունի, ուրեմն գոյություն չունի եւ Հայկական հարցը:

Բոլորովին այլ ճակատագիր ունեցավ Արեւելյան Հայաստանը բոլշևիկյան Ռուսաստանի կազմում: Հայաստանը հայտարարվեց Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն եւ տերիտորիալ ինքնավարության իրական կարգավիճակով մտավ Խորհրդային Միության մեջ: Արեւելահայությունը եւ Արեւելյան Հայաստանում փրկություն գտած հարյուր հազարավոր արեւմտահայեր ստացան տնտեսական, մշակութային եւ քաղաքական զարգացման մեծ հնարավորություններ: Կարճ ժամանակամիջոցում Հայաստանը դարձավ զարգացած արդյունաբերության, գյուղատնտեսության

և մշակութի երկիր: Հայ ժողովուրդը փրկվեց Պանթուրքիզմի կողմից մշտապես սպառնացող ֆիզիկական ոչնչացման վտանգից:

Բուլլեիզմը որպես քաղաքական ուժ նոր պարզաբանումների կարիք չունի: Բուլլեիզմը փոքր ժողովուրդների աքսորի ու տեղահանության քաղաքականությամբ, միլիոնավոր մարդկանց գնդակահարություններով, քաղաքական ռեպրեսիաներով, Սիրիում և այլուր ձգվող հազարավոր համակենտրոնացման ճամբարներով, մարդու և ժողովուրդների քաղաքական իրավունքների լիակատար ոչնչացումով հայտնի է աշխարհին: Քաղաքական առումով Խորհրդային Միությունը մարդու և ժողովուրդների բանտ էր: Այդ քաղաքականության ծանր հետեւանքները, բնականաբար, Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ միասին կիսում էր նաեւ հայ ժողովուրդը:

Սակայն պատմության դառն դասերից ունիվեզիի ճշմարտություն էր դարձել նաեւ այն գիտակցությունը, որ հայ ժողովուրդը իր ճակատագիրը մեկընդմիջտ պետք է կապած պահի Ռուսաստանի հետ, անկախ այն բանից, թե ինչ գուշն ու ռեժիմ ունի այդ երկրի: Այդպիսին են հայոց մեծերի պատգամները:

Խորհրդային Միության կազմում Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը չէր կարող տեղ կանգնել Հայկական հարցին: Հայաստանի Հանրապետությունը արտաքին հարաբերությունների պետական ֆունկցիա չունի:

Խորհրդային Միության արտաքին քաղաքականության սկզբունքները, տարածքային հարցերը լուծում էր ԽՄԿԿ Կենտկոմի ղեկավարությունը: Թուրքիայի հետ բաժանելով Հայաստանը և 1921 թ. մարտի 18-ին կնքվով Մոսկվայի պայմանագիրը, Խորհրդային Միության ղեկավարությունն աշխուհետեւ բարձր մակարդակով հայտարարություններ էր անում պարբերաբար, որ ինքը Թուրքիայից հողային պահանջներ չունի: Իսկ 1920 թ. ղեկաւեմբերի 4-ին «Պրավդա» թերթում հրապարակված «Կեցցե՜ Խորհրդային Հայաստանը» խորագրով հոդվածում Ստալինը հայտարարել էր, որ Հայկական հարցը լուծված է: Նա գրում էր «Թող իմանան բոլորը, ում հարկ է գիտենալ, որ այսպես կոչված հայկական «պրոբլեմը», որի վրա ապարդյուն գլուխ էին փարդում իմպերիալիստական դիվանագիտության հին գայլերը, կարողացավ լուծել միայն Խորհրդային իշխանությունը»:

Արեւելյան Հայաստանի գրավումից, Ստալինի սույն հայտարարությունից և Մոսկվայի 1921 թ. մարտի 18-ի պայմանագրի կնքումից հետո պարզ է դառնում, որ Հայկական հարցը դադարում է գոյություն ունենալ նաեւ Խորհրդային Միության համար:

Հայկական հարցի բարձրացումը՝ որպես հայ անկախ պետականության

վերականգնման հարց, եթե մի կողմից հարվածում էր Թուրքիային, ապա մյուս կողմից էլ Խորհրդային Միությանը, որի կազմում հայ ժողովուրդը չուներ անկախ պետականություն: Այդ պատճառով էլ Հայկական հարցը Թաղվեց նաև Խորհրդային Միության կողմից: Ստալինյան տիրապետության տարիներին Հայկական հարցի մասին արգելվեց խոսել եւ գրել:

Անկախ այդ ընդհանուր իրավիճակից, Հայկական հարցը Խորհրդային իշխանության տարիներին երկու անգամ քննարկման նյութ է դարձել:

Առաջին անգամ Հայկական հարցը քննարկվել է 1921 թ. հուլիսին: Հայաստանը, ճիշտ է, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Խորհրդայնացից, բայց Զանգեզուրում դեռ չարունակվում էին արյունահեղ մարտերը: Հայկական զինված ուժերը Նոգինի դեկավարությանը պահում էին Զանգեզուրի անկախությունը:

Նման դրությունը եւ դաշնակցությանը, եւ Ռեկ-ին հարկադրեց գնալ բանակցությունների: Դաշնակցությունը փորձում էր Զանգեզուրը կռվան դարձնելով բոլշևիկյան կուսակցության դեկավարությանը համոզել գնալ փոխգլխամաների եւ օգնել լուծելու Հայկական հարցը: Իսկ Խորհրդային դեկավարությունը գնաց բանակցությունների, իրավիճակը բազմակողմանի պարզելու, հնարավորության դեպքում որոշ գլխամաների գնով Զանգեզուրի գրավումը դուրսացնելու համար:

1921 թ. մայիսի 28-ին Ռեկ կենտկոմը ստանում է Դաշնակցություն կուսակցության գերագույն մարմնի կողմից ուղարկված նամակ: Նամակի հեղինակ Վահան Փափազյանը հայտնում էր, որ Դաշնակցության գերագույն մարմնի որոշմամբ ստեղծվել է մի պատվիրակություն՝ Ռեկ կենտկոմի հետ բանակցություններ վարելու համար: Դաշնակցությունն առաջարկում էր քննարկել ինչպես երկու կուսակցությունների փոխհարաբերությունները կարգավորելու, այնպես էլ հայ ժողովրդի ճակատագրի հետ առնչվող հարցերը:

1921 թ. հունիսի 10-ի պաշտոնական գրությանը արտաքին գործերի նախարար Գ. Ջիչերինը կոմկուսի Քաղբյուրոյի առջև հարց է հարուցում Դաշնակցություն կուսակցության հետ բանակցություններ սկսելու մասին: Քաղբյուրոն հարցումով հավանություն է տալիս այդ առաջարկին:

Որոշվում է բանակցությունները վարել Ռիզայում: Բանակցություններ վարելու համար ստեղծվում է պատվիրակություն հետեւյալ կազմով՝ ա) Ա. Իոֆֆե, բ) Ս. Տեր-Գաբրիելյան, գ) Վ. Տեր-Վահանյան:

Դաշնակցության կողմից բանակցություններին մասնակցում էին՝ ա) Ա. Զամալյանը, բ) Վ. Նավասարդյանը եւ գ) Վ. Փափազյանը:

Մինչեւ բանակցությունների սկսվելը, հունիսի 22-ին Ա. Մյասնիկյանը Հայկոմկուսի կենտկոմի եւ Հայաստանի կառավարության անունից Տեր-

Գարրիելյանին եւ Ռեկ Կենտկոմին պաշտոնապես հայտարարում է, որ Վաշնակցություն կուսակցության ներկայացուցիչ՝ Վ. Փափազյանի ստորագրությամբ մայիսի 28-ի դիմումը Ռեկ Կենտկոմին պետք է անպատասխան թողնվի...

ՌՍՖՍՀ-ին կից Հայաստանի ներկայացուցիչը, իմ կարծիքով, չպետք է մասնակցի բանակցություններին, իսկ եթե նա մեկնել է բանակցությունների, ապա պետք է հետ կանչվի:

Մյասնիկյանի հայտարարությունը ուղարկվում է կարծիքի Տեր-Վահանյանին, վերջինիս պատասխանը միանշանակ էր. Դաշնակցության հետ բանակցությունները պետք է վարել:

Հունիսի 25-ին Ռեկ Քաղբյուրոն, կրկին քննելով դաշնակցության հետ բանակցություններ վարելու հարցը, Հունիսի 10-ի որոշումը թողնում է ուժի մեջ:

Բանակցությունները Ռիգայում սկսվում են Հուլիսի 8-ին: Բանակցությունների առանցքը Հայկական հարցն էր: Բանակցությունների ընթացքում մշակվում են մի քանի փաստաթուղթ, որոնցից հիմնականը երկու կուսակցությունների համաձայնագրի նախագիծն էր, որում ասվում էր.

«1. Ռեկ-ն ճանաչում եւ հռչակում է Հայաստանի անկախությունը եւ պարտավորվում է ազդել ՌՍՖՍՀ կառավարության վրա, որ նա Հայաստանի հետ իր հարաբերություններում խստորեն պահպանի վերջինիս սուվերենության սկզբունքները:

2. Ռեկ-ն ընդունում է, որ Հայկական հարցը միայն այն ժամանակ կարելի կլինի համարել լուծված, երբ Հայաստանը տարածքային առումով միացած կլինի եւ երբ նրանում տեղափոխված եւ ազգայնորեն համախմբված կլինի հայ ժողովուրդը:

3. Հայկական հարցը լուծելու նպատակով, Ռեկ-ն պարտավորվում է ազդել ՌՍՖՍՀ կառավարության վրա, որպեսզի վերջինս իր տրամադրության տակ եղած միջոցներով Թուրքիային թեք դեպի Հայկական հարցի լուծումը՝ Ռուսահայաստանին Թուրքահայաստանից հայ ժողովրդի ազատ քաղաքական գոյության համար բավարար տարածք միացնելու միջոցով՝ դեպի ծովը ելքով:

4. Եթե Հայկական հարցը լուծելու համար անհրաժեշտ լինի ապախորհրդայնացնել Հայաստանը, ապա Ռեկ-ն կանգ չի առնի Հայաստանը ապախորհրդայնացնելու առաջ:

5. Հ. Դաշնակցությունը ընդունում է, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ Հայկական հարցի լուծման դեպքում, Հայաստանի կողմնորոշումը բացարձակապես անկախ Ռուսաստանում տիրող վարչակարգից, պետք է լինի ռուսական:

Բանակցությունների ժամանակ ընդունված Համար 3 փաստաթղթում ՌԿԿ Կենտկոմի պատվիրակութունը գտնում էր անհրաժեշտ.

«1. Անկախ եւ ինքնուրույն Հայաստանի գոյությունը, որը բոլոր պետությունների հետ իր հարաբերություններում, նույն թվում եւ ՌՍՖՍՀ-ի, պետք է պահպանի իր լրիվ սուվերենությունը:

2. Այսպես կոչված Ռուսական Հայաստանի եւ այսպես կոչված Թուրքական Հայաստանի տերիտորիալ միավորումը. այսինքն՝ Հայաստանի տնտեսական եւ քաղաքական ազատ գոյության Համար բավարար, առաջ Հայերով բնակեցված, Թուրքական տարածքի միացումը առաջինին:

Մինչդեռ բանակցություններում մշակված խնդիրները կենսագործելու անհրաժեշտությունից՝ ՌԿԿ Կենտկոմի պատվիրակութունը մշակում է նաեւ ՌԿԿ Կենտկոմի՝ ՀԿԿ Կենտկոմին ուղղված Հայտարարության նախագիծ, որում ասվում է.

«ՌԿԿ Կենտկոմը, Հ. Հ. Դաշնակցության պարտավորությունների իրականացման Համար հնարավորություններ ստեղծելու նպատակով, իր վրա միջնորդութուն է վերցնում ՀԿԿ Կենտկոմին առաջարկել լեզայիցա-ցիայի ենթարկելու Հ. Հ. Դաշնակցութունը եւ նրա հետ բանակցություններ սկսել Համատեղ աշխատանքի հարցի շուրջը»:

Ռիգայի բանակցությունների ժամանակ մշակված եւ երկու կողմերի հավանությունն ստացած հինգ փաստաթղթերը նախատորագրվում են Հուլիսի 14-ին եւ ուղարկվում ՌԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի Հաստատմանը:

Բանակցությունների նյութերի հետ միասին Ա. Իոֆֆեն ՌԿԿ Կենտկոմ է ուղարկում նաեւ քննարկված հարցերի իր հիմնավորումները: Շարադրելով վերը բերված առաջարկների հիմնավորումը, Ա. Իոֆֆեն գրում է «Ահա թե ինչու, մենք՝ բանակցությունն վարողներս համաձայնեցինք նախատորագրել կցվող փաստաթղթերը, այսինքն՝ ցույց տալ, որ անձամբ մենք դրանք ստորագրելու կողմնակից ենք, եւ ահա թե ինչու, ես Ձեզ համառորեն եւ վճռականորեն խորհուրդ եմ տալիս համաձայնվել մեզ հետ եւ թույլ տալ ստորագրելու այդ փաստաթղթերը»:

Հուլիսի 16-ին ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Լուկաշինը հեռագրում է ՌԿԿ Կենտկոմին, Ջիչերիին եւ Տեր-Գաբրիելյանին.

«Զանգեզուրը բոլորովին լիկվիդացիայի է ենթարկվել: Հայաստանի կոմկուսի Կենտկոմը դաշնակցականների հետ բանակցությունների վարումը համարում է աննպատակ եւ անգամ վնասակար, մասնավոր, որ արտասահմանում Դաշնակցութուն կուսակցութունը բոլորովին վարկաբեկվել է, իսկ երկրի ներսում մենք նրանց վերջնականապես ոչնչացնում ենք»:

ՌԿԿ Կենտկոմի Քաղբյուրոն Հուլիսի 28-ին հարցումով որոշում է. «Ռիգայում ընկ. Իոֆֆեի եւ ուրիշների կողմից ստորագրված Համա-

նախագրի նախագիծը դաշնակցականների վերաբերյալ, զննականորեն մերժելու։ Այն ուժերը, որոնք 1920 թ. աշնանը տապալեցին Հայոց անկախ պետականությունը, այժմ հասան Ռիգայի փաստաթղթերի մերժմանը։ Հուլիսի 28-ին Իոֆֆեն ստանում է Զիչերինի հետեւյալ բովանդակութեամբ ծածկագիրը․

1. Ռեկ կենտկոմը զննականորեն մերժում է Ռիգայի համաձայնագրի նախագծի 2-րդ պարագրաֆը։

2. Անթուլյատրեյի է արժանանել Թուրքահայաստանի հարցը, քանի որ Մոսկվան ամուր կանգնած է մարտի 18-ի ռուս-թուրքական պայմանագրի պահպանության դիրքերում։

3. Մեծ դժբախտություն կլինի, եթե Համաձայնագրի նախագիծը, որը նախատրագրված է մեր պատվիրակության կողմից, մնա դաշնակցականների մոտ։

4. Անհրաժեշտ է այնպես անել, որ դաշնակցականների մոտ ոչ մի հետք չմնա։

Իոֆֆեն զարմանք է հայտնում Զիչերինի այդ տարօրինակ դիրքավորման կապակցությամբ, այն համարում չհիմնավորված։ Իոֆֆեն նպատակահարմար է համարում, որ Ռուսաստանը «Հայկական հարցը համարի իր հարցը» եւ փոխի այն քաղաքականությունը, որ սկսել է վարել դեռ Բրեստից։

Սակայն Իոֆֆեի կարծիքը զննորոշ չէր։ Հակահայկական ուժերը տարան իրենց հերթական հաղթանակը։ Հենց այդ նույն ժամանակաշրջանում, հուլիսի 5-ին Ստալինը հատուկ մեկնել էր Անդրկովկաս, որտեղ Լեոնալին Ղարաբաղը նվիրեց Ադրբեջանին։ Դրանով էլ ավարտվեց Հայաստանի տարածքների բզկտման եւ մասնատման պրոցեսը։

Այնուհետեւ տասնամյակներ շարունակ Խորհրդային Միությունում Հայկական հարցը մոռացության տրվեց։ Դեռ ավելին, Խորհրդային Միության ղեկավարները պարբերաբար հանդես էին գալիս հայտարարություններով այն մասին, որ Մոսկվան Թուրքիայից հողային պահանջներ չունի։

Խորհրդային Միության ղեկավարությունը Հայկական հարցը երկրորդ եւ այն էլ վերջին անգամ հիշեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին։

Թուրքիան Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, պաշտոնապես իրեն հայտարարելով չեզոք, իրականում գործակցում էր Գերմանիայի հետ եւ պաշտոնական պայմանավորվածություն ուներ Ստալինգրադի անկումից հետո գործ մտցնել Անդրկովկաս։

Ստալինը եւ Մոլոտովը 1945 թ. հուլիս-օգոստոսին Բեռլինի կոնֆերանսում պահանջեցին ուղղել ռուս-թուրքական սահմանները՝ Կարսը, Արդա-

հանը եւ Արդվինը, որոնք մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը եղել են Ռուսաստանի կազմում, վերադարձնել վերջինիս: Ընդ որում, Ստալինն այդ կոնֆերանսում առաջարկում է Կարսը վերադարձնել Հայաստանին, իսկ Արդահանը՝ Վրաստանին: Ստալինը Հայկական հարցում հետեւողական էր: Պահանջելով Թուրքիայից հետ վերադարձնել Հայկական տարածքները, նա այնուամենայնիվ մտադիր էր դրանց մի մասը նվիրաբերել Վրաստանին:

Սակայն Բեռլինի կոնֆերանսում Ստալինի ծրագրերը չիրականացան: ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան խառնեցին Ստալինի հաշիվները:

1953 թ. մայիսի 30-ին Խորհրդային կառավարությունը հայտարարեց, որ Խորհրդային Միությունը Թուրքիայից տեղիտորիալ պահանջներ չունի: Այնուհետեւ մինչեւ Խորհրդային կառավարության փլուզումը, խորհրդային կառավարությունը Հայկական հարցում հետեւողականորեն շարունակեց այդ քաղաքականությունը՝ պարբերաբար բարձր մակարդակով հայտարարելով, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայից տարածքային պահանջներ չունի:

2. ՍՓՅՈՒՌԱՆՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Եթե Խորհրդային Հայաստանի կառավարությունը հարկադրված էր հրաժարվել Հայկական հարցից, ապա հայոց հայրենիքի պահանջատիրությունը իրենց վրա վերցրին ցեղասպանությունից փրկված եւ աշխարհի բազմաթիվ երկրներում ապաստան գտած արեւմտահայության բնկորները, որոնք նոր պայմաններում ձեւավորվում էին որպես սփյուռքահայություն:

Խորհրդային Հայաստանի հարկադրական լուծության, Հայկական հարցից հրաժարվելու պայմաններում ազգային-ազատագրական պայքարի դրոշմը, Հայկական հարցի լուծման համար պայքարի ղեկավարությունը մնում է Հայկական Սփյուռքին:

Սփյուռքում գործող հայ ազգային կուսակցությունները, կազմակերպությունները, Հայ Դատի հանձնախմբերը, եկեղեցին լայն գործունեություն ծավալեցին Հայկական հարցի քարոզչության ուղղությամբ՝ ձգտելով այն դարձնել միջազգային հարաբերությունների օրակարգի հարց: Փաստաթղթեր հղվեցին ՄԱԿ-ին, Եվրոպաւլամենտին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդին, մեծ տերությունների ղեկավարներին՝ Հայկական հարցի լուծման պահանջով:

Ձեռյած ձեռք բերված որոշ հաջողություններին, այնուամենայնիվ, արժատական չընդդարձ Հայկական հարցի եւ հայոց ցեղասպանության

ճանաչման համար մղվող պայքարում չկատարվեց: Չհաջողվեց Հայկական հարցը եւ հայոց ցեղասպանութիւնը հանել մոռացութիւնից ու դարձնել միջազգային հարաբերութիւնների օրակարգի հարց:

Սփյուռքահայութեան ազգային մեծ զարթոնքը, Հայկական հարցի եւ հայոց ցեղասպանութեան ճանաչման համար մղված պայքարում արմատական շրջադարձը, այդ պայքարի նոր մարտավարութեան մշակումը տեղի է ունենում 1915 թ. Մեծ եղեռնի 50-ամյակից հետո: Մեծ եղեռնի 50-ամյակը եկավ ամփոփելու Սփյուռքահայութեան անցած ուղու արդիւնքները եւ դնելու պայքարի նոր ուղիների, նոր մարտավարութեան սկիզբը:

Հայկական հարցի համար մղվող պայքարը ընթանում էր երկու ուղի-ղութեամբ: Առաջինը, որոշ փոփոխութիւններով, ավանդական ուղին էր: Հայկական եւ ոչ հայկական մամուլում հրապարակվում էին բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներ, գրվում էին գրքեր ու գրքույկներ՝ նվիրված Հայկական հարցին եւ ցեղասպանութեանը, կանգնեցվում էին եղեռնին նվիրված հուշարձաններ: Դիմումներ էին հղվում ՄԱԿ-ին, Եվրոպաւումենտին, միջազգային բոլոր կազմակերպութիւններին, բազմաթիվ երկրների նախագահներին, խորհրդարաններին եւ կառավարութիւններին՝ Հայկական հարցը եւ հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու ու պաշտպանելու առաջարկով: Հայկական լորբին տարբեր երկրներում, հատկապէս ԱՄՆ-ում եւ Ֆրանսիայում, լայն գործունեութիւն է ծավալում Հայկական հարցը եւ հայոց ցեղասպանութիւնը պաշտոնապէս ճանաչել տալու ուղղութեամբ: Ի տարբերութիւն նախորդ շրջանի, սփյուռքահայ քաղաքական միտքը ավելի մեծ ուշադրութիւն է դարձնում միջազգային կազմակերպութիւնների վրա ազդելու գործնական ուղիների, ծրագրերի մշակմանն ու գործադրմանը: Այս բնագավառում զգալի գործ է կատարում 1972 թ. ստեղծված Ամերիկայի հայկական համագումարը:

Սփյուռքահայ քաղաքական միտքը պայքարի առաջին պլան է մղում հայոց ցեղասպանութեան դատապարտման հարցը՝ արդարացիորեն գտնելով, որ եղեռնի ընդունումն ու դատապարտումը հանգեցնելու է Հայկական հարցի լուծման անհրաժեշտութեանը:

Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի երկրորդ ուղղութիւնը ահաբեկչութիւնն էր: Նախորդ փուլում Հայկական հարցի համար մղված պայքարը հաջողութեամբ չէր ավարտվել: Նման պայմաններում սփյուռքահայ երիտասարդութեան մեջ ծնունդ է առնում այն տեսակետը, որ Հայկական հարցը լուծելու համար դիվանագիտական, քաղաքական միջոցներն անբավարար են: Որպէս Հայկական հարցի լուծման համար

մղվող պայքարի գործնական ձև՝ առաջ է քաշվում աշխարհի տարբերակներում թուրքապի դիվանագիտական աշխատողների ահաբեկչությունը՝ նոր պայմաններում ահաբեկչությունը դառնում է ազգային-ազատագրական պայքարի այն ձևը, որը պետք է Հայկական հարցը հանել փակուղուց եւ նորից դարձնել միջազգային հարաբերությունների օրակարգի հարց։

Ահաբեկչությունը, որպես ազգային-ազատագրական պայքարի ձև, հայ ժողովրդի համար նորություն չէր, այն կենսագործվել է ինչպես 19-րդ դարի վերջերին, այնպես էլ 20-րդ դարի սկզբներին։

Ահաբեկչական շարժումը սկիզբ է առնում 1973 թվականից։

1973 թ. հունվարի 27-ին ԱՄՆ-ի Սանտա-Բարբարա քաղաքում 73-ամյա Գուրգեն Յանիկյանը, որի ընտանիքի բոլոր անդամները զոհ էին դնացել 1915 թ. Մեծ եղեռնին, գնդակահարում է թուրքական հյուպատոսին եւ նրա օգնականին։ Մահափորձից առաջ Գ. Յանիկյանը 3 հարյուր ճանաչված Հայերի նամակ է գրում՝ առաջարկելով հետեւել իր օրինակին։ Այդ ահաբեկչական ակտի համար Գ. Յանիկյանը դատապարտվեց ցմահ բանտարկության։ Եվ իրոք Յանիկյանը բազմաթիվ հետեւորդներ ունեցավ։ 1975 թ. ապրիլի 4-ի նամակում Յանիկյանը գրում է. «Ուրախ եմ, որ ինձ հաջողվեց Արարատի գագաթից ձյունի բեկոր գլորել դեպի փեշերը, որը արդեն մեծանում է։ Ուրախ եմ, որ կարողացա արթնացնել քնածներին ու միացնել մեր ցեղը - իրենց ցանկության մեջ - տեսնել գազանը պատժված։ Ուրախ եմ, որ ինձ հաջողվեց թաղվելու պատրաստված մեր ազգի իրավունքները հանել գերեզմանից ու մաքրելով փոշուց, դնել մարդկության առաջ, որ հարցը լուծվի»։

Յանիկյանի օրինակին հետեւեցին մեծաքանակ երիտասարդներ, որոնք գենթը ձեռքին պայքարի դուրս եկան Հայկական հարցի լուծման համար։ Հայ ժողովրդուղը մտավ ազգային-ազատագրական պայքարի զինված փուլը։

Ստեղծվեց Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակը (ԱՍԱԼԿ-ն), որը կարեւոր ներդրում ունեցավ Հայկական հարցը միջազգային հարաբերությունների օրակարգ մտցնելու հարցում։ Այդ կազմակերպության ծրագրի առանցքը կազմում էր «Արեւմտյան Հայաստանի եւ բռնագրավյալ մյուս տարածքների» ազատագրումը։ «Մյուս տարածքներ» հասկացության տակ ՀԱՀԳԲ-ը նկատի ուներ Լեռնային Ղարաբաղի, Նախիջևանի եւ Ախալքալաքի ազատագրումը։ «Այս է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի միակ նպատակը, զոր իրագործելու համար ընտրած է զինյալ պայքարի ուղին» ասվում է այդ կազմակերպության ծրագրում։

Կենսական անհրաժեշտություն է, - գտնում է ՀԱՀԳԲ-ը, - որ նոր-

գալիս հայ ազատագրական պայքարը ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆԻ խորք, նկարագիր է բովանդակության ունենում... Մակայն հայկական բանագրությունը հայտնաբերվում է ինքնանպատակ երեւում չէ եւ պետք չէ, որ աղբյուրն ըլլա: Ազատագրումին անմիջապես պետք է որ հասնի ազատագրված հայրենի եւ Սովետական Հայաստանի միացումը, միաձուլումը: Թե որը որին կը միանա ավելի ճշգրիտ կրնա ըսել պատմական ավյալ պահը կամ իրավիճակը: Ինչպես նաեւ կրնա որոշել Սփյուռքի եւ Սովետական Հայաստանի մեջ ժողովուրդը միանալու: Բայց անհրաժեշտ է գիտակցել թե հայ ազատագրական պայքարը, որ համահայկական խորք ունի, քիչ էր նոր իրեն իրեն նպատակ ընտրել մեկ երկրորդ Հայաստանի մը անկողնում:

ՀԱՀԳԲ-ը հայ ժողովրդի թշնամիների շարքում էր գտնուում նաեւ այն գիտաթյուններին, որոնք տանդակում էին Թուրքիային: Դրանով է բացատրվում, որ այդ կազմակերպության գործադրությունների մի մասը ուղղված էր Թուրքիայի գետնաթյուններին դեմ:

Այսպիսով, ՀԱՀԳԲ-ը հայկական հարցի բանձման համար մղվող պայքարի մեջ նոր որակ է մտցնում: Ժամանակ հարցի գլխամեկական-բազմական բանձման հարաբերությունները որդեգրում է գլխավոր պայքարի մեկ-մեկը՝ ահաբեկչությունը: Հարց նորապեւ լրիվոր ազգաբնակչության պայքարի հիմնական մասը գտնուում է ահաբեկչությունը:

ՀԱՀԳԲ-ը իր գործունեությունն սկսում է 1975 թ. հունվարին: Ահաբեկչությունն ահաբեկչական շարունակվում է մինչև ԽՍՀՄ-ական թմականների ինքնաշարժ:

ՀԱՀԳԲ-ը ահաբեկչական գործադրություններ է կազմակերպում Բեյրութում, Ալեքսանդրիայում, Մոսկվայում, Թուրքիայում Ժնևում, Զյուրիխում, Կոպենհագենում, Միլանում, Համբուրգում, Փարիզում, Մադրիդում, Կանադայում եւ ԱՄՆ-ում: Ընդ որում, Թուրքիայում եւ Լիբանանում ՀԱՀԳԲ-ի ահաբեկչությունները մեծ ցիլ են կազմում:

Թուրքիայում զուտի կորուստներ ունեցան, զոհեր ավելց նաեւ ՀԱՀԳԲ-ը 1983 թ. հետերին ՀԱՀԳԲ-ը պառակտվում է Անժամպանները ասեղանում են ՀԱՀԳԲ - հեղափոխական շարժումը կազմակերպությունը:

1975 թ. հեղափոխական սկսում է գոյություն: Հայկական ցեղասպանության Արդարության մարտիկները կազմակերպությունը որը նույնպես լայնածավալ ահաբեկչական գործադրություններ է իրականացնում, բայց ուղղված միայն Երևան գլխամեկականների եւ Թուրքիայի կառավարական հաստատություններին դեմ:

1983 թ. հեղափոխական 22-ին վերանայում այս խմբի անդամների կազմից պարզվում է Ալեքսանդրիայում Թուրքիայի գետնաթյուն Գործադրությունը ան-

միջապես հետո հրապարակվում է կազմակերպության առաջին հաղորդագրությունը, որում հատկապես ընդգծված էր հետեւյալ միտքը. «Մենք հայ ժողովրդի զավակներն ենք: Գործում ենք հանուն արդարության: Թուրքիայի քաղաքական ներկայացուցիչների դեմ մեր արարքը աշխարհ բոլոր մեծ ու փոքր պետություններին պիտի հիշեցնի, թե հայոց մռայլված ցեղասպանությունը անպատիժ է մնում»:

Արդարության մարտիկների կազմակերպությունը պահանջում էր Հայոց ցեղասպանության ճանաչում եւ Հայկական հարցի լուծում:

Կազմակերպությունը գտնում էր, որ Հայկական հարցի լուծման համար խաղաղ միջոցներով մղված պայքարը իրեն սպառել է, որ ստեղծված իրավիճակում «Մեր արդար դատի հետապնդման միակ միջոցը զինյալ պայքարն է»:

ՀԾԱՄ-ի կազմակերպությունը գործեց մինչեւ 1983 թվականը, որի ընթացքում կազմակերպեց մեծ թվով ահաբեկչական գործողություններ՝ Վիեննայում, Փարիզում, Վատիկանում, Մադրիդում, Ամստերդամում, Շվեյցարիայում, ԱՄՆ-ում, Ավստրիայիայում, Կանադայում, Պորտուգալիայում, Բուլղարիայում, Կոպենհագենում, Լիսաբոնում եւ Հարավսլավիայում: Նշված մի քանի երկրներում կազմակերպվում են մեկից ավելի ահաբեկչական գործողություններ:

1983 թ. կեսերից Հայկական ցեղասպանության Արդարության մարտիկներ կազմակերպությունը վերանվանվեց Հայ հեղափոխական բանակ, որը գործեց մինչեւ 1985 թ. կեսերը: Հայ հեղափոխական բանակը իր գոյության ընթացքում կազմակերպում է մի քանի ահաբեկչական ակտ, որոնց մեջ աչքի է ընկնում հատկապես Լիսաբոնի անձնասպանական գործողությունը: 1983 թ. հուլիսի 27-ին հինգ երիտասարդներ պայթուցիկ նյութերով բռնված ավտոմեքենան քլում են Լիսաբոնի թուրքական դեսպանատան դարպասից ներս, պայթեցնում դեսպանատան շենքը եւ իրենք էլ զոհվում են շենքի փլատակների տակ:

Այդ կազմակերպության կոչերից մեկում՝ ուղղված «Բոլոր կառավարություններին, համաշխարհային հասարակայնությանը եւ մամուլին» ասվում է. «Մենք այժմ որոշել ենք պայթեցնել Հայկական հարցի չուրլ ստեղծված լուծության շենքը, թող մենք մնանք փլատակների տակ: Անձնասպանություն չէ այս, ոչ էլ խելագարություն, այլ մեր զոհողությունը՝ ազատության Բազինին»:

Որոշ տեղեկությունների համաձայն, ՀԾԱՄ-ը եւ ՀՀԲ-ը ստեղծվել են Հ.Հ.Դաշնակցության կողմից կուսակցության 20-րդ համագումարի (1972թ.) որոշումների հիման վրա: Սակայն այդ իրողությունն ապացուցող փաստաթղթեր պատմաբանների տրամադրության տակ չկան:

Բացի վերահիշյալ կազմակերպություններից Սփյուռքում աճյալ ժամանակաշրջանում գործել են մի շարք ընդհատակյա հայկական ահաբեկչական կազմակերպություններ եւս, որոնք պայքարում էին Հայկական հարցը վերականգնանացնելու համար: Դրանց թվին են պատկանում Հայկական զեմոկրատական շարժումը, Հայկական գործի պաշտպանության կոմիտեն, Հայաստանի ազատագրության կազմակերպությունը, Հայկական եղեռնի վրիժառուության կոմանդոսը, Հայաստանի գաղանի բանակը, Հայկական ազատագրական բանակ կազմակերպությունը, Հայկական հանրապետության բանակը, Հայ ազգային շարժումը, Ժողովրդային շարժումը, ՀԱՀԳԲ-ի համակիր մարքախտ խումբը եւ Հայ պարտիզանները:

Հիշատակված կազմակերպությունները եղել են գաղանի, այդ պատճառով էլ նրանց գործունեությունը բնութագրող արժանաւաճառ փաստաթղթեր գրեթե չկան: Անգամ կազմակերպությունների անվանումները չէրտորեն հայանի չեն, գրանք քաղված են օտարերկրյա թերթերից:

Եվ ընդհանրապես, նորագույն շրջանի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը զեռ ուսումնասիրված չէ: Այդ պատմությունն ունի բազմաթիվ չլուծված պրոբլեմներ եւ վիճելի հարցեր, որոնց լուստարանումը բաժին է ընկնելու ապագա պատմաբանին:

Սակայն, անկախ բազմաբնույթ վիճահարույց հիմահարցերից, մի բան անկասկած է. ահաբեկչական կազմակերպությունները հասան իրենց նպատակին:

Հայ Ժողովրդի պատմության նորագույն շրջանում, երբ թվում էր, թե Հայկական հարցը մոռացվել է, երբ շատերը արգեն խոսում էին Սփյուռքի վերացման մասին, հայ Ժողովուրդը վերսկսեց Հայկական հարցի համար մղվող զինված պայքարը: Հայ Ժողովուրդը մեկ անգամ եւս ցույց տվեց, որ ազգային գաղափարախոսությունը ազգի արյան մեջ է, քանի գոյություն ունի ազգը՝ գոյություն կունենա նաեւ ազգային գաղափարախոսությունը: Սփյուռքահայ երիտասարդները, որոնցից շատերը չէին տիրապետում կամ շատ վատ էին տիրապետում մաքենի լեզվին, ղեկավարվելով արյան կանչով, նախնիների կանչով, մահն աչքի տակ առած, պայքարի գուրտ եկան Արեւմտյան Հայաստանը ազատագրելու համար:

Անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տարածաշրջաններ են գոյություն ունեցել այդ կազմակերպությունների միջեւ, որ կուսակցությանն են հարել, ինչ գաղափարախոսություն են գաղանել, բոլոր այն երիտասարդները, որոնք գենքը ձեռքին պայքարել են կորցրած Հայքենիքի ազատագրման համար, որպես ազգային հերոսներ, իրենց արժանվոյն անգն են գրաւել հայց նորագույն պատմության մեջ:

Սփյուռքահայ երիտասարդության անձնագրով ահաբեկչական պայքարի շնորհիվ Հայկական հարցը դուրս եկավ մոռացության շրջանից և նորից միջազգային ճանաչում գտավ:

Հայկական հարցի և հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ձեռք բերվեցին զգալի հաջողություններ, որոնք շատ ավելի մեծ կարող էին լինել, եթե Սփյուռքը միասնական լիներ և Խորհրդային Հայաստանն էլ հանդես գար որպես պահանջատեր:

Ռազմական նոր մարտավարության շնորհիվ Հայկական հարցը սկսեց լայնորեն քննարկվել մամուլում, տարբեր պետությունների պառլամենտներում և կառավարություններում: Դեռ ավելին, Հայկական հարցով և հայոց ցեղասպանությամբ սկսեցին զբաղվել նաև միջազգային կազմակերպությունները:

Մոռացության տրված Հայկական հարցը նորից է հրապարակ գալիս, նորից է դառնում միջազգային առյանների և մեծ տերությունների ջրնարկումների հարց: Ընդ որում, Թուրքական իշխանությունները մեծ աշխատանք են ծավալում Թույլ չտալու համար, որպեսզի Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը ճանաչում գտնեն միջազգային առյանների և մեծ տերությունների կողմից:

1973թ. սեպտեմբերի 16-ին Ժնևում տեղի են ունենում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնաժողովի 28-րդ նստաշրջանը, որի ընդունած որոշման մեջ արձանագրված է հետևեալը. «Անցնելով արդի փուլին, կարելի է հիշել բավականին առատ վկայությունների գոյությունը, որոնք ապացուցում են հայերի կոտորածը, որը նկատվում է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը»:

Թուրքիան հանդես եկավ որոշման այդ կետի դեմ: Հետևյալ տարիներին այդ հարցը մի քանի անգամ քննարկվեց: Ի վերջո, 1985թ. ընդունված որոշմամբ 1915-1916թթ. հայերի ջարդը Օսմանյան Թուրքիայում որակվեց որպես ցեղասպանության օրինակ:

1975 թվականից ԱՄՆ-ի կոնգրեսը բազմիցս քննարկել է հայերի ցեղասպանությունը դատապարտող բանաձևեր, սակայն ԱՄՆ-ի վարչակարգի ճշման տակ այդ բանաձևերը մերժվել են Սենատի կողմից: Չնայած դրան, ԱՄՆ-ի Կալիֆոռնիա շտաբում 1990 թվականին ապրիլի 24-ը հռչակվել է «Հայկական եղեռնի զոհերի հիշատակի օր»:

1983թ. օգոստոսին Կանադայում հրավիրված Օկեդոնցիների համաշխարհային խորհուրդը ճանաչեց 1915թ. հայոց ցեղասպանությունը և դիմեց ՄԱԿ-ին՝ կոչ անելով ընդունել այդ փաստը:

1984թ. ապրիլի 16-ին Փարիզում տեղի ունեցավ Ժողովուրդների մըլ-

սական դատական առյուծի հայտնի ցեղասպանությանը նվիրված հատուկ հասարակական, որը ընդունեց հետևյալ որոշումը:

Առաջինը գտնում է, որ:

1. Հայ ազգաբնակչությանը կազմել է եւ կազմում է մի ժողովուրդ, որի հիմնարար իրավունքները՝ թե անհատական, թե հավաքական, պետք է հարգվեն եւ պետք է հարգվեն միջազգային իրավունքին համապատասխան:

2. Հայ ազգաբնակչության խմբերի բնաջնջումը բռնադատման եւ զանգվածային ջարդերի համապարհով հանդիսանում է ցեղասպանության անցագործության ոչ ենթակա Յեղասպանության անցագործությանը կանխելու եւ պատժելու մասին 1948թ. դեկտեմբերի 9-ի Կոնվենցիայի կարգադիր սահմանումների չբռնականորեն Սույն անցագործությանը դատապարտելու առումով վերը հիշատակված Կոնվենցիան նկատի ունի այդ պահին գործող օրենքը եւ հաշվի է առնում նախկինում ուժի մեջ եղող կանոնները, որոնք գոյություն ունեին ամբողջական անցագործական կատարման ժամանակ:

3. Յուրաքանչյուրի կառավարությանը մեղավոր է այս ցեղասպանության համար, նկատի ունենալով 1915-ից 1917 թթ. ընթացքում կատարվածը:

4. Հայերի ցեղասպանությանը նաեւ միջազգային անցագործությանն է, որի համար պետք է պատասխանատվության կրի թուրքական պետությանը, առանց պատրվակելու այն հանգամանքը, թե նախկին ու ներկա պետությանների միջեւ հաջորդականության չկա՝ պատասխանատվությանն է խուսափելու համար:

5. Այդ պատասխանատվությանը առաջին հերթին պահանջում է պաշտոնական ճանաչել ցեղասպանության իրողությունը եւ հայ ժողովրդի կրած համապատասխան կորուստները:

6. Միաժամանակ Ազգերի կազմակերպությանը եւ նրա յուրաքանչյուր անդամը իրավունք ունի պահանջելու այս ճանաչումը եւ դրանում ակտիվ ցուցաբերել հայ ժողովրդին:

1986 թվականին Ազգնախնայության ազգային կոնգրեսը եւ Ուրուգվայի պառլամենտը Օսմանյան թուրքության հայերի ցեղասպանությանը դատապարտող որոշումներ ընդունեցին:

Լողանի կոնֆերանսից հետո Հայկական հարցի համար մղվող պայքարում ամենախոշոր հաջողությունը ձեռք է բերվում 1987 թվականին:

Սփյուռքական պառլամենտը 1987թ. հունիսի 18-ին բանաձև է ընդունում Հայկական հարցի քաղաքական լուծման մասին, որի անցադրը ընթացողին ենք ներկայացնում ամբողջականորեն:

ՎՊ. Հայկական հարց

A 2-33/87

Եվրոպական պառլամենտը՝

- Նկատի ունենալով սոցիալիստների խմբի անունից պր. Սաբիի եւ մյուսների կողմից ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի քաղաքական լուծման մասին (փաստաթուղթ 2-737/84թ.)։

- Պր. Կոլոկոտրոնիսի ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի եւ ապրիլի 24-ը Հայկական ցեղասպանության հիշատակի օր հայտարարելու մասին (փաստ. B 2-380/85թ.)։

- Եվրոպական պառլամենտի քաղաքական հանձնաժողովի զեկուցագիրը (փաստ. A 2-33/87թ.)։

Ա. Հաշվի առնելով՝

- Պր. Ժակեի եւ նրա համախոհների ներկայացրած առաջարկությունը հայ ժողովրդի կացության մասին (փաստ. 1-782/81թ.)։

- Սոցիալիստների խմբի անունից տիկ. Դյուպորի եւ պր. Գլինի ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի քաղաքական լուծման մասին (փաստ. 1-735/83թ.)։

- Տիկ. Դյուպորի գրավոր հարցումը Հայկական հարցի մասին։

- Եվրոպական խորհրդի մշակութային գործերի մինիստրների խորհրդակցության 1986թ. նոյեմբերի 13-ին ընդունած որոշումը, որը վերաբերում է եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանությանը՝ ներառյալ ԾՏՀ [Եվրոպական Տնտեսական Համագործակցության երկրների] տարածքից դուրս գտնվող հուշարձանները։

Բ. Համոզված լինելով, որ Թուրքիայում բնակվող հայ ժողովրդի պատմության ճանաչումն իսկ ենթադրում է նրա ինքնության ճանաչումը որպես էթնիկական, մշակութային, լեզվական եւ կրոնական փոքրամասնություն։

Գ. Նկատի ունենալով, որ հայերը այդ իրադարձությունները [1915թ. կոտորածները] որակում են որպես կաշակերպված ցեղասպանություն՝ համաձայն ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի։

Դ. Նկատի ունենալով, որ Թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը որպես անհիմն։

Ե. Հաստատելով, որ Թուրքական կառավարությունը, մերժելով մինչեւ օրս ճանաչել 1915 թվականի ցեղասպանությունը, չարունակում է այդպիսով գրկել հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից։

Զ. Նկատի ունենալով, որ պատմականորեն ապացուցված Հայկական ցեղասպանությունը մինչեւ այժմ ոչ ենթարկվել է քաղաքական դատապարտման եւ ոչ էլ ստացել է համապատասխան հատուցում։

Ը. Նկատի ունենալով, որ Թուրքիայի կողմից Հայկական ցեղասպանության ճանաչումը այսուհետեւ կդիտվի որպես հայերի նկատմամբ բարո-

յական իրավունքի վերականգնման խորապես մարդկային ակա, որը միայն պատիվ կարող է բերել թուրքական կառավարությանը.

Ը. խորապես ակառուցիկ հայտնելով եւ դատապարտելով 1973-ից 1988 թվականների ընթացքում հայկական խմբավորումների անիմաստ ահաբեկությունը, ինչպես նաեւ բազմաթիվ մահափորձերը, որոնց հետեւանքով զոհվեցին կամ վիրավորվեցին բազմաթիվ անմեղ մարդիկ, ինչը դատապարտվեց հայ ժողովրդի ճնշող մեծամասնության կողմից.

Թ. նկատի ունենալով, որ բոլոր իրարահաջորդ թուրքական կառավարությունների անհաշտ դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ ոչ մի կերպ չի նպաստել լարվածության թուլացմանը.

1. Այն կարծիքն է հայտնում, որ Հայկական հարցը, ինչպես նաեւ թուրքիայում ազգային փոքրամասնությունների հարցը պետք է քննարկվեն թուրքիայի եւ Եվրոպական տնտեսական համագործակցության միջեւ գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում. ընդգծում է, որ դեմոկրատիան կարող է արմատապես հաստատվել մի երկրում այն պայմանով միայն, եթե այդ երկիրը ճանաչի եւ հարստացնի իր պատմությունը իր էթնիկական եւ մշակութային ալլազանությամբ:

2. Գտնում է, որ ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-1917 թվականներին Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն Վեդապանության հանցագործությունը կանխելու եւ դրա համար պատժելու մասին կոնվենցիայի, ընդունված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 9-ին:

Նշում է միաժամանակ, որ ժամանակակից թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար եւ ամենայն հաստատակամությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը բազմապայմանության առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որեւէ պահանջի այսօրվա թուրքիայի նկատմամբ:

3. Գահանջում է [Եվրոպական] խորհրդից ճնշում գործադրել ներկայիս թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915-1917 թվականների հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը եւ այդպիսով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը թուրքիայի եւ հայերի լիազոր պատվիրակների միջեւ:

4. Ելնում է նրանից, որ հայ ժողովրդի դեմ անցյալում երիտթուրքական կառավարության կողմից գործադրած ցեղասպանության մերժումը ներկայիս թուրքական կառավարության կողմից, Հունաստանի հետ գոյություն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրավական նորմերի

կիրառումից հրաժարումը կիպրոսում, Թուրքական օկուպացիոն զորքերի պահպանումը, ինչպես նաև քրդական իրադարձությունների ժխտումը, այդ երկրում [Թուրքիայում] իսկական պառլամենտար դեմոկրատիայի բացակայությունը, անհատական, հասարակական ու հատկապես կրոնական ազատությունների ոտնահարումը՝ այս ամենը հանդիսանում են անհաղթահարելի արգելքներ Օվրոպական Տնտեսական Համագործակցության կազմի մեջ Թուրքիայի հնարավոր ընդունման հարցի քննարկման համար:

5. Նկատի ունենալով տեղի ունեցած [հայ ժողովրդի] ողբերգությունը, միանում է ազգային ինքնատիպությունը զարգացնելու նրա ցանկությունը, երաշխավորելու իր իրավունքները որպես փոքրամասնություն եւ անարգել օգտվելու մարդու եւ քաղաքացիների իրավունքներից, ինչպես որ դրանք սահմանված են Մարդու իրավունքների Օվրոպական կոնվենցիայի դրույթներում ու նրա համապատասխան արձանագրություններում:

6. Վճռականորեն պահանջում է, որ Թուրքիայում ապրող հայ փոքրամասնության ազգային ինքնության, նրա լեզվի, կրոնի, մշակույթի եւ կրթության համակարգի նկատմամբ ցուցաբերվի արդար վերաբերմունք, նաեւ հաստատակամորեն հանդես է գալիս [պատմական] հուշարձանների պահպանության գործի բարելավման, այդ թվում նաեւ՝ Թուրքահայերի կրոնական-ճարտարապետական ժառանգության պահպանման ու կոնսերվացման օգտին եւ ցանկություն է հայտնում, որպեսզի Օվրոպական տնտեսական համագործակցությունն ուսումնասիրի այդ նպատակին օժանդակող հնարավոր միջոցներ ձեռնարկելու հարցը:

7. Այս կապակցությամբ կոչ է անում Թուրքիային անշեղորեն պահպանել իր երկրում ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքները, ինչպես որ այդ պարտադրում են նրան 1923թ. Լոզանի պայմանագրի 37-45-րդ հոդվածները, ստորագրված Օվրոպական տնտեսական համագործակցության անդամ պետությունների մեծամասնության կողմից:

8. Համարում է, որ հուշարձանների պահպանությունը, ինչպես նաև Թուրքահայերի կրոնական ճարտարապետական ժառանգության պահպանումն ու կոնսերվացումը պետք է դիտել որպես Թուրքիայի տարածքում դարերի ընթացքում զարգացում ապրած բոլոր քաղաքականությունների՝ մասնավորապես կայսրության մասն կազմած չրիստոնյա փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանը ուղղված լայն քաղաքականության բաղկացուցիչ մաս:

9. Կոչ է անում այսպիսով Օվրոպական տնտեսական համագործակցությանը տարածել Թուրքիայի հետ համագործակցության համաձայնությունը նաեւ մշակութային ասպարեզի վրա՝ այդ երկրում չրիստոնեական կամ այլ՝ ինչպես օրինակ՝ դասական անտիկ շրջանի, խեթական, օսմանյան

և այլն քաղաքակրթությունների ժառանգությունը պահպանելու նպատակով:

10. Իր մտահոգությունն է հայտնում այն դժվարությունների առթիվ, որոնց առնչվում է Իրանի հայ համայնքը մայրենի լեզվի գործածության և կրոնական կանոնների համապատասխան կրթության գործը կազմակերպելու հարցերում:

11. Հանդես է գալիս ընդդեմ Խորհրդային Միությունում հայ ազգաբնակչության անհատական ազատությունների խախտումների:

12. Վճռականորեն դատապարտում է այն բոլոր բռնի գործողություններն ու անաբեկչության ձեւերը, որոնք ի գործ են դրվում առանձին կազմակերպությունների կողմից և հատկանշական չեն հայ ժողովրդի համար, և հաշտության կոչ է անում հայերին ու թուրքերին:

13. Կոչ է անում Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ երկրներին՝ հռչակելու ՉՕ-ը դարձնել գործադրված ցեղասպանությունների և մարդկության դեմ ոճրագործությունների հիշատակի օրը, մասնավորապես զոհ գնացած հայերի ու հրեաների:

Վավերացնում է իր պարտավորությունը՝ իրապես նպաստելու այն նախաձեռնություններին, որոնց նպատակն է հայ և թուրք ժողովուրդների միջև բանակցությունների իրականացումը:

14. Հանձնարարում է իր նախագահին՝ սույն բանաձեւը փոխանցելու (Եվրոպական պառլամենտի քաղաքական) հանձնաժողովին, Եվրոպական խորհրդին, Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ-երկրների արտաքին գործերի մինիստրների Խորհրդակցությանը, «ԵՏՀ-Թուրքիա» ընկերակցության խորհրդին, ինչպես նաև թուրքական, իրանական և խորհրդային կառավարություններին և ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին»:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հայկական Հարցի հետապնդման բնագավառում ձեռք բերվեցին ակնառու հաջողություններ: Անհրժեքի իրողություն է այն փաստը, որ Հայկական Հարցը շնորհիվ նոր ռազմաքաղաքական մարտավարության հանվեց մոռացության չրջանից և դարձավ միջազգային հարաբերությունների, հասարակական, քաղաքական, մշակութային, կրոնական կազմակերպությունների և պետությունների գործունեության օրակարգի հարց:

Եվրոպառլամենտի որոշումից հետո, Սփյուռքահայությունը աշխատանքներ էր տանում Հայկական Հարցը ՄԱԿ-ում բարձրացնելու համար:

Սակայն 1990-1991 թվականներին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները՝ Հայաստանի Հանրապետության հռչակումը, արժատապես փոխեցին իրավիճակը:

Հայոց նորաստեղծ պետականության գոյության պայմաններում Հայ-

կական հարցի իրավատեր էր դառնում Հայաստանի անկախ հանրապետությունը:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

1988 թ. փետրվարից հայ ժողովուրդը մտնում է իր պատմության նոր փուլը: Խորհրդային Միությունն արագորեն քայքայվում էր: Ազգային եւ սոցիալական այն հիմնահարցերը, որոնք բուլղեղիկյան դիկտատուրայի պայմաններում ռազմական հզոր մեքենայի օգնությամբ պահվում էին ճգմված վիճակում, ամբողջ երկրով մեկ սկսեցին առաջ քաշվել: Այդ պրոբլեմները պահանջում էին արմատական լուծումներ: Մոսկվան ի վիճակի չէր կարգավորելու այդ պրոցեսները: ԽՍՀՄ-ը նմանվում էր հրաբուխի:

Հայաստանում սկսվեց ազգային-ազատագրական հզոր շարժում: Հայոց համաժողովրդական շարժման նպատակը Լեռնային Ղարաբաղի վերամիավորումն էր Մայր Հայրենիքի հետ եւ անկախ պետականության վերականգնումը: Հայոց համաժողովրդական շարժումը պատմության մեջ մտավ Ղարաբաղյան շարժում անունով:

Հայոց ազգային-ազատագրական շարժումը որպես առանցքային հիմնախնդիրներ առաջ քաշեց նաեւ Հայկական հարցի, Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության պաշտոնական ճանաչման եւ 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը չեղյալ համարելու պահանջը:

70 տարվա հարկադրական ընդմիջումից հետո, հայ ժողովուրդը նորից հանդես է գալիս Հայկական հարցի լուծման պահանջով:

Դեպքերը զարգանում էին սրենթաց արագությունով:

1988 թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունեց օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին»: ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը առաջարկություններ կապազեց խՍՀՄ Գերագույն խորհրդին՝ Օսմանյան կայսրությունում հայերի 1915 թվականի ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու մասին: Ապրիլի 24-ը հայտարարվեց հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ստեղծեց հանձնաժողով բոլոր հակահայկական պայմանագրերը եւ մասնավորապես 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական եւ նրա կրկնօրինակը հանդիսացող, Հայաստանին պարտադրված հոկտեմբերի 13-ի պայմանագրերը ապօրինի հայտարարելու մասին

որոշման նախագիծ պատրաստելու համար Այդ հանձնաժողովի կողմից կազմվեց «ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կոմկապյան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 5-ի որոշումը անօրինական ճանաչելու մասին» որոշման նախագիծ, որը ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունեց 1990 թվականի փետրվարի 13-ին:

ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը անօրինական ճանաչեց ՌԿԿ Կենտկոմի Կոմկապյան բյուրոյի այն որոշումը, որով Լեոնային Ղարաբաղը նվիրաբերվել էր Ադրբեյջանին: Տողերիս հեղինակը եղել է այդ հանձնաժողովի անդամ:

ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը եւ Լեոնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը 1989 թ. դեկտեմբերի 1-ին հռչակեցին Հայաստանի եւ Լեոնային Ղարաբաղի վերամիավորումը:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը լուծում էր իր առջև ծառացած ազգային խնդիրները: Հայկական հարցը, ինչպես տեսնում ենք, գտնվում էր ազատագրական շարժման ուշադրության կենտրոնում:

1990 թ. օգոստոսին Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրությունների ժամանակ հաղթանակ տարավ Հայոց համազգային շարժում կազմակերպությունը: Օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով հռչակվեց «անկախ պետականության հաստատման գործընթացի օկիզբը»:

Խորհրդային Հայաստանն անցավ պատմության գիրկը:

1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց հանրաքվե հետեւյալ հարցադրմամբ. «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն, ԽՍՀՄ-ի կազմից դուրս»: Քվեարկությանը մասնակցեց ընտրողների 95,0 տոկոսը: Անկախության օգտին քվեարկեց ընտրողների 94,39 տոկոսը:

1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց հետեւյալ որոշումը.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հավատարիմ մնալով «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին, հենվելով մարդու իրավունքների եւ ազգերի ինքնորոշման միջազգային նորմերի վրա, նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակարգ, հիմք ունենալով 1991 թ. սեպտեմբերի 21-ի ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին անցկացված հանրաքվեի արդյունքները, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակում է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Դա պատմական ակտ էր: Հայ ժողովուրդը մեծ հաղթանակ տարավ: Վերականգնվեց 70 տարի առաջ կորցրած անկախ պետականությունը:

Իշխանության դեկլանացավ Հայոց համազգային շարժում կազմակերպությանը, որը վերանվանված Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն էր:

Սակայն, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման եւ Հայոց համազգային շարժում կազմակերպության ոչ տակտիկական եւ ոչ էլ ստրատեգիական խնդիրները Հայկական հարցում չէին համընկնում:

Դեռ 1988 թ. օգոստոսի 19-ին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն տարածում է մի թուուցիկ «Հայոց համազգային շարժում» խորագրով, որում ասվում էր. «Շարժման շրջանակների լայնացումը, նրանում նորանոր խնդիրների ընդգրկումը, ինչպես եւ բազմաթիվ մարդկանց՝ գործունե մասնակցությունը ունենալու պատրաստակամությունը մեզ բերել է այն համոզման, որ անհրաժեշտ է շարժմանը տալ կազմակերպական ավելի հստակ ձև: Այդ նպատակով Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն ձևափոխվում է Հայոց համազգային շարժում կազմակերպության ստեղծմանը, զուգահեռաբար, մինչև Հայաստանի եւ Արցախի վերամիավորումը պահպանելով նախկին՝ Ղարաբաղյան շարժում անունը»:

Այս փաստաթղթում առաջին անգամ ձևակերպվում են նոր ստեղծվելիք կազմակերպության «գաղափարական սկզբունքները» եւ «մոտակա նպատակները»:

«Հայոց համազգային շարժման գաղափարական սկզբունքները» վերնագրի տակ մի շարք հարցերի հետ միասին առաջ են քաշվում նաեւ հետեւյալ թեզերը.

«4. Հայ ժողովուրդն իր ազգային ծրագրերն ընդունելիս պետք է ապավինի իր ուժերին, հույս չդնի ուրիշի հովանավորության վրա: Ամեն մի հակառակ պնդում ժխտվում է պատմական փորձով եւ ծառայում է մեր ժողովրդին հոգեկան ստրկության մեջ պահելու գործին: Ստրկամտության արտահայտություն է մասն այն մտայնությունը, ըստ որի՝ ազգն ունի մշտական քարեկամ եւ մշտական թշմամի»:

«5. Մեմֆ մերժում եմք անբարոյական եւ մեր ազգի համար անպտուղ այն ֆաղափականությունը, որը մի կողմից, իբրեւ «գիվանագիտություն» ենթադրում է հավատարմության ամտեղի հավաստիացումներ եւ համաժողովրդական իրենց մամբ այլ ժողովրդի մկատմամբ, մյուս կողմից՝ պահանջում է թշմամություն ֆարոգել մյուս ժողովուրդների կամ կրոնների դեմ»:

7. Ներկայումս ժողովուրդների փոխհարաբերություններում ազգային պետական շահերը շատ ավելի մեծ դեր են խաղում, քան կրոնական ընդհանրություններն ու տարբերությունները: Սրբազան պատերազմների ժամանակաշրջանը վաղուց անցել է: Կորցրել եմ իրենց ֆաղափական ուժը

ման այն գաղափարախոսությունները, որոնց մպատակն է մեկ պետության մեջ վերամիավորել միեւնույն ծագում ունեցող ժողովուրդներին (պամթուրքիզմ, սրաքական միասնություն, պամսլավոնիզմ եւ այլն), քանի որ այժմ միջպետական հարաբերություններում մկատելի է ոչ թե էթնիկական կամ կրոնական ընդհանրությունների, այլ տնտեսական, գաղափարախոսական եւ ռազմական շահերի գիտակցումը»:

Այս փաստաթղթով հայ ժողովրդի՝ Ռուսաստանի օգնությամբ թուրքական եղեռնից փրկվելու, Ֆիզիկական գոյությունը պահպանելու իրաւունական քաղաքականությունը հայտարարվեց «անբարոյական» եւ «համաժողովրդական քննաքն», իսկ պանթուրքիզմը՝ քաղաքական ուժը կորցրած գաղափարախոսություն»:

Ստեղծվեց ալն միանգամայն սխալ հակապատմական տեսությունը, որի հիման վրա ծավալվեց հակառուսական հիատերիան եւ թուրքիայի նա հարաբերությունները բարեկալելու անհեռանկար քարոզչությունը:

Սակայն Ղարաբաղյան շարժման այս փուլում Ղարաբաղյան կոմիտեն ոչ միայն չհամարձակվեց հրապարակայնորեն հրաժարվել Հայկական հարցից, այլ ընդհակառակը, հիշյալ փաստաթղթի «Հայոց համագգային շարժման մոտակա նպատակները» բաժնում ամրագրեց հետեւյալը.

1. «Հասնել այն բանին, որ Հայկական ԽՍՀ եւ ԽՍՀՄ Գերագույն Սովետներն ընդունեն 1915 թվականի հայերի ցեղասպանության փաստը եւ դիմեն ՄԱԿ-ին՝ այդ փաստը ճանաչելու պահանջով»:

2. «Մշտապես առաջ քաշել պատմականորեն Հայաստանի մաս կազմող, ինչպես նաեւ միջազգային փաստաթղթերով հայկական ճանաչված տարածքների վերամիավորման պահանջը, գիտակցելով, որ այդ պահանջի իրականացումը հնարավոր է միայն այնպիսի ազգային քաղաքականությամ կիրառմամ շնորհիվ, որը հիմնված է մեր շարժման գաղափարական սկզբունքների վրա»:

Հայկական ցեղասպանության ճանաչման պահանջը ժողովրդի ճնշման տակ, ինչպես արդեն նշեցինք, նույն թվականի նոյեմբերի 22-ին ընդունեց դեռ կոմունիստական Գերագույն խորհուրդը: Իշխանության գլուխ գալուց հետո ՀՀԵԿ-ն չկատարեց իր իսկ առաջ քաշած պահանջը՝ հայկական ցեղասպանությունը ճանաչելու պահանջով ՄԱԿ-ին դիմելու մասին: Նման բայը ոչ թե պատահականություն է, ալ ծրագրավորված քաղաքականություն:

Հայկական հարցի վերաբերյալ Ղարաբաղյան կոմիտեն իր խաղաքարտերը բացեց շուրջ մեկ տարի հետո, 1989 թվականի կեսերին:

1989 թ. հունիսի 24-ին, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն Հանրապետության Գերագույն խորհրդի նիստում հանդես է գալիս մի ծրագրային հայտարարությամբ, որում որոշակիորեն ընգծվում են նրա ապագա ազգային-պետական քաղաքականության հիմնական ուղղությունները:

Այդ Հայտարարությունում, որը կարդաց Լեւոն Տեր-Պետրոսյանը, ասվում է: «Զմայած պատմական դառը փորձին, չմայած հայ ժողովրդի կրած քաղաքիվ հիասթափություններին, մեր որոշ մտավորական գործիչների կողմից շարունակվում է տեմդագին կերպով քարոզվել քաղաքականացն սնանկ և վտանգավոր այն մտայնությունը, որ Հայաստանը՝ շրջապատված լինելով այլակերտ-քշմամի ազգերով, իր գոյությունը կարող է պահպանել միայն որեւէ հզոր պետության հովանավորության շնորհիվ: Այս մտայնությունը մեր ժողովրդին մատնում է քարոյական ստրկության և զրկում մրան քաղաքական պարտնյոր դառնալու հմարավորությունից, որը քաղաքականության մեք հարողության հասնելու միակ երաշխիքն է:

Հայաստանի՝ որպես պանթուրիզմի ծրագրերի իրականացումը խափանող և դրանով՝ Ղուսաստանի շահերին ծառայող գործոնի ըմրոնումը Հայկական հարկը կրկին մերքաշում է միքազգային քաղաքական հարաբերությունների քարդ ոյորտը, որը հղի է մեր ժողովրդի նականագրի համար քախտորոշ հետեվանքներով: Թեեւ պանթուրիզմը, որպես քաղաքարախոսություն ապրելով իր ծաղկումը առաջին համաշխարհային պատերազմի ըմքացում, մերկայունս կորցրել է քաղաքական գործոնի իր քովանդակությունը, քամի որ թուրքալեզու ժողովուրդները բռնել են ազգային գարգացման ուղին, սակայն մրա դեմ ուղղված խաչակրաց արշավանքի կոչերը ըմդունակ են այն մորից վերածելու քաղաքական գործոնի և Հայաստանը դարձնելու պանթուրիզմի ու պամիսլամիզմի թիրախ:

Ղարաքաղյան շարժման Հայաստանի կումիտեն, ավելի քան մեկ տարի գլխավորելով համաժողովրդական շարժումը, սկզբից եւեթ մերժել է օտար հովանավորի վրա հույս դնելու և պանթուրիզմը որպես մշտական սպառնալիք դիտելու վնասակար մտայնությունը և հետեւողականորեն կնսագործել քաղաքական այն սկզբունքը, որ հայ ժողովուրդն իր ազգային իդներին հասնելու համար պետք է ապավինի միայն ու միայն սեփական ուժերին: Քաղաքական այդ ուղին տվել է իր ակնհայտ դրական արդյունքները, և արցախյան խնդիրը մերժման, բռնադատման փուլից դուրս բերել լուծման փուլ:

Իր արդարացի սահմանադրական պայքարի շնորհիվ Հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ դաշնակիցներ՝ ի դեմս միջազգային հասարակական կարծիքի, Մոսկվայի, Լենինգրադի, մերձքալթյան հանրապետությունների և այլ դեմոկրատական ուժերի: Դա նախ և առաջ Հայ ժողովրդի համազգային շարժման շոչափելի նպաստի գնահատումն է Խորհրդային Միության դեմոկրատացման պրոցեսում, և երկրորդ՝ արցախյան խնդրի արդարացի լուծման միակ գրավականը, որը մենք պարտավոր ենք փալփալել աչքի լույսի պես:

Գիտակցելով այս իրողությունը, արցախյան խնդիրը փակուղու ա-

ալ կանգնեցնելու ձգտող ուժերը հայ ժողովրդի դեմ նյութել են մի ահավոր դավ, որին այսօր կամա թե ակամա մասնակցում են որոշ հայ մտավորական գործիչներ: Պանթուրիզմի վտանգի եւ Թուրքիայի կողմից նվաճված հայկական տարածքների խնդրի արծարծումն այս պահին հետապնդում է միայն ու միայն մեկ մպատակ, հայ ժողովրդին մերկայացնելով որպես ռեւան-շիստներ, վարկաբեկել արցախյան արդարացի պահամըստիությունը եւ դրանով զրկել մրամ վերոհիշյալ դաշնակիցների համակրամից:

Այդ իսկ նկատառումով, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն խստագույնս դատապարտում է Հայկական հարցը միջազգային հարաբերությունների էտանագին խաղաքարտ դարձնելու հերթական փորձը եւ համոզմունք է հայտնում, որ մեր ազգային իղձերի իրականացման միակ ուղին երկրի դեմոկրատացման գործընթացի անշրջելիության ապահովումն է եւ հայ ժողովրդի միաբանությունը՝ հիմնված հայոց համազգային շարժման գաղափարական սկզբունքների վրա:

Այս ծրագրային փաստաթղթից հետեւում էր.

1. Հայ ժողովրդի պատմության վերջին 300 տարվա ազգային քաղաքականությունը եղել է սխալ, անհրաժեշտ է հրաժարվել հայերի ռուսական կողմնորոշումից:

2. Պանթուրքիզմը, որպես վտանգ հայ ժողովրդի համար դադարել է գոյություն ունենալուց, Վերցրել է քաղաքական գործոնի իր բովանդակությունը, փոխվել են թուրքալեզու ժողովուրդները, դեմոկրատացել, բռնել ազգային զարգացման ուղին:

3. Այդ պատճառով էլ պետք է մերժել օտար հովանավորի վրա հույս դնելու եւ պանթուրքիզմը որպես մշտական սպառնալիք դիտելու փասակար մտայնությունը:

4. Հայկական հարցը եւ պանթուրքիզմը արծարծելով, հայերը կվերականգնեն պանթուրքիզմը եւ պանիսլամիզմը, Հայկական հարցը բարձրացնելով հայերը կներկայանան որպես ռեւանշիստներ:

5. Այդ նույն ժամանակ ՀՀՇԿ-ն առաջ էր քաշել սկզբունքային համարվող հետեւյալ կարգախոսը՝ «Ստրկամտության արտահայտություն է նաեւ այն մտայնությունը, ըստ որի՝ ազգն ունի մշտական բարեկամ եւ մշտական թշնամի»: Այս կարգախոսով տեսական հիմք էր ստեղծվում անցյալը մոռանալու եւ Թուրքիայի հետ հարաբերությունները լավացնելու համար:

Այսպիսով, Հայոց համազգային շարժում կազմակերպությունը գրառում էր, որ՝

պանթուրքիզմը պատկանում է անցյալին, պետք է հրաժարվել ռուսական կողմնորոշումից, Հայկական հարցից, մոռանալ անցյալի թշնամությունը,

մոռանալ եղեռներ եւ կարգավորել հարաբերութիւնները Թուրքիայի հետ:

Հայկական հարցի ճանաչումը եւ Թուրքիայի հետ հարաբերութիւնների բարելավումը չէին համատեղվում, այդ պատճառով էլ ՀՀԾԿ-ն հրաժարվեց Հայկական հարցից:

Գալով իշխանութիւն գլուխ, բնականաբար, ՀՀԾԿ-ն չպետք է թույլ տար, որպեսզի Հայկական հարցը տեղ գտնի Հայաստանի Հանրապետութիւն պետական քաղաքականութիւն մեջ, պառլամենտի ընդունած կարեւորագույն փաստաթղթերում: Այդ խնդիրը ՀՀԾԿ-ն կատարեց հետեւողականորեն: Ոչ 1980 թ. օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի անկախութիւն մասին Հռչակագրում եւ ոչ էլ 1991 թ. սեպտեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետութիւն խորհրդարանի հայ ժողովրդին ուղղված դիմումում Հայկական հարցը տեղ չի գտել: Նույն հետեւողականութիւնը ՀՀԾԿ-ն պայքարում է, որպեսզի Հայկական հարցը տեղ չգտնի նաեւ Հայաստանի Հանրապետութիւն նոր ստեղծվող սահմանադրութիւն մեջ: Վերացվեց հակահայկական պայմանագրերը անօրինական համարելու համար ստեղծված վերահիշյալ հանձնաժողովը:

Բայց Հայկական հարցը պետական քաղաքականութիւն օրակարգից հանելու իրավունքը պատկանում է ոչ թե մի կուսակցութիւն, թեկուզ եւ իշխանութիւն գլուխ գտնվող, այլ ամբողջ հայ ժողովրդին:

Հենց այդ հանգամանքն էլ նկատի ունենալով՝ ՀՀ Նախագահը իր կուսակցութիւն երկրորդ համագումարում 1990թ. նոյեմբերի 25-ին հայտարարում է, որ Հայոց համագգային շարժում կազմակերպութիւնը չի հրաժարվում հայ ժողովրդի պատմական իրավունքներից եւ ցեղասպանութիւն միջազգային ճանաչման պահանջից, որ Հայկական հարցը պետական քաղաքականութիւն օրակարգի մեջ կմտնի ռմիայն այն ժամանակ, երբ հայոց պետութիւնը ի վիճակի կլինի սեփական ուժերով լուծելու այդ խնդիրը:

Այս հայտարարութիւնը տակտիկական նշանակութիւն ունի: ՀՀԾԿ ազգային պետական քաղաքականութիւնը ստրատեգիական առումով ոչնչացնում է Հայկական հարցի լուծման բոլոր լծակները:

Տեսնենք, թե դա ինչպես է կատարվում.

1. Նման քաղաքականութիւնը ՀՀԾԿ-ն նպատակ է հետապնդում ժամանակ չահել Հայկական հարցը վարկաբեկելու եւ ժողովրդի պատմական հիշողութիւնից հանելու համար:

2. Անվիճելի ճշմարտութիւն է՝ ապացուցված պատմութիւն փորձով, որ եթե Գաղափարը հանվում է օրակարգից, չի պրոպագանդվում, չունի կրող ու պաշտպան, նա մեռնում է: Հայկական հարցը հանվելով օրակարգից դատապարտվում է ոչնչացման:

3. Թուրքիան ունի Հայկական հարցի պետական կոնցեպցիա, որի գրառաքանդայով զբաղվում են մեծ թվով գիտական կենտրոններ: Թուրքիան միլիոններ է ծախսում Հայկական հարցի թուրքական կոնցեպցիան ամրոշել աշխարհում տարածելու համար: Արեւմտյան երկրների գրքերի լուկան հեղեղված է Հայկական հարցի թուրքական կոնցեպցիան պրոպագանդող աշխատություններով:

4. Իսկ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը մինչեւ այժմ չի ստեղծել Հայկական հարցի գիտահետազոտական կենտրոն՝ այդ կարիւր հիմնահարցը ուսումնասիրելու եւ պետակ սն կոնցեպցիա մշակելու համար:

Ցայտօր չի ստեղծված Հայաստանի Հանրապետության Հայկական հարցի պետական կոնցեպցիան, չի մշակված Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի գիտականորեն հիմնավորված տակտիկան եւ ստրատեգիան:

5. Այդպիսի պայմաններում Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը դադարեցնում է Հայկական հարցի համար մղվող պայքարը, հանում պետական քաղաքականության շրջանակներից եւ հայտարարում, որ Հայ դատը օրակարգի մեջ կմտնի միայն այն ժամանակ, երբ հայոց պետությունը ի վիճակի կլինի «սեփական ուժերով» լուծելու այդ խնդիրը:

6. Հայկական հարցը համաշխարհային քաղաքականության քաղկացուցիչ մասն է, որը սերտորեն առնչված է Ռուսաստանի եւ Թուրքիայի ու Պանթուրքիզմի դարավոր պայքարի հիմնախնդիրների հետ: Այդ պատճառով էլ Հայկական հարցը կարող է լուծվել միայն որպես այդ երկու քառանկյան ուժերի կռիւի արդյունք:

«Սեփական ուժերով» Հայաստանը երբեք ի վիճակի չի լինի լուծելու Հայկական հարցը, քանզի պատմական Հայրենիքը ազատագրելու համար անհրաժեշտ է ծնկի բերել Թուրքիային, մի բան, որը գործնականում անհնարին է:

7. Ահա թե ինչու, Լ. Տեր-Պետրոսյանի վերոհիշյալ հայտարարությունը սեփական ուժերով Հայկական հարցի լուծման մասին անհիմն է եւ չի կարող լրջորեն քննարկվել: ՀՀ Նախագահը այդ կարծիքը հրապարակ անելով պարզապես ցանկանում է ժամանակ չահել՝ Հայկական հարցը նենգափոխելու եւ մոռացության տալու համար:

8. Ամրապնդելով դիրքերը, Լ. Տեր-Պետրոսյանը 1993 թ. հունիսին ՀՀԵԿ 5-րդ համագումարում Հայկական հարցի իր ընդդիմախոսներին անում է հետևյալ հայտարարությունը. « ՀՀԵ-ի եւ ներկա իշխանությունների համար Հայ դատը այսօր հայոց պետականության կայացումն է. Հայաստանի բարգավաճումն ու հզորացումը, Լեռնային Ղարաբաղի հայապահպանումը: Յու-

րաքանչյուր սերունդ ազգի առջև ունի իր պարտքը: Եթե մեր սերնդին հաջողվի իրականացնել նշված ծրագիրը, նա իր պարտքը լիովին հատուցած կլինի:

ՀՀԵ-ն եւ Հայաստանի ներկա իշխանությունները իրենց առջև մշտապես դրել են միայն իրական եւ լուծելի խնդիրներ, եւ այսուհետեւ էլ մտադիր չեն շեղվելու այդ գործնականից: Պատրանքներն ու սնամեջ քաղաքական բաղձանքները միմիայն թունավորել են ազգի հոգին եւ հոխորտանքների ու սնապարծության թմրադեղով վարակել նրան թերաթեքության բարդույթով: ... Հայոց պետականության կայացման, Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման եւ ընդհանրապես ազգային գաղափարախոսության դրսևորման ընդերքում այսօր ընթանում է անհաշտ պայքար քաղաքական մտքի երկու ուղղությունների՝ պատմական իրավունքի վրա հիմնված ավանտյուրիզմի եւ ռեալ իրականության վրա հիմնված ռացիոնալիզմի միջև» : Այսուհետեւ նա համոզմունք է հայտնում. «որ պատմականությունը փոխարեն իրականությունը կդառնա մեր ազգային գաղափարախոսության հիմքը»:

ՀՀ նախագահի սույն տեսակետը մենք ընդգծում ենք, ընթերցողի ուշադրությունը նրա վրա կենտրոնացնելու նպատակով, որովհետեւ ընդամենը մի քանի ամիս հետո, 1994 թ. սկզբներին, Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարելու է, որ Ազգային գաղափարախոսությունը կեղծ քաղաքական կատեգորիա է:

ՀՀ նախագահի ելույթում հարցադրումը նենգափոխված է: Ազգային գաղափարախոսները ներկա փուլում պահանջում են՝ պետականորեն չհրաժարվել պատմական Հայրենիքից, ստեղծել Հայկական հարցի ուսումնասիրման կենտրոն, մշակել այդ հիմնահարցի ազգային-պետական կոնցեպցիա, հնարավոր միջոցներով աջակցել Սփյուռքում Հայկական հարցի համար մղվող պայքարին, Հայկական հարցի գաղափարը անմար պահել ժողովրդի գիտակցության մեջ, ազգային քաղաքական կյանքում մշտապես պրոպագանդել այն, այլ ոչ թե պատերազմ հայտարարել Թուրքիային՝ կորցրած Հայրենիքը հենց այսօր ազատագրելու համար: Յուրաքանչյուր սերունդ, բացի մարտավարական խնդիրներից ունի նաեւ իր ռազմավարական պատմական պարտքը: ՀՀԵ-ն իր քաղաքականությամբ հայ ժողովրդին զրկում է ռազմավարական գլխավոր խնդրից՝ կորցրած պատմական Հայրենիքը ազատագրելու գաղափարից: Ելակետ ունենալով այդ նպատակը, ՀՀԵ-ն, ինչպես ասվում է նախագահի վերոհիշյալ ելույթում, պայքարում է ոչ թե Լեռնային Ղարաբաղի ազատագրման, այլ «հայապահպանման» համար:

Լ. Տեր-Պետրոսյանը իր վրա առաքելություն է վերցրել հայ ժողովրդին փրկել Հայկական հարցից, որը իր իսկ բառերով՝ պատրանք է, սնամեջ քաղաքական բաղձանք, սնապարծության թմրադեղ, հոխորտանք, ավանտյուրիզմ, որը թունավորել է ազգի հոգին:

Ուրեմն, ըստ ՀՀ նախագահի, հայ քաղաքական միտքը դարեր շարունակ պայքարելով Հայկական հարցի լուծման համար դրանով իսկ թունավորել է հայ ժողովրդի հոգին:

Լ. Տեր-Պետրոսյանը ճիշտ է մի հարցում. հայոց պատմության ներկա փուլում անհաշտ պայքար է ընթանում հայ քաղաքական մտքի երկու ուղղությունների միջև. որոնցից առաջինը ազգայինն է, երկրորդը՝ ապագայինը. Ռազմավարական առումով այդ պայքարի ելքից է կախված հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, նրա լինել-չլինելու հարցը:

9. Հայաստանի նորանկախ Հանրապետությունը մեծ քաղաքականության վկանոս է մտել անառաքաստ՝ չունենալով ոչ ազգային գաղափարախոսություն, ոչ Հայկական հարցի պետական կոնցեպցիա եւ ոչ էլ դրանցից բխող ազգային ծրագիր:

Դեռ ավելին, Հայաստանի Հանրապետության պաշտոնական մամուլը, ռազիոն, հեռուստատեսությունը եւ ընդհանրապես ՀՀԿԿ ամբողջ բարոգչական մեմբան ամենախաղաղ արշավանք է սկսել Հայկական հարցը վարկաբեկելու, այն բոլոր չարիքների պատճառ հռչակելու եւ ժողովրդի գիտակցությունից հանելու համար: Հայկական հարցի դեմ մամն բարոգչություն գոյություն ունի միայն Թուրքիայում եւ գոյություն է ունեցել Խորհրդային Հայաստանում նախապատերազմյան տարիներին:

Ինչո՞ւ է ՀՀ ղեկավարությունը նման քաղաքականություն վարում: Հարցն այն է, որ հզոր խորհրդային Միությունը Թուրքիայի հետ միջպետական կանոնավոր հարաբերություններ պահպանելու համար Թուրքերի պահանջով պարբերաբար հայտարարում էր, որ ՍՍՀՄ-ը Թուրքիայից հողային պահանջներ չունի:

Կասկած չկա, որ Հայաստանի Հանրապետությունը Թուրքիայի հետ միջպետական կանոնավոր հարաբերություններ հաստատելու համար նույնպես պետք է հայտարարի, որ այդ երկրից հողային պահանջներ չունի, այսինքն՝ պետք է հրաժարվի Հայկական հարցից: ՀՀ ղեկավարությունը հայ ժողովրդին հոգեբանորեն պատրաստում է այդ քայլի համար: Ի դեպ. Լ. Տեր-Պետրոսյանը իր՝ որպես ՀՀ նախագահի, կարծիքը հայոց պատմական Հայրենիքից հրաժարվելու մասին արդեն հայտնել է թուրքական «Ջումհուրիեթ» թերթի թղթակցին. որը հրապարակվել է նույն թերթի 1992 թ. մարտի 20-26-ի շաբաթական համարում: Թերթի թղթակցի այն հարցին. թե «Հայաստանի 1990 թ օգոստոսի հռչակագրում տեղ է գտել

«Արեւմտյան Հայաստան» արտահայտութիւնը: Ձեռք չի՝ թվում. որ դրանով պահանջատիրութիւնն ինքնին օրակարգ է մտնում», ՀՀ նախագահը պատասխանել է. «Հոգակազիրն ընդունվել է նախքան ԽՍՀՄ-ի կազմալուծումը. եւ Հայաստանը այն ժամանակ դեռ չէր անդամակցել ոչ ԵԱՀԽ-ին, ոչ էլ ՄԱԿ-ին: Ներկայումս մենք ճշգրտում ենք անկախութեան շրջանակները: Սակայն ԵԱՀԽ-ի սկզբունքներով, որոնք մենք հարգում ենք, այդ արտահայտութիւնն ինքնին օրակարգից դուրս է հանվում: Պարզորոշ ասեմ, որ մենք հավատարիմ ենք սահմանների անձեռնմխելիության սկզբունքներին ու մեկ այլ պետության որեւէ տարածքի վրա աչք չունենք: Հայաստանը հարեւաններից հողային պահանջ չունի, եւ դա վերաբերում է թե՛ Թուրքիային եւ թե՛ Վրաստանին ու Ադրբեյջանին»:

Պատասխանը միանշանակ է: Առանց հայ ժողովրդի կարծիքը հարցնելու Լ. Տեր-Պետրոսյանը հրաժարվում է հայոց պատմական Հայրենիքի սուրբ տարածքներից՝ հօգուտ Թուրքիայի, Ադրբեյջանի եւ Վրաստանի: Հայաստանի անկախ հանրապետության ներկա ղեկավարութիւնը Հայկական հարցում հետեւողականորեն շարունակում է խորհրդային կայսրութեան քաղաքականութիւնը:

Սակայն հայ ժողովուրդը նման քաղաքականութիւնն ընդունել չի կարող:

Դարեր շարունակ հայ ժողովուրդը հերոսաբար պայքարել է Հայկական հարցի լուծման համար: Հայ ժողովրդի պատմութեան առանցքը, հայ հասարակական-քաղաքական մտքի, հայ ազգային գաղափարախոսութեան առանցքը Հայկական հարցն է:

Հայոց պատմութիւնը, հայ հասարակական-քաղաքական միտքը, հայոց ազգային գաղափարախոսութիւնը մերժում են Հայկական հարցից հրաժարվելու գաղափարը:

Հայկական հարցի պատմության հատկապես վերջին երեք հարյուր տարվա ընթացքում հայ հասարակական-հաղափայական միտքը իր ավարտին հասցրեց հայ ազգային գաղափարախոսության մեւալորումը՝ մրան տալով կուռ ու ամբողջական տեսք:

Հայոց համագգային շարժում կազմակերպությունը իր մպատակները իրականացնելու համար պետք է հերքել հայ ազատագրական մտքի կողմից մշակված Հայաստանի ազատագրության ծրագիրը, հայոց ազգային գաղափարախոսությունը, պետք է մերժել հայ ժողովրդի պատմության գոնե վերջին երեք հարյուր տարվա պատմությունը:

Եվ մերժեց:

Հանրապետության նախագահը նախ եւ առաջ որոշեց իր հաշիվները մաքրել պատմագիտութեան հետ, որի տրամաբանական զարգացման հունում ոչ մի կերպ չէր տեղավորվում ՀՀԿ ազգային ծրագիրը: Եթե

պատմութիւնը չի ընդունում ՀՀԵԿ ազգային ծրագիրը, ապա ավելի վաղ պատմագիտութեան համար: Ուրեմն, պատմագիտութիւնը գոյութեան իրավունք չունի:

Հանրապետութեան նախագահը հայտարարում է.

«Մի մոռացե՛ք, որ ես պատմաբան եմ: Եվ այսօր, գործնական քաղաքականութեան մեջ Յ տարի ներգրավված լինելուց հետո, պատրաստ եմ վստահ հայտարարել. պատմութիւնը կեղծ գիտություն է: Ոչ մի պատմաբան ու չի հասկանա, մինչեւ ինքը չմասնակցի պատմութեան արարմանը»: Եվ այսպես, Լ. Տեր-Պետրոսյանը մի հարվածով «ոչնչացրեց» պատմագիտութիւնը:

Պատմագիտութեան հետ հաշիվները մաքրելուց հետո Պատմաբան-նախագահը ձեռնամուխ է լինում ազգային գաղափարախոսութեան ոչնչացմանը: Նա հայտարարում է.

«Կեղծ քաղաքական կատեգորիա է մտնում «ազգային գաղափարախոսություն» հասկացությունը, որովհետեւ ժողովրդավարության պայմաններում ամենայն ուղի ազգին համախմբել մեկ միասնական գաղափարախոսության շուրջ»: Զրավարվելով այս անհեթեթությանը, մա շարունակում է իր միտքը՝ ամելով հետեւյալ դարակազմիկ հայտնագործությունը, որ ժողովրդավարության պայմաններում ազգային գաղափարախոսությունը փաշիզմ է:

Հայ ժողովրդին զրկելով ազգային գաղափարախոսութիւն ունենալու իրավունքից՝ Պատմաբան-նախագահը մերժում է նաեւ ազգային համաձայնութեան գաղափարը, հայտարարելով.

«Հարցերի խորքը թափանցելու պարագայում ականհայտ է դառնում, որ իրականում ազգային համաձայնություն հասկացությունն ընդամենը կեղծ քաղաքական կատեգորիա է, որովհետեւ ազգի գոյութիւնն ինքնին ազգային համաձայնութեան իրողութիւնն է»:

Գիտնականը, որպես կանոն, որեւէ քաղաքական, ազգային հասկացութիւն համարելով կեղծ կատեգորիա երեք անհրաժեշտ չի համարի տալ նրա գիտական սահմանումը, քանզի կեղծ կատեգորիային գիտական սահմանում տալը արդեն հակագիտական է:

Սակայն Լ. Տեր-Պետրոսյանը, վերոհիշյալ հարցերի շուրջը չունենալով անհրաժեշտ գիտելիքներ, հիմնախնդիրները լուծելով գիտութեան հետ անհարիր ելակետերից, իր իսկ կողմից մերժված ազգային գաղափարախոսութեանը տալիս է գիտական սահմանում, որը ձեւակերպում է հետեւյալ կերպ. «Հայաստանը տեսնել որպես ամուր, ապահով, ինքնիշխան, ժողովրդավարական իրավական պետութիւն, քաղաքացիական հասարակութիւն, ծաղկող մշակութիւն եւ բարգաւաճող տնտեսութիւն»:

Այս ձեւակերպումը ազգային գաղափարախոսութեան հետ առնչութե-

յուն չունի Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր ազգային գաղափարախոսությունը, որի հիմքում ընկած է ամբողջական Հայրենիքի, անկախ պետականության եւ ժողովրդի գոյատեւման ու ազատ զարգացման գաղափարը:

Լ. Տեր-Պետրոսյանի ձեւակերպման մեջ բացակայում է ազգային գաղափարախոսության հիմնական չափանիշներից մեկը՝ ամբողջական Հայրենիքի գաղափարը: Առանց այդ գործոնի ազգային գաղափարախոսություն գոյություն չունի: Այդ ձեւակերպման հիմքում ընկած է 30 հազար քառակուսի կիլոմետրի գաղափարը, որը բազմիցս հրապարակայնորեն պաշտպանել են ՀՀԿ գործիչները:

Ի դեպ, նման տեսակետի հետ, որպես Հայկական հարցի լուծման ընդունելի տարբերակի, ժամանակին համաձայն են եղել եւ Թալեաթը, եւ Ստալինը, մի վերապահություն միայն, որ Թալեաթը եւ Պանթուրքիզմը չէին ցանկանում Հայաստանի Հանրապետության կազմում տեսնել նաեւ Զանգեզուրը:

Պետք է նկատի ունենալ, որ եւ ազգային գաղափարախոսությունից հրաժարվելը, եւ վերը նրան տված ձեւակերպումը տեսական հիմք են հանդիսանում հետագայում Հայկական հարցից ընդհանրապես հրաժարվելու համար:

Այսպիսով, ՀՀ Նախագահը, ելնելով քաղաքական նկատառումներից, կեղծ է համարում պատմագիտությունը, ինչպես նաեւ համալսարանային գիտության կողմից անվերապահորեն ճանաչում գտած «ազգային գաղափարախոսություն» եւ «ազգային համաձայնություն» գիտական կատեգորիաները:

Պատմագիտությունը մերժելուց, այն կեղծ գիտություն հայտարարելուց հետո, Պատմաբան-նախագահը անցնում է իր հիմնական խնդրին՝ հայոց պատմագիտության ոչնչացմանը: Եթե պատմագիտությունը կեղծ է, ապա, ուրեմն, կարելի է կեղծ համարել նաեւ հայոց ամբողջ պատմագրությունը:

Եվ Պատմաբան-նախագահը մի հարվածով ոչնչացնում է Հայ ժողովրդի վերջին երեք հարյուր տարվա պատմագիտությունը, հասարակական-քաղաքական, ազատագրական միտքը. ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը հայտարարում է սնանկ եւ պատճառը մեծագույն կորուստները:

Նա գրում է. «Ես կարծում եմ, որ վերջին տարիներին քաղաքական մտքի մեջ տեղի ունեցած ամենամեծ հեղափոխությունը հրաժարումն է օտարին ապավինելու, երրորդ պետության հովանավորության վրա հույս դնելու սնանկ գաղափարից: 300 տարի շարունակ հայ ժողովրդի քաղաքական միտքը թունավորվել է այն պատրամեով, որ մեծ տերությունները՝ երբեմն Արեւմտյան Եվրոպան,

իսկ որպես օրեմբ Ռուսաստանը, պետք է լինեն մեր ազգային խնդիրների իրա-
դրոժողը: Ահա այն գաղափարն է եղել, որին տուրք տալու համար մեմբ հաստցե-
կն մեծագույն կորուստներով: Այսօր է, որ հայ ժողովուրդը արթմանում է
միջ, երաժարվում այս միամիտ հավատից...»:

Այս հայտարարությամբ Լ. Տեր-Պետրոսյանը որդեգրում է թուրքական պե-
տական պատմագիտության Հայկական հարցի կոնցեպցիան, որի համաձայն
արեւմտահայերի բոլոր դժբախտությունների պատճառը եղել է մրանց ռուսա-
կան կողմնորոշումը: Այս տեսակետը տասնամյակներ շարունակ պրոպագանդում
են Պամբուրխիզմի բոլոր տեսարանները:

Ուրեմն, համաձայն Լ. Տեր-Պետրոսյանի, պետք է հրաժարվենք ընդ-
հանրապես արտաքին, մասնավորապես ռուսական կողմնորոշումից, հույ-
սը դնենք սեփական ուժերի վրա եւ «փնտրենք, «տեղեփենք մեր ազգի գոյութ-
յան մոտ, ավելի հուսալի երաշխիքներ: Ահա այս երաշխիքների շղթայի օղակնե-
րից մեկն է միայն Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների կարգավո-
րումը»:

Եթե մինչեւ իշխանության գլուխ գալը ՀՀԵԿ-ն իր բոլոր փաստաթղ-
թերում պաշտոնապես ընդունել է Լեւոնային Ղարաբաղը Հայաստանի
հետ վերամիավորման անհրաժեշտությունը՝ այն համարելով իր հիմնա-
կան խնդիրներից մեկը, ապա իշխանության գլուխ գալուց հետո՝ մերժե-
լով ավանդական ռուսական կողմնորոշումը, հանուն ավելի հուսալի
երաշխիքների շղթայի օղակներից մեկի՝ «Հայաստանի եւ Թուրքիայի հա-
րաբերությունների կարգավորման», դրժեց իր խոստումը՝ պաշտոնապես
ընդունելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի Արցախի հիմնահարցի
լուծման մասին կայացրած բոլոր որոշումները, որոնցում Ադրբեջանի
առաջնությունը ամբողջականութեան պահպանությունը համարվում է պարտադիր:

Սի այսպես, ռուսական կողմնորոշումը համարվեց «սնանկ», իսկ
Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը՝ «հուսալի երաշ-
խիք», եւ հանուն այդ հուսալի երաշխիքի զոհաբերվեց Լեւոնային Ղարա-
բաղը, որովհետեւ միայն այդ պայմանով է Թուրքիան համաձայնվում
վանոնավորել իր հարաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ:

Պրոֆեսիոնալների համար անկասկած է այն ճշմարտությունը, որ
Լեւոնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում անխուսափելիորեն դատապարտ-
ված է հայաթափման, այն էլ չափազանց կարճ ժամանակահատվածում՝
չայ ժողովուրդը այդ հարցում պատրանքներ չունի:

Ադրբեջանի կազմում դարաբաղահայությունը Ղարաբաղում անվտանգ
դրությունելու ոչ մի երաշխիք չունի եւ չի կարող ունենալ: Այդ է թելադ-
րում Հայ ժողովրդի պատմության, հայ-թուրքական հարաբերությունների
պատմության դարավոր փորձը:

Գիտելիքների պակասը մարդկանց, որպես կանոն, ավելի համարձակ, ինքնավստահ եւ ինքնահավան է դարձնում:

Երեք հարյուր տարվա պատմության վերանայումը քիչ համարելով, 1992 թ. օգոստոսի 25-ին հրապարակված հարցազրույցի մեջ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարում է «Հայոց պատմության մեր առաջին անգամ մենք որոշեցինք իրականությանը մայել իրատեսություն»: Այս հայտարարությամբ հայտ է ներկայացվում վերանայելու հայ ժողովրդի ամբողջ պատմությունը:

Տվյալ դեպքում պարտվողականությունը ժողովրդին էր մատուցվում որպես իրատեսություն:

ՀՀԾԿ լիզեր-նախագահը իր կազմակերպության իրատեսությունը բացատրում է հետևյալ կերպ.

«Մենք հրաժարվեցինք «օրինետացիայի» գաղափարից (որի վրա համարյա 300 տարի հիմնված էր Հայաստանի ողջ բաղադրական միտքը), քանզի սեփական պատմական փորձով տեսնում էինք նրա սխալականությունը: Դրա համար, իհարկե, մեզ հայեցում են՝ մինչև այժմ էլ դեռևս չհասկանալով, թե այդ ինչպես կարող ենք մենք առանց ռուս բռնու, առանց ամերիկացիների, առանց Եվրոպայի գոյատևել: Սակայն Հայաստանի գոյատևմամ անվտանգության ամենա հուսալի երաշխիքը ոչ թե նրա տնտեսական կամ ռազմական հզորությունն է, այլ բոլոր հարեւանների հետ նորմալ հարաբերություններ հաստատելը: Այս սկզբունքն էլ հենց ընկած է մեր արտաքին քաղաքական դոկտրինայի հիմքում»:

ՀՀԾԿ իրատեսական ծրագիրը կենսագործելու համար, շարունակում է նախագահը, «Թուրքիայի հետ անհրաժեշտ են նորմալ հարաբերություններ: Մենք հիշում ենք պատմական հակասությունները, սակայն, ելնելով երկրի իրական շահերից, հաղթահարելով վիրավորանքները, պետք է ձեւավորենք նորմալ միջպետական հարաբերություններ: Իհարկե, ընդդիմությունը մինչև այժմ էլ մեզ մեղադրում է ազգային դավաճանության մեջ, սակայն, ինձ թվում է, հոգեբանական արգելքները հաղթահարված են: Ես դա համարում եմ մեր շարժման ամենամեծ նվաճումը եւ ոչ միայն Հայաստանում, այլեւ սփյուռքում, ուր շատերն են պաշտպանում մեր իրատեսական դիրքորոշումը»:

Արեւմտահայության եղեռնը, թուրքերի կողմից դարեր շարունակ կենսագործված զանգվածային կոտորածների, բռնությունների, երկրի հայաթափման քաղաքականությունը նախագահը որակում է որպես «վիրավորանքներ» եւ կոչ է անում հաղթահարել դրանք: Դեռ ավելին, պարզվում է, որ հայ ժողովրդի պատմության ներկա փուլի ազատագրական շարժման «ամենամեծ նվաճումը» ոչ թե հայ անկախ պետականության վերականգնումն է եւ Լեռնային Ղարաբաղի անկախության ձեռքբերումը,

«Թուրքիայի նկատմամբ ունեցած հոգեբանական արգելքների հաղթանակը»

Բայց այդ «իրատեսական» ծրագրի հեղինակները խիստ մակերեսային, պիտանաական գիտելիքներ ունեին Թուրքիայի, Պանթուրքիզմի, Հայաստանի եւ հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մասին: Նրանք ցանկությունն ընդունում էին իրականության տեղ:

Թուրքիան չէր փոխվել, Պանթուրքիզմն էլ չէր մեռել: Պարզապես հորհրդային Միությունը իր հզոր պետական մեքենայով ճգմել էր Պանթուրքիզմը՝ ոչ մի հնարավորություն չթողնելով նրա ծավալման համար: Խորհրդային Միության փլուզումից հետո, օգտվելով Ռուսաստանում սիրող անկառավարելի պրոցեսների առկայությունից, ռուսական պետական մեքենայի թուլացումից, Թուրքիան եւ Պանթուրքիզմը լայն գործունեություն ծավալեցին ԽՍՀՄ թուրքալեզու ժողովուրդների տարածքում թուրքական ժողովուրդներին Թուրքիայի եւ Պանթուրքիզմի գաղափարների լուրջ համախմբելու համար:

Ժամանակները փոխվել էին, եւ Պանթուրքիզմը չէր մտածում Մեծ Թուրանի միասնական պետություն ստեղծելու մասին, այլ աստիճանաբար նկատում էր թուրքալեզու ժողովուրդների նոր պետական համակարգ կանգնելու կոչելու գաղափարը, պետություն, որը ավելի շուտ նման կլինի նկրամիությանը:

Պանթուրքիզմը նոր պայմաններում փոխում էր դիմակը, հրապարակ էր իջել Նեոպանթուրքիզմը:

Պրոֆեսիոնալներին էաջ հայտնի էր, որ պանթուրքիզմը հայ ժողովրդին ոչ մի գիշում չի ամելու: Թուրքիայի հետ մոտմալ միջպետական հարաբերություններ հաստատելու համար ամերիաժեշտ էր պետականորեն հրաժարվել Հայկական հարցից եւ Ղարաբաղը համձմել Ադրբեյջանին, որին հետեւելու էր Ջանգեզուրը:

Թուրքիայի ղեկավարների պաշտոնական հայտարարությունները, արցագրությունները շուտով հաստատեցին այդ իրողությունը: Այդ պահանջների իրականացմանը հասնելու համար Թուրքիան եւ Ադրբեյջանը անցան Հայաստանի չրջափակմանը եւ ընդհանրապես պաշարի ամենաանողոք միջոցների գործադրմանը:

Թուրքիան գործում էր պետական խողովակներով, իսկ Պանթուրքիզմը՝ ազգային: Հայաստանի դրությունը դարձավ խիստ վտանգավոր:

Թուրքիան գործնականորեն իր քարոզչութամբ արդեն հող էր ստեղծում, միջազգային հասարակական կարծիքն էր նախապատրաստում Հայաստան գործը մտցնելու համար, մի ծրագիր, որ նա մեծ հաջողությամբ տարիներ առաջ իրականացրել էր Գիպրոսում:

Հայաստանի Հանրապետության կարմատեւ պատմությունը ցույց տվեց, որ

Հայոց համագգային շարժում կազմակերպության գաղափարախոսությունը տեսական առումով անգրագետ է, հակապատմական, ոչ իրատեսական, գործնական առումով՝ ազգակործան:

Մերժելով հայոց ավանդական ազգային գաղափարախոսությունը, հրաժարվելով ռուսական կողմնորոշումից, պանթուրֆիզմը հայտարարելով մեռած, իսկ Թուրքիան մորացված՝ ՀՀԾԿ-ն դեռևս անպաշտպան եւ անօգնական Հայաստանը համոզում էր Պանթուրֆիզմի եւ Թուրքիայի ողորմածությանը, բթացնում հայ ժողովրդի ազգային իմֆնապաշտպանության բնագոյը, դարավոր թշմամու դեմ թողնում մեմ-մեմակ:

Ահա այդպիսի աղետալի իրավիճակի հասցրեց «Հայոց պատմության մեջ առաջին անգամ իրականությանը իրատեսորեն մայող» Հայաստանի դիլետանտական ղեկավարությունը:

Պահը ճակատագրական էր: Եվ Հայաստանի ներկա ղեկավարությունը իր կարճատեւ պատմության ընթացքում հարկադրված էր անելու միակ ճիշտ քայլը՝ դիմել Ռուսաստանի օգնությանը: «Ռուս քեռուն» հեզնողները, երրորդ ուժը բացառող գաղառական քաղաքագետները թուրքական սպառնալիքի տակ անմիջապես հրաժարվեցին իրենց հույսկած «իրատեսական» սնանկ քաղաքականությունից եւ անցան մի ուղու, որի սկիզբը դրել էին Հայոց մեծերը, եւ որով հայ ժողովուրդը ընթացել էր 300 տարի շարունակ:

Նման դեպքերում, երբ պետական քաղաքականությունը սնանկանում է, իրեն հարգող յուրաքանչյուր կառավարություն հրաժարական է տալիս: Եվ այդ հրաժարականը պետք է կատարվեր հանուն հայ ժողովրդի շահերի, որովհետեւ պարզ ու անփիճելի է այն իրողությունը, որ Ռուսաստանի կառավարությունը այսուհետեւ հավատ չի ընծայելու հայ ժողովրդի ավանդական քաղաքականությունը: Երժողներին, ռուսական կողմնորոշումից հրաժարվողներին:

Բայց ժողովրդավարական երկրներում գործող օրենքները Հայաստանում չգործեցին, Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը անգամ այդպիսի խայտառակ ձախողումից հետո հրաժարական չտվեց: Կուսակցական շահերը ազգայինից վեր դասվեցին:

Այսպիսով, Հայաստանի երկրորդ հանրապետությունը պետականորեն տեղ չկանգնեց Հայկական հարցին: Այդ նշանակում է, որ Հայկական հարցը ինչպես խորհրդային իշխանության տարիներին, այնպես էլ ներկա փուլում տեղ չի գտնելու պետական քաղաքականության օրակարգում:

Հայկական կյանքում որպես նեոբուլձեիզմ հանդես եկող ՀՀԾԿ-ի եւ նեոպանթուրֆիզմի ջանքերով Հայկական հարցը հայոց պատմության արդի փուլում նորից դատապարտվում է մոռացության:

Սակայն այդ հարցում վերջին եւ վճռական խոսքը պատկանում է այ ժողովրդին, որը դարեր շարունակ պայքարել է Հայկական հարցի բռնման համար եւ երբեք չի կարող ընդունել ազգային շահերի հետ մի առնչութիւն չունեցող ՀՀԾԿ հակաազգային քաղաքականութիւնը:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Պատմութիւնը ժողովրդի հիշողութիւնն է, կենսագրութիւնը, առանց որի նա վերածվում է մանկուտի:

Ժողովրդի պատմութիւնը երկար մի շղթա է, եւ ամեն մի սերունդ՝ այդ շղթայի մի օղակ: Այդ առումով էլ յուրաքանչյուր սերունդ իր պատմական խնդիրն ունի կատարելու: Ինչպես ձեռքբերումները, այնպես էլ չիրագործված խնդիրները ժառանգութիւն են մնում հաջորդ սերունդներին: Պատմութիւնը ամբողջական պրոցես է եւ ոչ թե առանձին դրվագների գումար: Առանց պատմական ժառանգականութեան ոչ մի ժողովուրդ չի կարող գոյութիւն ունենալ: Ժողովրդի բոլոր սերունդների դարավոր, մեկը մյուսի հետ սերտորեն կապակցված պայքարով է պահպանվում Հայրենիքը, անկախ պետականութիւնը եւ գոյապահպանման իրավունքը: Ամեն մի սերունդ իր ուսերի վրա պահելով հաջորդ սերունդին է փոխանցում ազգային արժեքներն ու չլռեցված խնդիրները:

Պատմութեան շղթան դադարում է գոյութիւն ունենալուց, երբ փլուզվում են նրա տարբեր օղակները: Ժողովուրդները կործանվում են, երբ առանձին սերունդներ չեն կատարում իրենց պատմական խնդիրը եւ հաջորդ սերունդին չեն փոխանցում նախորդներից ժառանգած պատմական բեռը:

Հայ ժողովրդի պատմութեան դժգոհին պահին է առաջացել Հայկական հարցը եւ այնուհետեւ մի սերնդից փոխանցվելով մյուսին որպէս պատմական սրբազան բեռ հանձնվել է մեր սերնդին:

Հայկական հարցը հայոց պատմական հայրենիքում անկախ պետականութեան վերականգնման եւ ժողովրդի գոյապահպանման ու զարգացման ապահովումն է: Այդ առումով Հայկական հարցը ազգային դադափարա-

խոսության առանցքն է, ազգային ոգին: Հայկական հարցից հրաժարումը նականագրական նշանակություն կունենա հայ ժողովրդի համար: Ազգային գաղափարախոսությունից զուրկ, անառագաստ ժողովուրդը դատապարտված է կործանման: Հայրենիքը ժողովրդինն է, եւ ոչ մի կուսակցություն կամ քաղաքական կազմակերպություն իրավունք չունի տնօրինելու նրա նականագիրը: Հայաստանի Հանրապետության խորհրդարանը պարտավոր է օրենք ընդունել այն բոլոր քաղաքացիներին եւ կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելու մասին, որոնք վարկաբեկում կամ հանդես են գալիս Հայկական հարցի եւ հայոց ցեղասպանության ճանաչման դեմ:

Հայկական հարցի լուծումը կարող է երկար պատմական ժամանակաշրջան պահանջել: Այն կախված է բազմաթիվ գործոնների առկայությունից:

Հայ ժողովրդի ներկա սերունդը պարտավոր է Հայկական հարցի լուծման համար գործադրել բոլոր ջանքերը, հաջողության չհասնելու դեպքում այդ պատմական բախտի բեռը պետք է փոխանցվի հաջորդ սերունդներին:

Հաղթում է այն ժողովուրդը, որը հավատում է ապագային:

ՅՈՒՑԱԿ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Ադոնց Նիկողայոս, Հայկական հարցի լուծման շուրջ, Երեւան, 1989:
2. Անտոնյան Արամ, Մեծ ոճիրը, Երեւան, 1990:
3. Ազատագրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820-1920), Երեւան, 1982:
4. Ահարոնյան Գեղսամ, Մեծ երազի ճամբուն վրա, Բեյրութ, 1984:
5. Անասյան Հ., 17-րդ դարի ազատագրական շարժումները Արեւմտյան Հայաստանում, Երեւան, 1961:
6. Արմենիեն Ինթենդեյշնլ Մեզրզին, մարտ, 1994:
7. «Բանքեր Հայաստանի արխիվների», համ. 2, 1989:
8. Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Երեւան, 1982:
9. Դալլաքյան Կ., Հայ Սիյուռքի պատմություն (Համառոտ ակնարկ), Երեւան:
10. «Դրոշակ», Հ.Յ.Դաշնակցության օրգան, 1890-1897:
11. Զարեվանդ, Միացյալ, Անկախ Թուրանիա, Աթենք, 1988:
12. Թորիկյան Շավարշ, Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, Բեյրութ, 1976:
13. Լազյան Գաբրիել, Հայաստան եւ Հայ Դատը, (փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու), Կահիրե, 1957:
14. ԼԵՕ, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915:
15. ԼԵՕ, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատոր Ա, Փարիզ, 1934:
16. ԼԵՕ, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատոր Բ, Փարիզ, 1935:
17. Լեւոն Վարդան, Թող թուրքը խոսի, Բեյրութ, 1975:

18. Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Բեյ-
րութ, 1970:

19. Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգա-
ցումը, 1968:

20. Խուրշուդյան Լ., Սովետական Ռուսաստանը եւ Հայկական հարցը, Երե-
վան, 1977:

21. Խուրշուդյան Լեւոնուր, Հայոց համազգային շարժում կազմակերպությունը
եւ Հայկական հարցը, «Խորհրդային Հայաստան», 19, 23 մայիսի, 1990:

22. Հանրաքվե, (փաստաւազմադրական ժողովածու), Երեւան, 1992:

23. «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 1990-1994:

24. Հայ ժողովրդի պատմություն, հատոր 4, Երեւան, 1972:

25. Հայ ժողովրդի պատմություն, հատոր 5, Երեւան, 1974:

26. Հայ ժողովրդի պատմություն, հատոր 6, Երեւան, 1981:

27. Հայ ժողովրդի պատմություն (հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրե-
րը), Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երեւան, 1972:

28. Հայ ժողովրդի պատմության հարցեր, գիտահնֆորմացիոն բյուլետեն,
Երեւան, 1992:

29. Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին
քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երեւան, 1972:

30. Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 6:

31. «Հայոց Համազգային շարժում», Ղարաբաղյան շարժման Հայաստանի
կոմիտե, (թուրքիկ-ծրագիր), 19.08.1988, Երեւան, անձնական արխիվ:

32. ՀԱՀԳԲ - Զեղափոխական շարժում, Հայաստանի ազատագրության հայ
գաղտնի բանակ, 1984:

33. ՀԱՀԳԲ - Զեղափոխական շարժում, Հայկական զինյալ գործունեության
տեղեկագիր (1985-1987), 1988:

34. «Հայք», Հայոց համազգային շարժման պաշտոնաթերթ, 1989-1994:

35. «Հնչակ», Հնչակյան կուսակցության օրգան, 1888-1896:

36. «ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», համ.22, Երեւան, 1988:

37. Հովհաննիսյան Աշոտ, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության,
գիրք առաջին, Երեւան, 1957:

38. Հովհաննիսյան Աշոտ, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմու-
թյան, գիրք երկրորդ, Երեւան, 1959:

39. Ղազարյան Վաչե, Արմենական կուսակցություն (ակնարկներ), Բեյրութ, 1985:

40. Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի 1989թ. հունիսի 24-ի
Հայտարարությունը՝ կարդացված ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանում:

41. Մամուրյան Մ., Ազգային պատրիարքարանի Հայաստանը, «Արեւելյան
Մամուլ», սեպտեմբեր, նոյեմբեր, 1881, Զմյուռնիա:

42. ՄԼԻ հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 191:
43. Մեվյան Զադե Րիֆաթ, Օսմանյան յեղափոխության մութ ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Բեյրութ, 1976:
44. Միացյալ եւ Անկախ Հայաստան. Պատմական քայլը, Կ. Պոլիս, 1919:
45. Յուշեր Արմենակ Եկարյանի, Բեյրութ, 1985:
46. Նյութեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, Բ հատոր:
47. Նժդեհ, Բանտային գրառումներ, Երեւան, 1993:
48. Շահան Նաթալի, Թուրքերը եւ մենք, Երեւան, 1992:
49. Որն է մեր ճանապարհը, հոդվածների ժողովածու, Երեւան, 1990:
50. Պատմություն սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության, 1887-1962, հատոր Ա, Բեյրութ, 1962:
51. Պարսամյան Վ., Հայ ժողովրդի պատմություն (1801-1917), հատ. 3, բուհական դասագիրք, Երեւան, 1967:
52. Պարսամյան Վ., Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչեւ Բեդլիհի կոնգրեսը, «Պատմագիտական աշխատություններ» (հոդվածների ժողովածու), Երեւան, 1985:
53. Ռաֆայվար Ազատական կուսակցություն. հիմնական ծրագրեր, կանոնագրեր եւ վավերագրեր, Բեյրութ, 1988:
54. Սիմոնյան Հրաչիկ, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երեւան, 1991:
55. Սարոյան Արամ, Գուրգեն Յանիկյանի դատավարության պատմականը, Երեւան, 1992:
56. Վարդանյան Հ., Արեւմտահայերի ազատագրության հարցը, Երեւան, 1987:
57. Տասնապետյան Հրաչ, Հայկական հարցը, Բեյրութ, 1977:
58. Տասնապետյան Հրաչ, Հ. Յ. Դաշնակցությունը իր կազմությունեն մինչեւ Ժ ընդհանուր ժողովը (1890-1924), Աթենք, 1988:
59. Փիրումյան Ռուբինա, Հայ Դատ, դասագիրք, II մաս, ԱՄՆ, 1994:
60. Армянский вопрос, Энциклопедия, Ереван, 1991.
61. Армяне и Армянский вопрос на страницах зарубежной печати, Научно-информационный бюллетен АН Арм. ССР, Серия 3, No 3, Ереван, 1982.
62. Армянский вопрос на страницах зарубежной печати, Научно-информационный бюллетен АН Арм. ССР, Серия 3, No 5, Ереван, 1982.
63. Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав - СССР, США и Великобритании (17 июля - 2 августа 1945г.), сборник документов, Москва, 1980.

64. Восточный вопрос во внешней политике России (Конец 18 - начало 20 в.), Москва, 1978.

65. Геноцид армян в Османской империи, Сборник документов и материалов, Ереван, 1982.

66. Западная пресса об антитурецкой деятельности армянских зарубежных организаций, Научно-информационный бюллетен АН АРМ. ССР, Серия 3, No 1, Ереван, 1982.

67. Обзор зарубежной печати, Научно-информационный бюллетен АН АРМ. ССР, Серия 3, No 5, Ереван, 1983.

68. Оганесян Эдуард, Век борьбы, т. т. 1, 2, Мюнхен-Москва, 1991.

69. Петросян Ю., Младотурецкое движение, Москва, 1971.

70. Саркисян Е., Политика османского правительства в Западной Армении, Ереван, 1972.

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

ԼԵՕ. Հայոց հարցի վավերագրերը:

«Հայոց հարցը նույնքան հին է, որքան ինքը հայ ազգը: Զրիստոսից վեց դար առաջ էր, որ հայ ազգը դուրս եկավ խավարի անհայտությունից պատմության լուսավոր ասպարեզ եւ հենց այդ առաջին քայլերի հետ նա անհայտության մութից լույս է բերում իր ազգային գոյությունը պահպանելու մեծ հոգսը: Իսկ Հայոց հարցը, ինչպես գիտեք ամենքդ, հայ ժողովրդի ազգային գոյության հարցն է: Այսպիսով՝ Հայոց հարցի պատմությունը հայ ազգի պատմությունն է, սկզբից մինչեւ մեր օրերը»:

ԼԵՕ. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը,
հատ. Ա:

«Զեյթունը, ինչպես տեսանք, (խոսքը 1882թ. ապստամբության մասին է - Լ.Խ.) առաջին անգամ եվրոպական մամուլի եւ դիվանագիտության մեջ ձեւակերպում է մի նոր երեւույթ օսմանյան Արեւելքում - Հայոց հարցը»:

ԱԴՈՆՑ ՆԻԿՈՂԱՅՈՍ. Հայկական հարցի լուծման շուրջ:

Ադոնցը գտնում էր, որ Հայկական հարցի ծագումը պետք է փնտրել «Անցյալ դարերի խավարի մեջ»: Նա Հայկական հարցի լուծում էր համարում՝ Արեւմտյան Հայաստանի 7 վիլայեթների, հայկական Կիլիկիայի եւ Արեւելյան Հայաստանի միավորումը մեկ միասնական պետության մեջ: Սերի պայմանագրի իրագործումը նա համարում էր «Հայկական հարցի կիսալուծումը»:

«Հայկական լեռնաշխարհը որոշակի ամբողջություն է, որը ոչ մի հակաճառություն չի ընդունում: Համաձայն Լինչի պատկերավոր խոսքի, այն մի լեռնային

տանիք է, որ իջնում է դեպի Սեւ ծովը հյուսիսում, դեպի Տիգրիսի երկու վտակների հովիտները հարավում եւ հատվում է Եփրատի ջրերով արեւմուտքում:

Այս սահմաններում Հայկական լեռնաշխարհը իրենից ներկայացնում է մի աշխարհագրական, պատմական ու տնտեսական, ինչպես նաեւ մի ընդհանուր էթնիկական ամբողջություն:

Այս լեռնաշխարհում հիմնված պետությունը չի կարող կայուն համարվել, եթե ամբողջապես չի վճարեցնում այդ լեռնային տանիքը՝ իր բնական թերություններով:

1920թ. հոկտեմբերի 20-ին Սեւրի պայմանագրից հետո Ադոնցը Հայկական հարցի լուծման, Հայաստանի տարածքի մասին գրել է. «Հայկական լեռնաշխարհը, մեր կողմից պաշտպանվող սահմաններով, գրավում է շուրջ 200 հազար քառակուսի կիլոմետր տարածք, ներառյալ ոչ միայն թուրքական, այլեւ ռուսական Հայաստանը»: Այս պարբերությունը հրատարակված տեքստում աղավաղված է: Մենք մեջբերումը կատարել ենք Ադոնցի աշխատության ձեռագիր օրինակից:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, բազմահատորյակ, հատոր 6:

«Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով միջազգային դիվանագիտության խաղացանկ էր մտցնում Արեւմտյան Հայաստանի բարենորոգումների, իսկ հետագայում ինքնավարության կամ անկախության խնդիրը՝ Հայկական հարց անուծով: Դառնալով Արեւելյան հարցի բաղկացուցիչ մասը, այն աշխարհի վերաբաժանմանը նախապարտասովոր գաղութատիրական երկրներին հնարավորություն էր ընձեռում ցանկացած ձեռով միջամտել Թուրքիայի ներքին գործերին:

Սակայն իր ներքին բովանդակությամբ Հայկական հարցն արեւմտահայության ու Արեւմտյան Հայաստանի ազատագրման հարցն էր»:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը), խմբագրությամբ Մ. Ներսիսյանի:

«Եթե Սան-Ստեֆանոյում Արեւմտյան Հայաստանի հարցը քննարկվում էր երկու պետությունների՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ, ապա Բեռլինում դարձավ եվրոպական վեց պետությունների՝ Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի, ինչպես եւ Թուրքիայի պաշտոնական բանակցությունների ու քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների առարկա. այն վերածվեց միջազգային հարցի: 1878թ. Սան-Ստեֆանոյում եւ Բեռլինում կայացած այդ դիվանագիտական հարաբերությունների եւ բանակցությունների ընթացքում էլ Արեւմտյան Հայաստանի ու նրա հայ բնակչության վիճակի բարելավման խնդիրը անվանվեց եւ այնուհետեւ շարունակվեց կոչվել Հայկական հարց՝ Հայաստանի նոր պատմության կարեւոր եւ ժողովրդի լայն խավերին հուզող խնդիրներից մեկը»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ. Հայկական հարցն ու իր լուծումը:

«Հայկական հարցը շատ է հին: Իր ամբողջությամբ նրան մեղանում քչերն են ժանոթ ու տեղյակ: Նա իր սկզբնական ջրջանում զուտ քաղաքական խնդիր էր

եւ հետամուտ էր ձեռք բերելու հայի կորցրած բաղաբական անկախությունը:

Բայց ժամանակի ընթացքում ջախջախվեց ինքը – հայ ժողովուրդը, ջախջախվեցին նրա ուժերն ու հույսերը ու իջեցելով, իջեցելով պարսկական ու տաճկական բռնակալության տակ՝ պահանջը հասավ մինիմումի: Եվ էսօր նա հանդես է գալիս արդեն լուրջ որպես բաղաբացիական ապատության խնդիր, որ իր պահանջը վերջ ի վերջո ձեւակերպում է էսպես. կյանքի, գոյքի, պատվի եւ կուլտուրական պարգագման ապահովություն... Հայկական հարցը վայրենի կոտորածների եւ կեղեքումների հարց է. հալածանքների ու գաղթականությունների հարց է, նա գերապանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է...

Արդ, ո՞րտեղ եւ ո՞ր օրից գոյություն ունի Հայկական հարցը իր ներկա բնավորությամբ:

Էն օրից, ինչ որ վտանգվել է հայ ժողովրդի կյանքը, գոյքը, պատիվն ու կուլտուրական պարգագումը:

ՊԱՐՍԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ. Հայ ժողովրդի պատմությունը, բուհական դասագիրք, հատոր 3:

«Հայկական հարցը առաջին անգամ իր արտահայտությունն է գտել 1878թ. փետրվարի 18-ին Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ Սան-Ստեֆանոյում կնքված հաշտության պայմանագրում: Ուստի ճիշտ չեն այն հեղինակները, որոնք Հայկական հարցի ծագումը կապում են հայ ժողովրդի ծագման կամ միջին դարերի հայ ապատագրական պայքարի հետ: Հայկական հարցը ծագել է միջապգային դիվանագիտության մեջ է մտել որպես օսմանյան Թուրքիայի լծի տակ գտնվող արեւմտահայերին վերաբերող հարց: Ոչ Սան-Ստեֆանոյի եւ ոչ էլ Բեռլինի պայմանագրերում խոսք չկա Ռուսաստանի կամ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայերի մասին»:

Նույն հեղինակը հետագայում հանդես գալով «Հայկական հարցի պարգագման պատմական ուղիները մինչեւ Բեռլինի կոնգրեսը» խորագրով հոդվածով, Հայկական հարցի ծագումը տանում է մինչեւ 17-18-րդ դարերը:

ԳԱԼՈՅԱՆ ԳԱԼՈՒՍ. Պատմության քառուղիներում:

Թուրքիայի եւ Պարսկաստանի «ութամյա պատերազմը ավարտվեց 1555թ. կնքված Ամասիայի պայմանագրով: Անդրկովկասը բաժանվեց, Արեւմտյան մասն անցավ թուրքերին, իսկ Ադրբեջանը, Արեւելյան Վրաստանը ու Արեւելյան Հայաստանը մնացին Պարսկաստանի կազմում:

Այդ ժամանակվանից ի վեր հայոց ապատագրական պայքարի նպատակն է եղել ոչ միայն վերականգնել պետականությունը, այլեւ միավորել երկրի արեւելյան ու արեւմտյան հատվածները: Այդ օրերից իսկ Հայկական հարցը դարձավ արեւմտյան խոշոր տերությունների դիվանագիտական մեքենայությունների առարկա»:

ԱԱՐՈՂՅԱՆ ԳԵՐՍԱՄ. Մեծ երապի ճամբուն վրայ:

«Առանց մանրամասնությանց մեջ մտնելու, պետք է նշել թե «Հայկական հար-

ընծանդ առաջ այն օրը՝ երբ կորսուեցուցինք մեր ազատությունը, մեր պետական անկախ կյանքը: Եվ այդ դժբախտությունը Հայաստանի հողամասին վրայ վերին անգամ պատահեցավ 1238 թուականին՝ երբ մոնկոլ հորդաները ջնջեցին Ջաթարյան իշխանությունը եւ հաստատեցին իրենց կործանիչ տիրապետությունը: Մեկ ու կես դար ետք, 1376 թուականին նման դժբախտություն արձանագրվեցավ Կիլիկիոյ մեջ, երբ մեմլուքները գրավեցին Սիսը եւ ջնջեցին հայկական անկախ թագավորությունը:

Այդ ջրջաններուն էր, ուրեմն, որ ծագեցավ մեր հարցը - Հայ ազատ պետականության վերականգնումը՝ հայոց հայրենիքի պատմական սահմաններուն մեջ»:

ՏԱՄՆԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉ. Հայկական հարցը:

«Թեեւ «Հայկական հարց» արտահայտությունը ԺԹ դարու երկրորդ կեսին միայն նորականացած է՝ Սան-Ստեֆանոյի դաշնագրով անոր ստացած դիվանագիտական ճանաչումին բերումով, բայց իրականության մեջ, գեթ հայության համար, խնդիրը առկա էր այն օրեն ի վեր՝ որ Հայաստան կը հյուծեր թուրանյան ժողովուրդ, ինչպէս լուծին տակ: Մեծ Հայաստանը՝ ԺԱ դարերու կեսերուն Բագրատունիներու աւագ-մեն ասդին, եւ Կիլիկիոյ հայկական թագավորությունը՝ 1376-էն սկսեալ, կրած էին, ինչպէս կսե ժան-Փիեռ Ալեմ, «թուրանական ցեղի բոլոր տեսակներուն դժնդակ փորձառությունը, - սելճուքներ, մոնկոլ հորդաներ, օսմանյան թուրքեր»:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԶՈՆ. Հայկական Սովետական Հանրագիտարան,

հատոր 6:

«Հայկական հարց, թուրքական լծից արեւմտահայության ազատագրման, հայ ժողովրդի ինքնորոշման ու սեփական պետականություն ստեղծելու համար մղված պայքարի անվանումը դիվանագիտության պատմության մեջ: Ասպարեզ է իջել եւ Արեւելյան հարցի բաղկացուցիչ մաս դարձել 19-րդ դարի 70-ական թթ., 1877-1878-ի ռուս-թուրքական պատերազմից հետո»:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ. Հայկական հարցը,

Հայկական Հարցի Հանրագիտարան:

«Հայկական հարցը հայ ժողովրդի բաղաբական պատմության պրոբլեմների համակարգ է, կապված իր պատմական տերիտորիայում անկախ պետականության վերականգնման ձգտումների հետ՝ ազգային կոնսոլիդացիայով եւ այդ նպատակների իրականացման ուղղված ազգային-ազատագրական պայքարով: Հայկական հարցի ծագումը կանխորոշված էր Հայաստանի ազգային պետականության կորուստով»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ հանրագիտարանի խմբագրականը:

«Արդի գիտությունը Հայկական հարցի տակ հասկանում է հայ ժողովրդի բաղաբական պատմության հիմնահարցերի համակարգ, առնչված իր պատմական Հայրենիքի տարածքում պետականության վերականգնման եւ ազգային համախմբման ձգտումների հետ»:

Ներածություն	3
Հայկական հարցի բովանդակությունը	6
Հայկական հարցի ծագումը	8
Հայկական հարցի զարգացման հիմնական փուլերը	9
Առաջին փուլ	
Հայկական հարցը ժողովրդական գիտակցության արտահայտություն ..	9
<i>(Հայկական հարցի ծագումից մինչև 17-րդ դարի կեսերը)</i>	
Երկրորդ փուլ	11
Հայկական հարցի մուսուլմանական և ռուսաստանյան	11
<i>(17-րդ դարի կեսերից մինչև Սամ-Ստեփանոս և Բեդլիմի կոնգրես)</i>	
Յրրորդ փուլ	16
Հայկական հարցի միջազգայնացումը	16
<i>(Սամ-Ստեփանոս - Հայաստանի առաջին հանրապետության անկումը)</i>	
1. 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի միջազգայնացումը	16
2. Հայկական հարցը և հայ ազգային կուսակցությունները.....	21
3. Հայկական հարցի լուծման թուրքական կոնցեսսիան:	
Յեղասպանությունը - Հայկական հարցի լուծման թուրքական եղանակ.....	31
4. Հայաստանի առաջին հանրապետությունը և Հայկական հարցը.....	43
Չորրորդ փուլ	51
Հայկական հարցը արդի շրջանում	51
<i>(1920 թվականից մինչև մեր օրերը)</i>	
1. Խորհրդային Հայաստանը և Հայկական հարցը	
Հայկական հարցի թաղումը.....	51
2. Սիյուտիսիայությունը և Հայկական հարցը.....	51
Հայկական հարցի վերածնունդը.....	58
3. Հայաստանի երկրորդ հանրապետությունը և Հայկական հարցը.....	70
Վերջապահ փուլներ	88
Ճանաչել օգտագործված աղբյուրների և գրականության	90
Հավելված. Հայկական հարցի ծագման և բովանդակության մասին ...94	
հայոց պատմագիտության մեջ գոյություն ունեցող տեսակետները	

Շարվածքը՝ Հ. Հովհաննիսյանի
Դ. Գալստյանի
Էջադրող՝ Ա. Մարտիրոսյան
Սրբագրիչ՝ ՕՖ. Միքայելյան

Հանձնված է արտադրության 5.06.95թ.: Թուղթ գրելու №1: Չափը 60 × 90
1/16: Հրատարակչական 5,5 մամուլ:Տպագրական 6,4: Տպագրությունը
փոքր «Օֆսեթ»:Պատվեր 79: Տպաքանակ 2700:

Երևանի պետական համալսարանի, օպերատիվ պոլիգրաֆիայի
ստորաբաժանում, Երևան, Ալ.Մանուկյան 1.

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԱՐՇԱԿԻ

**Երևանի պետական համալսարանի
հայոց պատմության ամբիոնի վարիչ,
Պատմաբանների հայկական ընկերության
նախագահ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ,
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր:**

Ծնվել է 1927 թվականին Հայաստանի Հանրապետության Գորիսի շրջանի Ծիծուհայր գյուղում: Ավար -- տել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում: 1977 թվականից ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչն է:

Զբաղվում է հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանների պատմության հիմնահարցերով:

Խորշուղյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են գտնվում Լեոնային Ղարաբաղի, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, Հայաստանի առաջին հանրապետության, Հայոց ազգային գաղափարախոսության, ազգային-ազատագրական պայքարի և հայ ազգային կուսակցությունների պատմության հիմնախնդիրները: Հրատարակության համար պատրաստ են «Հայաստանի բաժանումը 1920 թվականին» և «Հայոց ազգային գաղափարախոսությունը» խորագրով աշխատությունները, որոնցում հեղինակը նորովի է լուսաբանում քննարկվող պրոբլեմները: Այդ ուսումնասիրությունները հրատարակելու համար անհրաժեշտ է մեկենասների ֆինանսական օժանդակությունը:

Հեղինակի հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան 1, Երևանի պետական համալսարան, հայոց պատմության ամբիոն: FAX 7.885.2.151-087